

Ասս Արեգաստան

ԱՆԻԻ  
ԵՐԱԺԵՏԱԿԱՆ  
ՄՇԱԿՈՒՅԹԸԸ



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА  
ИНСТИТУТ ИСКУССТВ

АННА АРЕВШАТЯН

МУЗЫКАЛЬНАЯ КУЛЬТУРА АНИ

ЕРЕВАН  
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА  
2014

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA  
INSTITUTE OF ARTS

ANNA AREVSHATYAN

THE MUSICAL CULTURE OF ANI

YEREVAN  
“GITUTYUN” PUBLISHING HOUSE OF THE NAS RA  
2014

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՄՐՎԵՍԻ ԻՆՍԻՏՈՒՏ

## ԱՆԱ ՄՐԵՎԾԱՏՅԱ

# ԱՆԻԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՄԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2014

ՀՏԴ 78:941 (479.25)

ԳՄԴ 85.31+63.3(2Հ)

Ա 865

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝  
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս **Սեն Արևշատյան**

Ա 865 Արևշատյան Աննա

Անիի երաժշտական մշակույթը/Գիտական խմբագիր՝ Սեն Արևշատյան:- Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, 204 էջ:

Ուսումնասիրությունն առաջին անգամ առանձին գրքով ընտում է Բագրատունիների շրջանի Անիի թագավորության (IX-XIդդ.) երաժշտական մշակույթը, որը, ինչպես և այդ դարաշրջանի ճարտարապետությունը, որմաննկարչությունը, մանրանկարչությունը և կիրառական արվեստները, աչքի է ընկել գեղարվեստական բարձր մակարդակով, հոգևոր և աշխարհիկ երաժշտական ժանրերի ծաղկումով, երաժշտատեսական և գեղագիտական մտքի թոփշրով:

Գիրքը հասցեագրված է երաժշտագետներին, երաժշտական բուհերի ուսանողներին և բոլոր նրանց, ովքեր հետաքրքրվում են հայ արվեստի պատմությամբ, տեսությամբ և գեղագիտությամբ:

ՀՏԴ 78:941 (479.25)

ԳՄԴ 85.31+63.3(2Հ)

ISBN 978-5-8080-1114-4

© Արևշատյան Աննա, 2014

© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2014

Նվիրում եմ հորս՝  
Սեն Արևշատյանի  
անմոռաց հիշատակին

## ԱՌԱՋԱԲԱՆ

Անիի թագավորության Բազրատունյաց հարստության շրջանը (IX-XI դդ.) հայոց պատմության փայլուն, բայց և հակասական էջերից է: Աշխարհազրական-ռազմավարական տեսակետից շահեկան տարածքում հզոր պետություն ստեղծելով՝ Բազրատունիները կարողացան միավորել և ամրացնել հարևան երկրների նկրտումներին և մարտահրավերներին շուրջ երկու հարյուր տարի դիմակայող մի պետություն, որը հարևանների կողմից մշտապես դիտվում էր որպես ցանկալի պատառ: Բյուզանդական կայսրության և արաբական խալիֆաթի էքսպանսիային դիմագրավելով՝ 885 թվականին հոչակված Անիի թագավորությունը, այնուամենայնիվ, դառնալով բյուզանդացիների քաղաքականության զոհը, ի վերջո ընկալ 1045 թվականին: Զնայած այդ հանգամանքին՝ մտավոր, մշակութային կյանքը շարունակում էր իր ընթացքը: Եվ, իրոք, մոտավոր գրծունեության որ մի ոլորտ էլ քննելու լինենք, ամենուրեք տեսնում ենք Անիի թագավորության և նրան հաջորդած շրջանի բարձր մակարդակը և գրծուն դրսևորումները: Բնականաբար, որոշակի իմաստով այդ ժամանակաշրջանի քրիստոնեական աշխարհի շափանմուշներն էին Բյուզանդական կայսրության պայմաններում զարգացող պատմագիտությունը, աստվածաբանությունը, գրականությունը, ճարտարապետությունը, կերպարվեստը և հոգևոր մասնագիտացված երգարվեստը: Մեր խորին համոզմամբ, Բազրատունյաց պետության պատմական ողջ ընթացքը զարգացել է Բյուզանդիայի հետ «հակադիմություն-ձգողականություն» պարադիգմայի շրջանակներում պայմանավորելով նաև այդ երկու պետություն-

Ների միջն գոյություն ունեցող մրցակցության ոգին, թեև սահմաններն ու հնարավորությունները համարժեք չեն: Քաջ հայտնի է, թե հայկական ծագում ունեցող որբան նշանավոր մարդիկ են ապրել և գրքել Բյուզանդիայում, օժտվել Բյուզանդական կայսրության բարձրագույն տիտղոսներով, վարել պալատական, ուզմական և հոգևոր պատասխանատու պաշտոններ՝ միաժամանակ կամա թե ակամա կամուրջ ստեղծելով Հայաստանի և Բյուզանդիայի միջն քաղաքական, եկեղեցական, տնտեսական, մշակութային կապերի և փոխառնչությունների ասպարեզում: Տեղին է հիշատակել այստեղ հայկական ծագում ունեցող միքանի, մասնավորապես Սակեղոնյան դինաստիային պատկանող կայսրերին: Այս ամենը վկայում է IX-XI դդ. հայկական պետությունների և Բյուզանդիայի սերտ կապերի մասին, ինչը շատ հարցերում պայմանավորում էր Անիի քաղաքության քաղաքականությունը, այդ բվում նաև՝ մշակութային քաղաքականությունը<sup>1</sup>. “Роль Византии в формировании армянской средневековой культуры исключительно велика. Практически ни одна из областей этой культуры не осталась вне контактов с византийской. При этом, разумеется, следует учитывать сложный состав культуры Византии, в которой греческий компонент был преобладающим, но отнюдь не единственным”<sup>2</sup>:

Հայոց պետականության այդ ժամանակաշրջանը վաղուց է դարձել տարրեր մասնագիտություններ ունեցող ուսումնասիրողների սեղուն հետազոտության առարկա: Հետազոտությունների շարքում հատկապես աշքի են ընկնաւմ պատմաբանների<sup>3</sup>,

<sup>1</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Կայձան Ա.Պ. Արմանը և հայությունը մասնավորապես առաջարկություններ ունեցող ուսումնասիրողների սեղուն հետազոտության առարկա: Հետազոտությունների շարքում հատկապես աշքի են ընկնաւմ պատմաբանների<sup>3</sup>.

<sup>2</sup> Տե՛ս Յուզբաշյան Կ.Ի. Արմանական պատմություններ մասնավորապես առաջարկություններ ունեցող ուսումնասիրողների սեղուն հետազոտության առարկա: Հետազոտությունների շարքում հատկապես աշքի են ընկնաւմ պատմաբանների<sup>3</sup>.

<sup>3</sup> Հիշարժան են հատկապես Ն.Արքունից՝ *Etudes arméno-byzantines*, Lisbone, 1965, 2. Բարթիկյանի աշխատությունները, տե՛ս, օրինակ, Բարթիկյան Հ. Բյուզանդիան և հայ պետականությունը IX-XI դարերում, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Երևան, 2002, ինչպես նաև՝ Ա. Կաժեանի և Վ.Յուզ-

փիլիսոփաների<sup>4</sup>, ձեռագրագետների<sup>5</sup>, հնագետների<sup>6</sup> և ճարտարապետների<sup>7</sup> աշխատությունները: Հայաստանում և արտերկրում հրատարակվել են մի շարք գունազարդ պատկերագրեր, որոնք ներկայացնում են Անի մայրաքաղաքի պահպանված կոթողները եկեղեցիներ, պարիսպներ, քաղաքացիական ճարտարապետության հուշարձաններ և այլն:

Բազրատունյաց շրջանի Անիի թագավորության մեջ տիրող մտավոր կյանքի վերելքը դրսնորվեց նրա բոլոր ոլորտներում, հատկապես նրա մտավոր վերնախավի ամենացայտուն և առաջադեմ ներկայացուցիչներ Գրիգոր Մագիստրոս Պահլաւունու և Հովհաննես Սարկավագ Իմաստասերի գաղափարներում ու ստեղծագործական ժառանգության մեջ:

Դա մեծ հետաքրքրությունն էր և հելլենական փիլիսոփայության և առհասարակ անտիկ դպրության հանդեպ, որով ներթափանցված են Մագիստրոսի մեղեքը, և բնության որպես Աստծո ամենակատարյալ ստեղծագործության և ամեն ինչի բնօրրան և ուսուցիչ լինելու գաղափարը Հովհաննես Սարկավագի «Բան իմաստութեան» պոեմում և այլն:

Աշխարհականացման ոգին արտացոլվել է Անիի թագավորության շրջանի քաղաքային կյանքի վերելքի և աշխարհիկ արվեստի մեջ, մասնավորապես գրական աշխարհիկ նոր ժանրերի երևան գալով, ինչպիսիք են, օրինակ, առակը, նամականին, նաև գուսանական արվեստի մշակութային առօրյայում զբաղեցրած նկատելի տեղով, ինչի մասին մի շարք վկայություններ կան հենց Գրիգոր Մագիստրոսի մեղեքում: Բազրատունիների շրջանում հայ մտավորականները սկսեցին ծանոթանալ արարա-

<sup>4</sup>Տե՛ս Վալոյն Վ.Կ. Արմենական Ռենեսանս, Մ., 1963.

<sup>5</sup>Տե՛ս Մատեան գիտութեան եւ հաւատոյ, 2 հատորով, Նմանահանությունը տպագրության պատրաստեց և աշխատասիրեց Արտաշես Սաքեսպյանը, Երևան, 1995, 1997:

<sup>6</sup>Տե՛ս Մարտիրոսյան Վ. Անի քաղաքը, Երևան, 1934.

<sup>7</sup>Տե՛ս Հարությունյան Վ. Անի քաղաքը, Երևան, 1964:

լեզու բժշկագիտական գրականությանը, ինչը մեծ ազդեցություն ունեցավ հատկապես XII-XIII դդ. հայ բժշկապետների վրա<sup>8</sup>:

Անիում պատշաճ մակարդակի վրա է եղել նաև ձեռագրական գործը: Այդ շրջանից մեզ են հասել մի շարք ընտիր գրչագրեր, որոնցից հատկապես հիշատակելի են Սահտոցյան Մատենադարանի հավաքածուում պահպող Ավետարանները՝ 887 թ. ստեղծված Լազարյան Ավետարանը (ՍՍ, ձեռ. 6200), Սմբատ Ա-ի հիշատակումով ձեռագրի հիշատակարանում կամ 909 թ. Աշոտ սպարապետի պատվերով գրված Կարմիր Ավետարանը (ՍՍ, ձեռ. 6202), 989 թ. Էջմիածնի Ավետարանը, (ՍՍ, ձեռ. 2374), 1038 թ. Ավետարանը (ՍՍ, ձեռ. 6201), XI դ. կեսերին ստեղծված Մուղնու Ավետարանը (ՍՍ, ձեռ. 7736), որոնք հայտնի են իրենց հոյակապ մանրանկարներով: Ինչպես նշել է Լ.Ա. Դուրնավոն. «Если после всех последующих злоключений эпоха Багратидов оставила нам значительное количество высококудожественных памятников, можно себе представить, каким бурным, захватывающим творчеством ознаменовалась эта эпоха»<sup>9</sup>:

Վերջապես, 981 թվականով է թվագրվում Անիում ստեղծված առաջին թղթյա ձեռագիրը (ՍՍ, ձեռ. 2679)<sup>10</sup>, ինչը վկայում է Քաղրասունիների թագավորության բավական հավակնութենուսական-առևտրական և մշակութային քաղաքականության մասին<sup>11</sup>: Բնորոշ է, որ 981թ. Անիում հեղինակած առաջին թղթյա ձեռագիրը, որը աշխարհում հնագույններից է, ժողովածոյ տիպի, այսինքն գիտական, ջատագովական, մեկնողական, աստվածաբանական, փիլիսոփայական տարրեր գրվածքների հավաքածու մի մատյան է: Նրա հարուստ բովանդակությունն ընդգրկում է

<sup>8</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Օվանոսյան Լ. Ա. История медицины в Армении с древнейших времен до наших дней (в 5-и частях), часть 1-я, Ереван, 1946:

<sup>9</sup> См. Дурново Л.А. Предисловие к альбому "Армянская миниатюра", Ереван, 1967, с. 28.

<sup>10</sup> Այդ ձեռագրի ֆարսիմիլի կրատարակությունը տե՛ս Մատենան գիտութեան եւ հաւատոյ, 2 հատորով, նմանահանությունը տպագրության պատրաստեց և աշխատահիբեց Արևաշեն Մարտոսյանը, Երևան, 1995, 1997:

<sup>11</sup> Հայտնի է, որ թղթի արտադրության հայրենիքը Չինաստանն է, որտեղից կը բուղթը ներկրվել է Եվրոպա և Մերձավոր Արևելք:

անտիկ փիլիսոփաների և պատմագիրների, եկեղեցու հայրերի, վաղմիջնադարյան հայ մտածողներ Դավիթ Անհաղթի, Անանիա Շիրակացու, Ստեփանոս Սյունեցու և այլոց գործերը: Ինչպես նշել է Դավիթ քահանայի կազմած ժողովածուի նմանահանությունը (Փաքսիմիլե) տպագրության պատրաստած վաստակաշատ ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանը. «Հայ ժողովրդի ձեռագրական մշակույթի բազմահազար արժեքավոր հուշարձանների մեջ այն առանձնանում է իր արտակարգ կարևորությամբ և նշանակությամբ»<sup>12</sup>: Ինչպես ցույց է տվել ուսումնասիրությունը, Դավիթ քահանայի և նրա որդու՝ Ղուկասի ձեռքով կազմված մատյանն առաջին ձեռագիրն է բոլորգրով գրված, իսկ ամենակարևորը, որ սույն մատյանը «մեզ հասած առաջին աշխարհիկ բովանդակությամբ ձեռագիր ժողովածուն է, որն իր մեջ ամբարում է հսկայական քանակությամբ գիտական նյութեր, որոնցից շատերը միայն այդտեղ են պահպանվել»<sup>13</sup>: Այդ հանգամանքը պերճախոս վկայությունն է Անիի թագավորության ժամանակաշրջանի մտավոր պահանջների, և եթե ընդունենք, որ 981թ. թղթյա ձեռագիրն առաջին հերթին նախատեսված էր ուսումնական-կրթական նպատակների համար, ապա նաև այդ ժամանակվա վարդապետարանների մակարդակի մասին:

Հստ ֆիզիկաքիմիական հետազոտության արդյունքների՝ ձեռագրի բուլթը պատրաստված է տեղական ծագում ունեցող կտավիատի ծղոտից, ինչն ապացուցում է, որ բուլթը ոչ թե ներմուծվում էր Անի, թենիւ ձեռագրի պրակների մի մասի հետազոտությունը ցույց է տվել, որ այն պատրաստելիս օգտագործվել է նաև ներմուծված հումք, այլ գոյություն է ունեցել թղթի տեղական արտադրանքը<sup>14</sup>:

Ամենայն հականականությամբ, Անիում է ստեղծվել նաև IX-X դդ. թվագրվող թղթյա հնագույն երկաթագիր Մաշտոցը (ՄՄ,

<sup>12</sup>Տե՛ս Մատեան գիտութեան եւ հաւատոյ, էջ10:

<sup>13</sup>Նույն տեղում:

<sup>14</sup>Նույն տեղում, էջ 35-36:

ձեռ. 1001), որի հիշատակարանը, ցավոր, չի պահպանվել<sup>15</sup>:

Հարյուր տարուց ավելի գործող հետազոտական ուսումնասիրությունների դաշտում թերևս միակ բնագավառը երաժշտությունն է, որը դեռ չի արժանացել առանձին համակողմանի ուսումնասիրության մնալով մի տեսակ երկրորդական տեղում: Այնինչ հայ մատենագիրների երկերում պահպանված մի շարք տեղեկություններ (Ստեփանոս Ասողիկ Տարոնեցի, Սամվել Անեցի, Արիստակես Լաստիվեցի, Մատթեոս Ուրիհայեցի, Կիրակոս Գանձակեցի և ուրիշներ) պատմում են այն մասին, թե ինչ երաժշտություն է հնչել Անի մայրաքաղաքում: Հայտնի են նույնիսկ մի շարք նշանավոր երաժիշտների անուններ: Չնայած դրան, դեռ շատ հեռու ենք ամբողջական պատկերացում կազմելուց այն մասին, թե հայ ճարտարապետության պատմության մեջ այդքան նշանակալի դեր խաղացած քաղաքային ճարտարապետության մտահղացքը, որպիսին Անին է, արդյոք ունեցել է նմանատիպ բարձր երաժշտական մշակույթ, թե ոչ: Բնշանելով պիպուկ արտահայտվել է Բագրատունիների շրջանի հայկական պետություններին նվիրված իր գրքի առաջարանում Կ.Ն. Յուղբաշյանը. “отдельным аспектам эпохи Багратидов посвящена многочисленная литература, но, как это обычно бывает, на фоне достигнутых результатов особенно ощущимы имеющиеся лакуны”<sup>16</sup>:

Սույն մենագրությամբ փորձել ենք լրացնել այդ բացք հայ երաժշտության պատմության մեջ ցույց տալու համար, որ Անիում ծաղկել են ոչ միայն ճարտարապետությունը, որմնակարչությունը, մանրանկարն ու կիրառական արվեստները, այլև նույնքան բարձր մակարդակի վրա է գտնվել նաև երաժշտական մշակույթը՝ հոգևոր երգարվեստը և աշխարհիկ երաժշտությունը:

<sup>15</sup> Այդ ձեռագրի մասին մանրամասն տե՛ս Արևշատյան Ա. «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Երևան, 1991, էջ 30-34: Տե՛ս և առաջնային բնական բնագրի հրատարակությունը՝ Մաշտոց, առաջարանը, բնական բնագրի և ծանոթագրությունները Գ. Տեր-Վարդանյանի, Մայր Աքոռ Ս. Էջմիածին, 2011:

<sup>16</sup> Տե՛ս և Յօձաբան Կ.Н. Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., с.3.

թյունն իր վոկալ-գործիքային նվազածության հարուստ ավանդույթներով: Ժողովրդական և ժողովրդամասնագիտացված երաժշտությունը բուռն ծաղկում է ապրել Անիի թագավորության օրոք՝ կազմելով ժողովրդի, իշխանական պալատների և արքունիքի տոնախմբությունների և հանդեսների սիրված ու անբաժանելի մասը:

Ակտիվորեն զարգացել է երաժշտատեսական և գեղագիտական միտքը, որը, ի դեմս Գրիգոր Մագիստրոսի և Հովհաննես Սարկավագ Խմաստասերի, համարայլ ընթացել է Եվրոպայում թեածող մի շարք առաջադեմ զարաֆարների հետ, իսկ որոշ հարցերում նույնիսկ նախորդել է դրանց երևան զալուն:

Նույնը կարելի է հաստատել նաև հոգևոր մասնագիտացված երգարվեստի վերաբերյալ, որը, պահպանելով և զարգացնելով V-XIX դարերի հայ շարականերգության ձևավորված ավանդույթները և ազգային նկարագիրն ու ինքնատիպությունը, ներդաշնակորեն ներգրավել է եկեղեցական երաժշտության արևելաբրիսոնեական համընդհանուր առաջատար միտումների ծիրի մեջ՝ գրադեցնելով իր արժանի տեղը: Այսպիսով, պարզ է դառնում, որ Անիի երաժշտական մշակույթը վաղուց կարուտ է բազմակողմանի ուսումնասիրության, որի խնդիրն է նրա բոլոր բարկացուցիչ կողմերի լուսաբանումը: Մեր հետազոտության նպատակը հենց դա է եղել:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԱՆԻԲ ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ՆՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՇԱՐԱԿԱՆԱԳԻՐՆԵՐԸ

961 թվականին Բագրատունյաց թագավորության մայրաքաղաքը Կարսից տեղափոխվեց Անի, և այդ կարգավիճակում, հատկապես Հ դարի վերջին քառորդից սկսած, Անին որպես միջնադարյան թագավորանիստ և բարգավաճ մայրաքաղաք, դարձավ զիտության և արվեստների զարգացած կենտրոն: Այդ դերը Անին պահպանեց շուրջ երկու հարյուր տարի՝ անզամ Բագրատունյաց թագավորության անկումից հետո, ընդհուպ մինչև XV դարը:

Հայ միջնադարյան երաժշտական մշակույթի պատմության մեջ Անին հասուլ տեղ է գրավում: Ըստ պատմիչների հաղորդած տեղեկությունների, Անիում ծաղկել է ինչպես ժողովրդամասնագիտացված՝ գուսանական երաժշտությունը, այնպես էլ հոգևոր երգարվեստը: Անիի բարձրագույն տիպի դպրոցներում մեծ տեղ է հատկացվել երգ-երաժշտության դասավանդմանը, քննարկվել են երաժշտության տեսության և գեղագիտության հարցեր, աշխատանք է տարվել երաժշտածիսական մատյանների համարման և խմբագրման ուղղությամբ: Ժամանակի առաջադիմ գեղարվեստական ըմբոնումներին համապատասխան՝ Անիում կատարելագործվում էին պաշտոներգությունն ու ժամանակագործությունը, իսկ աշխարհականացման խորացող ոգու ցայտուն դրսերումների արգասիք էին այդ շրջանից ու միջավայրից սերող տաղային արվեստի նմուշները:

Արիստակես Լաստիվերցին այսպես է նկարագրում քաղաքամայր Անիի կյանքը. «Ուրախական երգոց եւ բանից միայն լինեին հանդէսք, որ եւ ձայնք փողոյն եւ ծնծղայն եւ ա'լ երգեցողական արուեստիցն զլսողացն անձինս լի առնեին ուրախական

բերկրանօք»<sup>17</sup>: Ասիին ուղղելով իր խոսքը՝ Ներսէս Շնորհալին բացականչում է. «Դստերք քո՝ պաճուճալի, յերգ եւ քնար միշտ ի խաղի»<sup>18</sup>: Իսկ Մատթեոս Ուտհայեցու թևափոր դարձած խոսքը՝ «Ճազար ու մէկ եկեղեցի ի պատարագի կայր ի յԱնի»<sup>19</sup>, վկայում է նաև այն մասին, որ Անիում գործել են բազմաթիվ կրոնական երաժիշտներ, որոնք պետք է մայրաքաղաքին վայել կատարողական բարձր մակարդակով վարեին այդ եկեղեցիներում տարվող պաշտոներգությունը:

Բնականաբար, երաժշտություն էր հնչում նաև զանազան պայլատական պաշտոնական արարողությունների, արքունի ընդունելությունների, հայոց բանակի շքերթների, գինվորական և մարզական մրցումների ու հանդեսների ժամանակ:

Մեծ շուրջով էին անցկացվում այդ շրջանում նաև թաղման արարողությունները: Բազմաթիվ նկարագրություններ են պահպանվել թագավորների, իշխանների և գորավարների մահվան կապակցությամբ կատարված արարողությունների վերաբերյալ: Հիշատակենք թեկուզ Գրիգոր Մագիստրոսի նամակներում նկարագրվող իր հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու մահվան կապակցությամբ տեղի ունեցած թաղման ծեսերն ու հանդեսները կամ նրա դժգոհությունը մահվան ծեսերում պահպանված հեթանոսական ծեսերի վերապրուկների կապակցությամբ և այլն:

Ուշագրավ են Շապուհ Բագրատունու և Անանուն Արծրունու աշխատություններում զետեղված՝ Գրիգոր Դերենին վերաբերող պատումները<sup>20</sup>: Նրա մահվան լուրը ստանալուց հետո կինը՝ իշխանութիւն Սովին, ողբարդ կարգադրություններ է անում ամուսնու վախճանը սգալր համար: Իր գրաւուրերին որոշակի կարգով դասավորելով, նա, եղերամոր դերը ստանձնելով, հանձ-

<sup>17</sup> Արիստակէս Լաստիերցայ Պատմութիւն, աշխ.՝ Կ.Ն. Յուզբաշյան, Երևան, 1963, էջ 59:

<sup>18</sup> Ողբ Եղիսիոյ, ասացեալ սրբոյն տեառն Ներսէսի Շնորհալոյ Հայոց կաթողիկոսի, Փարիզ, 1827, էջ 13:

<sup>19</sup> Մատթեոս Ուտհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ

147:

<sup>20</sup> Տէ՛ս Պատմութիւն Շափիոյ Բագրատունայ, ի լոյս ածին Գ. Տեր-Սկրտչեան և Մեսրոպ Եայսկոպոս, Էջմիածին, 1921, էջ 153:

նարարում է նրանց հերթականությամբ ողբալ հոր՝ Գրիգոր Դերենի մահը: Ծեսին մասնակցող հրեա պարողների մասին հիշատակությունը եզակի է հայ միջնադարյան պատմագրության մեջ: Արանց մասին ասվում է, թե Սոփիին հրամայեց երգել Խորայելի թագավորների ողբերգը՝ ուղեկցելով այն պարով. «Եւ ի բաց ընկեցեալ զպատուադիր քողն մարգարտահիւս զարդուց, զգեցեալ զսեաս ի զգեստից, զետնի ննելով, մոխիր ի վերայ ցանելով զիխոյն, և պատրաստեալ զիխոյ իւրում արկանելիս թխակերպս, և խաւար ձեռագործ յօդս ցնէ տաճարին, և առաջ կոչեալ զդատերս՝ սգոյ ողբոց յօրինե կարզ, կարգեալ և կացուցանն դասս դասս՝ պարաւրս երրայեցիս և զթագաւորացն Խորայելի նուազել տայ զողբս»<sup>21</sup>: Ի՞նչ է սա: Հնուց պահպանված մի տվորություն նա, դեռևս Տիգրան Մեծի օրոք Վասպուրական զավառ

<sup>21</sup> Թովմայի վարդապետի Արծրունայ Պատմութիւն Տանն Արծրունեաց, ի լոյս Էած Ք. Դ., Ս. Պետերբուրգ, 1887, էջ 267: Ի դեպ, այս հատվածը վերջին տարիների հրատարակություններում և աշխարհարար, և՝ ուսւերեն սիսալ է թարգմանվել: Մի դեպքում կարդում ենք. «...դեն զցեց իր պատվական մարգարտահյուս զարդարողը, հազար սև զգեստ և պատրաստեց թխակերպ ծածկոց իր զլիի համար: Առաջ կամէց սուզ ու ողբ անող կանանց, խմբեր կազմեց, դասդաս արեց, կարգավորեց և բոլոր տալով, երգեցրեց երրայեցիների և Խորայելի թագավորների ողբերը» (տե՛ս և Հարությունյան Հ. Երաժշտությունը V-XV դարերի հայ մատնեագրության մեջ, Երևան, 2010, էջ 139): Սյուս դեպքում ուսւերեն թարգմանությամբ կարդում ենք. «Отбросив в сторону свое расшитое жемчугом почетное покрывало, она облачилась в черные одеяния и приготовила темное покрывало, дабы покрыть им голову, и, вызвав вперед дочерей, установила порядок траурных плачей, расставила их по порядку в хороводе и велела им петь и играть / на музыкальных инструментах/ еврейские плачи о царях Израиля». (См. Товма Ариքуни и Аноним, История дома Ариքуни, пер. с древнеармянского, вступительная статья и комментарий М.О. Дарбиян-Меликян, Ереван, 2001, с. 283). Այնինչ շատ ճիշտ է հասկացել և փոխանցել սվյալ համվածի թաշզը իմաստը Կ.Ս. Մելիք-Օհանջանյանը թարգմանելով այն. «И, сбросив с себя покрывало, вышитое жемчугом, одела черное платье, и накинула на голову черное покрывало, и, выставив перед собой дочерей своих, установила порядок плача, и, расставив, как полагается, еврейских плисунов, приказала им петь плачевную песнь царей израильских, сопровождая танцем (ընդգույք մերն է - У.Ս.Ա.):» См. Абեգян М. История древнеармянской литературы, перевод с армянского К.А. Мелик-Оганджаняна и М.О. Дарбиян, Ереван, 1975, с. 259.

տեղափոխված մեծ թվով հրեաներից մնացած ավանդո՞ւյթ, թէ՝ սգո ծեսն առանձնահատուկ նշելու՝ իշխանութիւ Սովորի անձնական նախաձեռնությունը, ներկայումս դժվար է ասել:

Գրիգոր Դերենի մասին պատմվում է նաև, որ նա գեղեցիկ ձայն ուներ, քնար էր նվազում և իր հյուրերին հաճախ զվարձացնում էր երգ-երաժշտությամբ. «Դրէսն ետ զջնարն ի ձեռն և ուրախացրեր զնայ»<sup>22</sup>: Սիրում էր երգն ու նվազն այն աստիճան, որ «ամենայն աւոր, և բազում յերգեցիկը և գուսանք հնչեցուցանեն զձայնս իրեանց մինչև երեկոյն (...), և այսպէս սովորութիւն նորա»<sup>23</sup>: Պետք է ենթադրել, որ այդ շրջանի մի շարք իշխաններ պատշաճ երաժշտական կրթություն էին ստանում տակավին մանուկ հասակից և տիրապետում էին զանազան երաժշտական գործիքների: Այսինքն, աշխարհիկ երաժշտական կրթությունն ընդունված էր ժամանակի արքունիքում և իշխանական տոհմերի պալատներում, ինչպես Անիում, այնպէս էլ Վասպուրականում և այլուր:

Անիի Մշակութային մթնոլորտի կազմավորման վրա ներազդել են հայ միջնադարյան երաժշտարվեստին առնչվող այնպիսի գործիքներ, ինչպիսիք են Սարգս Ա Սևանեցի և Պետրոս Ա Գևտադարձ կաթողիկոսները, Գրիգոր Սագիստրոս Պահլավունին, Հովհաննես Սարկավագ Իմաստակերը, որոնք պատմության մեջ են մտել նաև որպես շարականագիրներ և տաղասացներ: Այդ շրջանում գործած այլ նշանավոր երաժիշտներից հայտնի են Սատթեռու Ռուհայեցու հիշատակած Խաչիկ վարդապետը, «որ էր երաժիշտ ի վերայ ձայնաւոր եղանակաց»<sup>24</sup>, Թեոդորոս կաթողիկոս Ալախոսիկը՝ «մեծ երաժիշտ եւ սին սրբոյ եկեղեցւոյ»<sup>25</sup>, Գրիգոր Սագիստրոսի նամակագիրներից Դանիել Երաժիշտը, որին

<sup>22</sup> Պատմութիւն Շապիոյ Բազրատունուոյ, էջ 42:

<sup>23</sup> Նոյն տեղում, էջ 44:

<sup>24</sup> Սատթեռու Ռուհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 244:

<sup>25</sup> Նոյն տեղում, էջ 139:

Սագիստրոսն անվանել է «նոր Որփեւս»<sup>26</sup>, Հակոբ վարդապետ Սանահնեցին և ուրիշներ:

Այս շրջանում են իրենց համբավը ձեռք բերում Սանահնի, Հաղպատի, Նարեկա և Տաթևի վանքերի վարդապետարանները, որտեղ երգ-երաժշտության դասավանդումը ավանդաբար զբաղեցնում էր իր արժանավոր տեղը: Օրինակ, Տաթևի վանքը, ինչպես հայորդում է Ստեփանոս Օրբելյանը, մասնավորապես 896 թվականի մասին. «...պայծառանայր քահանայական եւ կրօնատրական դասիք ի չափ 500 եղբարց. զի լի էր եւ ծովամտոյ փիլիսոփայիք երաժշտական երգոց. ճոխ էր եւ վարժարանն վարդապետական կրթութեամբ. նաեւ արհեստաւորք նկարչացն եւ գրողաց անհամեմատը»<sup>27</sup>: Բազրատունիների շրջանում է ծաղկել Նարեկա վանքը, որի մասին Ստեփանոս Աստղիկը հաղորդում է. «Հինեցաւ Նարեկ ի Ռշտունեաց գաւառին... բազմազարդ պաշտոնապայծառ երգեցողաւոք եւ գրական դիտողաւոք»<sup>28</sup>: Վանքի առաջնորդն էր Անանիա Նարեկացին, ում կերպարին և մատենագրական ժառանգությանն անդրադարնալիս Ն. Թահմիզյանը գրել է եետևյալը. «Մի քանի թեպետ կցկտուր, բայց հատկորոշ տվյալներ կան, որոնք վերաբերում են ինչպես առհասարակ նրա մատենագրական ժառանգությանը, նույնպես և երաժշտական վաստակի ուսումնասիրմանը կապված հարցերին: (...) Ուրվագծվում է երգիչ, երգահան, տեսաբան և մանկավարժ երաժշտապետի գրավիշ դիմանկարը, երաժշտապետ, որը հանդիսացել է Նարեկա վանքի առաջնորդը, նրա երաժշտական ավանդույթների կաղապարողը և դաստիարակել այնպիսի մի արվեստագետի, ինչպիսին է Գրիգոր Նարեկացին»<sup>29</sup>: Իսկ Ուխտանես եպիս-

<sup>26</sup> Գրիգոր Սագիստրոս, Թոքեր, բնագիրն յառաջաբանով եւ ծանրագրութիւններով ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ակերսանդրապօլ, 1910, էջ 124:

<sup>27</sup> Տէ՛ս Ստեփանոս Օրբելեան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 236:

<sup>28</sup> Տէ՛ս Ստեփանոս Աստղիկ, Պատմութիւն աիեզերական, Փարիզ, 1859, էջ 108:

<sup>29</sup> Տէ՛ս Թահմիզյան Ն. Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դարերում, Երևան, 1985, էջ 50-51: Տէ՛ս նաև՝ Թամրազյան Հ. Անանիա Նարեկացի, Երևան, 1980:

կոպոսը, դիմելով իր ուսուցիչ և մտերիմ բարեկամ Անանիա Նարեկացուն, այսպես է բնութագրում նրան. «...դու կենդանախարոյկեալ քոյին սուրբ և պարկեշտ վարուք (...) Արդ զայսովիկ գրեալս ի քեզ տեսանեմք կատարեալ, եւ աստվածային շնորհիւ պայծառացեալ, եւ ձրիւք Սուրբ Հոգուն առլցեալ զիտութեամբ, եւ հոգեւորական երգով գեղգեղմամբ»<sup>30</sup>: Գնահատականները, որոնք Ուխտանեար շոայլում է սիրելի ուսուցիչ հասցեին, վկայում են Անանիա Նարեկացու վայելած մեծ հեղինակության մասին: Պատմագիրը նրան անվանում է «հոգեւոր հեղինակ», «բանիբուն պուետիկոս», «հոչակատոր հուետոր», «քնար հոգույն»<sup>31</sup>: Այդ նույն շրջանում՝ X դարի վերջին քառորդում, Նարեկավանքում ճգնաւմ էր Անանիա Նարեկացու թերևս ամենահայտնի սանը՝ մեծն Գրիգոր Նարեկացին, կերտելով իր Ողբերգության մատյանը և սրանչելի տաղերն ու գանձերը:

Տեղին է այստեղ հիշատակել ձեռագրերում պահպանված ոմն Անանիա վարդապետի գրչին պատկանող «Յաղագս զիտութեան ձայնից» մեկնությունը, որը Ն. Թահմիզյանը ժամանակին վերագրել էր հայտնի ծիսագետ, Նարեկա վանքի վանահայր Անանիա Նարեկացուն<sup>32</sup>: Նայ միջնարարյան «ձայնից» մեկնությունների շարքում այդ մեկնությունն իր կայուն տեղն ունի: Մեր մատենագրության մեջ այդ անունով հայտնի են մի շարք Վարդապետներ, ուստի վերոնշյալ մեկնության վերագրումը Անանիա Նարեկացուն պետք է շատ ավելի լավ փաստարկվեր: Մեր ուսումնասիրությունը ցույց տվեց, որ «Յաղագս զիտության ձայնից» գրվածքի իրական հեղինակը ոչ թե Անանիա Նարեկացին է, այլ VII դարի նշանավոր մաթեմատիկոս, աստղագետ, աշխարհագրագետ և շարականագիր Անանիա Շիրակացին<sup>33</sup>:

<sup>30</sup> Տե՛ս Ուխտանես եպիսկոպոս, Պատմութիւն հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 9, 8:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 2-15:

<sup>32</sup> Տե՛ս Թահմիզյան Ն. Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, ԼՀԳ, 1971, էջ 56:

<sup>33</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս մեր մենագրությունը՝ Զայնեղանակների ուսումնքը միջնադարյան Հայաստանում, Երևան, 2013, էջ 81-86:

թերում գործող վարդապետարանների մասին, այսպես է բնութագրել Սանահինի դպրանցում տիրող մթնոլորտը. «...Զերիտասարդացն, որք ի վարժարանն, հոեսորական եւ երաժշտական զնոցայն զմտու ածեալ հանդէս եւ մրցումն եւ զգեղեցիկ մոլորթինս զմանկանցն սաղմուերգութիւնս քաղցրաձայնութեամբ վերառեցեալ»<sup>40</sup>:

Սակայն առկա էին նաև հակառակ միտումներ: Քաղաքային շվայտ ու ճոխ կյանքը, քազավորական և իշխանական պալատների խնօսույթները, որոնց անքակտելի մասը և զարդն էին կազմում գուսանների երգն ու նվազը, աշխարհիկ երաժշտությունը հասցնում էին մինչև վանքերի պարհսպները և քափանցում ներս: Դրանք ծնում էին այնպիսի երևույթներ, որոնք անընդունելի էին եկեղեցու համար և արժանանում էին հոգևորականության արդարացի պարսավանքներին: Այսպես, Անիին սպասող բազում չարիքների պատճառներից մեկը Հովհաննես Կողեոն վարդապետը տեսնում էր իշխանների և հոգևորականության բարոյական անկման մեջ: Նա բողոքում է ասելով. «Կրօնաւորք թողուն զանապատս (...) ատեն զկարգ կրանաւորթեան իւրեանց, սիրեն զցանկութիւն պեղծ կանանց, (...) փախչին ի ձայնէ սաղմուերգութեանցն Աստուծոյ եւ որոճալով որոճեն զդիւական երգս: (...) Եւ մոլորին յաշխարհ զիետ երգոց դիւականաց և ատեն զաղալքս Աստուծոյ և իշխանքն պեղծ ախտի յանդկնեալ մոլորին՝ միշտ և հանապազ ի զինարքունս մոլորեալ դեգերին վասն սիրոյ և չար ախտին (...)»<sup>41</sup>: Գրեթե նոյնը կրկնում է Մատթեոս Ուտիայեցին՝ հիշատակելով նաև տվյալ շրջանում ժամակարգության երգեցողության աղավաղման փաստը. «Կրօնաւորք թողուն զանապատս և մենաստանս և յաշ-

նաև Մուրայյան Գ. Գրիգոր Մագիստրոսի մատենագրությունը. Գրիգորի Մագիստրոսի Թուղթը և չափաբերականը, «Մատենագիրը հայոց», հ. ԺԶ, ԺԱ դար, Երևան, 2012, էջ 85-138, 191-412: Տերառում՝ նամակների համարակալումը տրված է բառ Վ. Կոստանյանի:

<sup>40</sup>Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի Թուղթը, էջ 136-137:

<sup>41</sup>Марр Н.Я. Сказание о католикосе Петре и ученике Иоанне Козерне, Спб., 1895, с. 21, 24.

խարիի գբաղմունս դեզերին և շրջին ընդ փողոց և ի մեջ կանանց, ատեն զաղօթս և թողուն զկարգս կրօնաւրութեան իրեանց, սիրեն զվարս աշխարիի և զհետ երթան զովեստից մարդկան, որոճալով որոճեն զյիւական երգս և փքացեալ ի վերայ ընկերացն ասելով թէ՝ Ես կցորդ և մեղեդի գիտեմ և դու ոչ և այսու պատճառաւ պղտորեն զկարգ ժամատեղեացն<sup>42</sup>: Հավանաբար, հենց դա է եղել պատճառը, որ մի փորք ավելի ուշ Հովհաննես Սարկավազը, մտահոգվելով ժամակարգության և սաղմուերգության խաթարված վիճակով, ձեռնարկում է այն շտկելու գործընթացը:

Ըստ Մատթեոս Ուտհայեցու՝ Աշոտ Բագրատունու մահից հետո հայոց գորքը բարոյացրվում է, տրվում խնջույքների՝ գուսանների ուղեկցությամբ. «...ատեցին զարուեատ պատերազմի (...) սիրեցին զբարբուտ և զերզս գուսանաց»<sup>43</sup>: Մյուս կողմից, Գրիգոր Մագիստրոսի վկայությամբ՝ «ամենայն մրմունքը եւ երգը գուսանութեան այժմ ի հայումս առաել քան ի յունականին գուանեմք»<sup>44</sup>: Այս բոլորը վկայում են զարգացած աշխարհիկ վոկալ և նվազարանային երաժշտության մասին, որը բարենպատ հասարակական մբնուրտում ճյուղավորվել և բազմացել է:

Փորձենք ուրվագծել Անիում գործած և նրա հետ կապված շարականազիրների տեղն ու վաստակը հայ հոգևոր երգաստեղծության ասպարեզում:

Մինչև այդ հելինակների ստեղծագործությանն անդրադառնալը տեղին է հիշել, որ 1875 թ. Գևորգ Դ կաթողիկոսի հրամանով և անմիջական մասնակցությամբ Վաղարշապատում լրոյս է տեսնում Զայնազրեալ Շարակնոցը, որի կայացմանը նախորդել էր մի քանի ձայնազրագետների և շարականագետների աշխատատար գործունեությունը: Դրանց թվում էին նախն-

<sup>42</sup> Մատթեոս Ուտհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 53:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 79:

<sup>44</sup> Գրիգոր Մագիստրոս, Մեկնութիւն քերականի, տէ՛ Ածոնց Հ. Դիոնիսի Փրակիական և արմանական տոլկօտելու, Պետրոգրադ, 1915, ս. 232.

առաջ Կոստանդնուպոլիսից հրավիրված հայտնի ձայնագրագետ Նիկողոս Թաշճյանը, որին գործուն օգնություն է ցուցաբերել Մակար Եկմայյանը՝ Սք. Էջմիածնի այդ տարիների դպրապետն ու խմբավարը: Շարականների ձայնագրման աշխատանքներին իբրև ինֆորմանտներ մասնակցել են ավանդույթի բանիմաց կրողներ՝ առաջին հերթին հենց ինքը՝ Գևորգ Դ կաթողիկոսը, այնուհետև Սահակ վրդ. Ամառունին, Վահրամ վրդ. Մանկունին և ուրիշներ: Այսինքն, Ձայնագրեալ Շարականի լույսընծայումը այն ժամանակվա չափանիշներով հայ իրականության մեջ երաժշտածիսական մատյանի մի աննախադեպ գիտական հրատարակություն է եղել, որն իրագործվել է այսպես կոչված հայկական նոր նոտագրությամբ, ինչը հսկայական դերակատարում է ունեցել հայ ավանդական երաժշտության՝ թե հոգեոր և թե ժողովրդական ժառանգության պահպանման և վավերացման գործում: Ահա այդ մատյանի վերջում զետեղված է մի ցանկ, որն, ըստ ամենայնի, քաղված է միջնադարյան աղբյուրներից: Այն վերնագրված է. «Ժամանակագրութիւնք սրբոց Վարդապետաց՝ հեղինակաց Շարականաց»: Ցուցակում բերված տվյալները թեև աներկրա չեն, սակայն արժանի են ուշադրության: Ստորև մեջբերում ենք այդ ցանկն ամբողջությամբ.

«Ժամանակագրութիւնք սրբոց Վարդապետաց՝ հեղինակաց Շարականաց»:

Սուրբն Խսահակ - 426

Սուրբն Մեսրով - 426

Սուրբն Սովուկ Խորենացի - 441

Ստեփաննոս Սիւնեցի Ա. - 441

Սուրբն Յովհան Մանդակունի - 480

Տէր Կոմիտաս - 618

Անանիա Շիրակացի - 661

Սուրբն Խսահակ Զորափորեցի - 703

Սուրբն Յոհան Օձնեցի - 720

Ստեփաննոս Սիւնեցի Բ. - 728

Տէր Պետրոս Գետադարձ - 1019

Գրիգոր Մագիստրոս - 1044

Յովհաննէս Սարկաւագ Իմաստասէր - 1117  
 Գրիգոր Վկայասէր եղբայր Շնորհալոյ - 1113  
 Սուլբին Ներսէս Շնորհալի - 1166  
 Ներսէս Լամբրօնացի - 1181  
 Գրիգոր Սկեռուացի - 1204  
 Խաչատուր վրդ. Տարօնացի - 1205  
 Վարդան վրդ. Մեծն - 1251  
 Յակոբ Կլայեցի - 1268  
 Յովհաննէս Վարդապէտ Պլուզ - 1288  
 Կիրակոս Վարդապէտ Երգնկացի - 1478»<sup>45</sup>:

Ենթադրելի է, որ վերոնշյալ ցանկում գետեղված են շարականագիրների կողմից հեղինակված ամենահայտնի երգասացությունները, ինչպես, օրինակ, Կոմիտաս Աղցեցու դեպքում՝ 618 թվականը, որպես «Անձինք նուիրեալը»-ի ստեղծման տարեթիվ, Խաչատուր Տարոննեցու՝ Պատարագի նախերգանք հանդիսացող քահանայի զգեստավորման «Խորհուրդ խորին» «ծանր» տաղաւոհի շարականք կամ Վարդան Արևելցու Թարգմանչաց կանոնի «Որք զարդարեցին» շարականը: Այսինքն, տվյալ ցանկում նշված են այն երգասացությունների ստեղծման տարեթվերը, որոնք չափանմուշային նշանակություն են ձեռք բերել ազգային շարականերգության հազարամյա՝ դասական շրջանի (V-XVդդ.) ընթացքում:

Եթե դիտարկենք Անիի թագավորության շրջանի շարականագիրներին վերաբերող հատվածը, ապա կարելի է եզրակացնել, որ այստեղ նշված են Պետրոս Գետադարձի «Արիացեալը առ հակառակն» Վարդանանց կանոնի «մանկունք»-ի ստեղծման տարեթիվը (1019), Գրիգոր Մագիստրոսի «Չորս ըստ պատկերի Քում» Խաչի վերացման Ե օրվա «ողորմեա» շարականի (1044) և Հովհաննես Սարկավագ Իմաստասէրի Նունյանց կանոնի «Պայծառացան այսօր» «ճաջու»-ի կամ Հոխիսիմյանց կանոնի «Անսկիզբն բանն Աստուած» «մանկունք»-ի (1117) ստեղծման կամ կանոնակարգման տարեթվերը:

<sup>45</sup>Տե՛ս Շարական, եջ 1090:

Առկա են նաև պատմական ավանդույթից, այսինքն՝ որոշ պատմիչների հաղորդած թյուր, բայց արմատավորված տվյալներից բխող տակավին քննելի տեղեկություններ, ինչպես, օրինակ, համանուն երկու երաժիշտներ Ստեփանոս Սյունեցի Ա և Բ-ին վերաբերող ցուցումները, որոնցից առաջինն ակնհայտորեն պայմանական է (441), իսկ երկրորդի տակ պետք է հասկանալ Ստեփանոս Սյունեցու ամենանշանակալի ստեղծագործական նախաձեռնության՝ Հարության Ավագ օրինությունների հեղինակման տարերիվը (728)<sup>46</sup>: Այս կապակցությամբ տարիներ առաջ առիթ ունեցել ենք հայտնելու մեր կարծիքը երկու համանուն երաժիշտների գոյության հարցի շուրջ ենթադրելով, որ ամենայն հավանականությամբ Ստեփանոս Սյունեցի Ա և Բ շարականագիրների անունների տակ առաջինի դեպքում պետք է հասկանալ 735թ. նահատակված և Ավագ օրինությունների հեղինակ Ստեփանոս Սյունեցուն, իսկ երկրորդի անվան տակ՝ Ստեփանոս Ապարանեցուն «Արքութիւն սրբոց» ծավալուն և անվանական ակրոստիքոսով զրված շարականի հեղինակին<sup>47</sup>:

Կան նաև պարզապես սպրդած սխալներ, ինչպես, օրինակ, հայ շարականերգության դասական շրջանն ամփոփող՝ «Արեւելք գերարփի» այբենական ծայրակապով զրված շարականի հեղինակ Կիրակոս Վարդապետ Երզնկացուն վերաբերող նշումը, որտեղ Կիրակոս Վարդապետի անվան դիմաց նշված է 1478 թվականը, այնինչ հայտնի է, որ Կիրակոս Երզնկացին վախճանվել է 1355 կամ 1356 թթ.: Ուստի այդ տարեթիվը պետք է սրբագրվի որպես 1278 թվական: Եթե հավատանք այդ տարեթիվին, ապա ստացվում է, որ Կիրակոս Երզնկացին մահացել է բավական առաջացած տարիքում, իսկ «Արեւելք գերարփի» շարականը գրել է տակավին երիտասարդ հասակում: Այդ փաստը հաստա-

<sup>46</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս մեր հոդվածները՝ Ստեփանոս Սյունեցի. իրական անձը և վաստակը (Սյունեցի երկու համանուն երաժիշտների գոյության հարցի շուրջ), «Հայ արվեստի հարցեր», զիտական հոդվածների ժողովածու, 2, 2005, էջ 23-34, Arevshatyan A. L identité de Stépanos Syunec i, REArm, 30, Paris, 2005-2007, pp. 401-410.

<sup>47</sup> Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս վերոնշյալ մեր հոդվածներում:

տում է, որ ինչպես վկայում է Գրիգոր Տաթևացին իր «Գիրք հարցմանց»-ում, XIIIդ. վերջին քառորդում Շարակնոցի տոնացուցային երգացանկը, իրոք, սահմանափակվել է, և նոր զրված շարականներն այլևս համարվելով խոտելի, չեն մուտքագրվել Շարակնոցի մեջ: Չատ հավանական է, որ Զայնազրեալ Շարականի այդ ժամանակագրական ցանկը հիմնված է հենց եկեղեցական-ծիսական հարցերի ոլորտի մեծ հեղինակության Գրիգոր Տաթևացու շարականագիրների ցուցակի տվյալների վրա:

\* \* \*

Բագրատունյաց շրջանի թերևս առավել նշանավոր և բեղուն հեղինակը Պետրոս Գետաղարձ կաթողիկոսն էր, որն իր ժամանակի ամենակրթված և գիտուն մարդկանցից էր: Ինչպես ենթադրում է Կ. Կոստանյանցը. «Ուշ Պետրոս ուսաւ եւ զարգացաւ Արգինայի կաթողիկոսարանում՝ իր եղբօր հսկողութեան ներքոյ»<sup>48</sup>: Պետրոս Գետաղարձի մտավոր նկարազրի և գիտապաշարի մասին կարելի է պատկերացում կազմել Գրիգոր Մագիստրոս Պահլավունու Թղթերից, որոնցից մեկում ս.Եփրեմի գրքերից մեկը նրան ուղարկելու կապակցությամբ Մագիստրոսը գրում է. «բողից զայսոսիկ նախադրութիւն մակազրել մեծագունիդ զիստ, որ ամենայնի եւ բաւական եւ զանսպառն հեղուս գիտութիւն եւ շնորհ»<sup>49</sup>: Այլ տեղում Մագիստրոսն անվանում է նրան «գերակատարդ իմաստից», «ակն տունչեան»: Ուրիշ տեղում տեղ Պետրոսի մսիթարական նամակներից մեկն անվանում է «պուետական առասութիւն» և այլն<sup>50</sup>: Գրիգոր Մագիստրոսն ակտիվորեն թղթակցել է Պետրոս Գետաղարձի հետ հաճախ կիսելով նրա հետ իր մտքերը «գիտութեան և արուեստի ամեն տեսակ ինտիրների մասին, շատ անզամ նորանից ուսանել ցանկանալով և միշտ իր տեսութիւնները նորան հաղորդելով, որոնցից երեւում է, - ինչպես ճիշտ եզրակացրել է Կ. Կոստանյանցը, -

<sup>48</sup>Տե՛ս Կոստանեանց Կ. Տեղ Պետրոս Ա Գետաղարձ, Վաղարշապատ, 1897, էջ 6:

<sup>49</sup>Նույն տեղում, էջ 6:

<sup>50</sup>Նույն տեղում, էջ 6-7:

որ ինչպէս Գրիգոր Մագիստրոս նմանապէս նորա թղթակիցը տէր Պետրոս քաջ ծանոթ են ոչ միայն հայոց, այլև յոյն, ասորի, արաբական հին և նոր գրականութեանն, աւանդութիւններին եւ ուսմունքներին»<sup>51</sup>: XIդ. այդ խոշոր Եկեղեցական-քաղաքական գործի հակասական կերպարը, նրա բյուզանդասիրության տիրահոչակ պտուղներն անգամ չնսեմացրին ազգային շարականերգության մեջ թողած նրա հետքը:

Ըստ մեզ հասած տվյալների՝ պաշտոներգության երաժշտական կողմը մշտապէս եղել է Պետրոս Գետադարձի ուշադրության կենտրոնում: Դրան է նպաստել, հավանաբար, նրա քաջատեյյակությունը բյուզանդական Եկեղեցու և արքունիքի արարողակարգին և պաշտոներգությանը: Նա հայտնի է եղել որպէս հմուտ պատարագիչ: Դրա մասին է վկայում պատմիչների արձանագրած այն հսկայական տպավորությունը, որը թողել է ժամանակակիցների վրա 1022թ. հունվարի 6-ի Վասիլ կայսեր ներկայությամբ նրա կատարած Զօրինների արարողությունը<sup>52</sup>, որից հետո Վասիլ կայսրը ծածուկ երկրորդ անգամ է մկրտվել հայ առաքելական Եկեղեցու կարգի համաձայն: Մեր կարծիքով, այն հանգամանքը, որ նշված հանդեսն այդքան առասպելների տեղիք է տվել հետազյում, պայմանավորված էր նաև պատարագչի արժանիքներով և ծեսի երաժշտական ազդեցիկ ձևավորմամբ<sup>53</sup>:

Պետրոս Գետադարձի կերպարին և գործունեությանն են անդրադարձել հայ միջնադարյան մի շարք պատմիչներ և մատենագիրներ: Ահա թե ինչ է զրել, օրինակ, Հովհաննես Սեբատացին (XVIII-XIXդդ.) իր «Պատմութիւն Սեբաստիոյ» աշխատության մեջ: Հաջորդիկ մեջքերվող հատվածում, որը պատմում է այդ հիշարժան արարողության մասին, արտացոլված է նաև

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 7:

<sup>52</sup> Մատթեոս Ուտիայեցի, նշան. աշխ., էջ 50: Արիստակիս Լաստիւեցոյ Պատմութիւն, էջ 31-32, տե՛ս և նաև Կոստանեանց Կ. Տէր Պետրոս Ա Գետադարձ, էջ 12:

<sup>53</sup> Զօրինների ծեսի երաժշտական քաղաքիցի մասին ավելի մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ Զօրինների և Ունկվայի կանոնները Մաշտոց ծիսարանում, «Էջմիածին», 1986, թիվ Ա, էջ 40-49:

Պետրոս Գետաղարձի գործուն քաղաքական-դիվանագիտական գործունեությունը՝ ուղղված խաղաղասիրական նպատակներին. «Լուեալ Պետրոս կաթողիկոսի (ՆՀԱ-1022) զգալն Սենեքարիմայ ի Սեբաստիայ՝ եկն եւ ինքն այս եւ եկաց ժամանակս ինչ: Եւ ապա պատգամատրօք Յոհաննէս արքային Հայոց, որ նստէրն յԱնի, զնաց առ կայսրն Վասիլի ի սահմանս Խաղուեաց եւ խոսեցաւ ընդ նմա զիստաղութենէ եւ արար հաշտութիւն ի մէջ Յոհաննու արքայի եւ Վասիլի կայսէրն. անդ արար եւ զաքանչելիս ի տօնի ջրօրինեացն, զի հրամայեաց օրինել զօուրն առաջի իւր ի գետն՝ ըստ ծիսի հայոց: Եւ ի խաչակնքել հայրապետին զօուրն՝ արգելաւ գետն յընթացիցն, եւ ի հեղուկ գուէրունական իւղն միւռնի՝ ճառագայթ լուսոյ հատան ի զուրցն: Ընդ որ կարի իմն սքանչեցեալ Վասիլի՝ մեծարեաց զիայրապետն եւ ապա բազում պատուվ արձակեաց զնա: Յայսմանէ Գետաղարձ անվանեցաւ սուրբն: Եւ անտի դարձ արարեալ (ՆՀԲ-1023), եկն ի Սեբաստիա առ Սենեքարիմ արքան, եւ եկաց առ նմա այլ եւս ամս երկուս: Եւ զնաց աստի յԱնի քաղաք եւ կացեալ անդ ամ մի. եւ լուեալ զիիւանդութիւն Սենեքարիմայ արքայի՝ դարձաւ վերստին ի Սեբաստիա: Եւ ի նոյն տարւոց էիսս վախճան կենացն Սենեքարիմայ արքայի՝ 1027 (ՆՀԶ)»<sup>54</sup>:

Գրիգոր Մագիստրոսի նամակներից տեղեկանում ենք, որ իր և Պետրոս Գետաղարձի միջև աշխույժ նամակագրական կապ է եղել: Այսպէս, նույն Հովհաննես Սեբաստացին, օգտագործելով, անշուշտ, իրեն նախորդող պատմիչների աշխատություններից քաղված տեղեկությունները, հաղորդում է, որ «Յաջորդ ամին (ՆՀԷ-1028), յորում թագաւորեաց Դաւիթ Սենեքարիմեան, էիսս վախճան կենաց Սիօնի՝ արքեպիսկոպոսին Սեբաստիոյ, վասն որոյ ինդրեաց արքայն ի Պետրոս Գետաղարձ հայրապետէն զայր ոք արժանաւոր վարժեալ յաստուծապաշտութեան եւ յիմաստութեան ձեռնադրել եւ կացուցանել ինքեանց եպիսկոպոսն: Եւ նա զրեաց առ Գրիգոր Մագիստրոսն եւ ինըրեաց զումանս յաշակերտաց նորին, ոք ուսանէին ի նմանէ զիիլիսովիայութիւն,

<sup>54</sup>Տե՛ս Յովհաննես Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, աշխ. Բ.Լ. Չոքասզյանի, Երևան, 1974, էջ 33:

յորս երեւելի եղեն Բասիլ եւ Եղիսէ: Զսոսա առաքեաց Գրիգոր Մագիստրոսն բարեհաճ կամօք եւ յանձնարարական զրութեամբ առ հայրապետն, որ եւ սկսանի այսպէս: «Զվսեմական մականունութիւն սրբազնաբար ընկալեալ քո բոլորն հարց պէտականութեանց, մաքուր եւ անազօտ լուսափայլութեամբ ի մեզ»<sup>55</sup> և այլն: Ըստրեաց Պետրոս կաթողիկոս Գետադարձն զԵղիսէ եւ ձեռնադրեաց զնա արքեպիսկոպոս Սեբաստիոյ, զոր լուեալ Գրիգորի Մագիստրոսի՝ զրեաց առ նա բուլթ բարեհարմաք ազդարարութեամբ վասն ընկալեալ աստիճանին, զոր հանեալ ի Թղթոց նորին եղաք աստ ի զգօսանս եւ ի խրատ խոհականաց ընթերցասիրաց»<sup>56</sup>: Սրան հետևում է Գրիգոր Մագիստրոսի նամակը՝ ուղղված իր աշակերտ, Սեբաստիայի նորընտիր արքեպիսկոպոս Եղիսեին, որը գրված է Մագիստրոսին հատուկ փայլուն հուտորական ոճով, որտեղ նա հայրաբար խրատներ և պատզամներ է տալիս իր սիրած աշակերտին ստացած բարձր հոգենոր աստիճանը պատշաճ վարելու համար:

Մատրեոս Ուտիայեցու պատմածից հայտնի է նաև, որ երբ 1047թ. Պետրոս Գետադարձը աքսորից և մի շարք տարաբախտ արկածներից հետո Կոնստանտին Մոնոմախ կայսեր կողմից հրավիրվում է Կոստանդնուպոլիս, նա իր հետ տանում է մի քանի հարյուրի հասնող սպառազեն հեծյալ ազատներ, եպիսկոպոսներ, վարդապետներ, որոնց թվում էին նաև երաժիշտները<sup>57</sup>: «Գնացին ընդ նմա եւ երեւելի եպիսկոպոսունքն եւ վարդապետքն մեր (որոց զիսատրք էին հնգետասան), յորոց մի կը եւ Եղիսէ արքեպիսկոպոսն Սեբաստիոյ: Եւ իբրեւ յանդիման եղեն Մոնոմախոսի կայսեր՝ աքոռ ոսկի փառազարդ արկեալ նստոյց զիայրապետն բազում մեծարանօք: Եւ ի ժամ մեկնելոյ նորա անտի Եղիսէ եպիսկոպոս բառնալ զայն անտի եւ ի շփորիլ արքունի սպասատրացն՝ էիարց կայսրն զպատճառ իրացն: Յայնժամ պատասխանի եւ Եղիսէ եպիսկոպոսն եւ ասաց. զիտացէ տէր իմ արքայ, զի աթոռն, յոր բազմեցաւ սուրբ հայրապետս մեր, չէ

<sup>55</sup> Գրիգոր Մագիստրոս, Թղթեր, էջ 15-16:

<sup>56</sup> Տե՛ս և Յովհաննեսի Սեբաստիացի, Պատմութիւն Սեբաստիոյ, էջ 34:

<sup>57</sup> Մատրեոս Ուտիայեցի, Աշխ. աշխ., էջ 104:

արժան այլում ումեք նստիլ ի նմա: Ժպտեալ կայսեր ընդ այս՝ հրաման եւս սպասաւորաց իւրց զի առեալ տարցին զայն աթոռ յօթեանս բնակութեան կաթողիկոսին, զի նա՛ միայն նատցի ի վերայ նորայ եւ ոչ այլ ոք»<sup>58</sup>:

Շարականագիրների միջնադարյան ցուցակները մատնանշում են Պետրոս Գետադարձին որպես Սարտիրոսաց, Ննջեցելոց և Սանկունք կոչվող երգերի հորինող, այսպէս. «Պետրոս Գետադարձն՝ զՀանգստեան շարականս, զՄարտիրոսացն եւ բազումս ի Սանկտեացն»<sup>59</sup>: Սակայն, հայտնի է, որ Սարտիրոսաց և Ննջեցելոց շարականները ասեղծվել են տարբեր ժամանակներում և տարբեր անձանց կողմից<sup>60</sup>, ուստի և Պետրոս Գետադարձի հեղինակումների զատումը ներկայումս դյուրին չէ: Այն կպահանջի առանձին մանրակրկիտ հետազոտական աշխատանք: Ննջեցելոց կարգի մեջ են, օրինակ, տվյալ դեպքում մեզ հետաքրքրող հեղինակներից՝ Սարգիս Սևանեցու երգած «Սարսափելի որոտմամբ» ԲԿ տերերկնիցը և Հակոբ Սանահնեցու «Յանսկզբնական ծոցյ Հօր», ԳԿ ողորմեա շարականները, որոնց կանդրադատնանք հաջորդում էր:

Պետրոս Գետադարձի կապակցությամբ հատկապես նշելի են առավոտյան ժամին երգվող «մանկոնք» կոչված շարականները, որոնք Շարակնոցում կազմում են մի շաք սրբերի ձոնված մեկական երգ: Դրանց թվում՝ սրբոց Սուրբիասեանց՝ «Ստուգութեամբ տեղեկացեալ», Ուկեանց՝ «Որք արժանաւորեցայր», Աստվածամբ՝ «Աղաչեմբ զՔեզ Տէր», Սանդուխտ կույսին, Դավիթ

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 40: Տե՛ս նաև Արիստակէս Լաստիւրցի, Պատմութիւն, էջ 82:

<sup>59</sup> Անասայան Հ. Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959, էջ LXVI-LXVIII:

<sup>60</sup> Ինչպէս հայտնի է, Սարտիրոսաց կարգը, ըստ միջնադարյան ցուցակների, վերագրվում է նաև Ստեփանոս Սյունեցուն, իսկ Հանգստյան շարականները (կամ քանացից մի քանիսը), ըստ Սարգիս երեցի ցուցակի, վերագրվում են անգամ Ներսէս Պարքեին. «Զհանգստեանն՝ սուրբ Ներսէս Պարքեն ասաց. (տե՛ս Անասայան Հ., Խշվ. աշխ., հ. Ա, էջ LXVI), ինչն ի վերջո գործի չէ որոշակի տրամարանությունից, եթե նկատի ունենանք այդ երգասացությունների հետագոյն ծագումն ու կիրառությունը:

Դվինեցուն, Կիրակոսին և Յուլիտային նվիրված շարականները, ինչպես նաև՝ սրբոց Վարդանանց կանոնի ԴԿ առեղի «Արիացեալք առ հակառակսն» շարականը: Պետրոս Գետադարձի երգաստեղության վերլուծությանն է նվիրված մեր ուսումնասիրության հաջորդ՝ Երկրորդ գլուխը<sup>61</sup>:

Բազրասունյաց շրջանի մտավորական վերնախավի փայլոն ներկայացուցիչներից էր քաղաքական գործիչ, փիլիսոփա և քերական Գրիգոր Մագիստրոս Պահլավունին, ով հայտնի էր նաև իբրև շարականագիր և տաղասաց: Ցավոր, այդ մասին պատմող ուղղակի տվյալները չափազանց սակավ են: Սակայն Գր. Մագիստրոսի նամակներում և «Մեկնութիւն քերականին» երկասիրության մեջ ցրված երաժշտարվեստին վերաբերող ասույթները վկայում են նրա քաջատեղյակ և նախանձախնդիր լինելը թե՛ իր ժամանակի գուսանական երաժշտության, թե՛ վանքերում ավանդվող և զարգացող հոգևոր երգարվեստի և թե՛ երաժշտության տեսության հարցերի հանդեպ:

Հատուկ ուշադրության է արժանի Գրիգոր Մագիստրոսի կրթական գործընթացի բարեկավմանն ուղղված գործունեությունը: Ըստ Էլության, Քջնիում նրա հիմնադրած համալսարանը եղել է հայ իրականության մեջ առաջին՝ եկեղեցուց անջատ գործող աշխարհիկ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունը, որի կրթական ծրագրերի մշակումը նույնպես պատկանում է Մագիստրոսին: Հայտնի է, որ այդ նպատակով է նա գրել իր «Մեկնութիւն քերականին» ձեռնարկը, որտեղ, ի թիվս զուտ կրթական անհրաժեշտ գիտելիքների, հայտնել է նաև շատ արժեքավոր տեղեկություններ իր ժամանակի երաժշտական կյանքի և ստեղծագործական ոլորտի վերաբերյալ: Նոյն նպատակով Գրիգոր Մագիստրոսը բարգմանել է Եվկիլիտեսի «Երկրաշափությունը»: Ենթադրելի է, որ Քջնիի համալսարանում պատշաճ մակարդակի վրա է դրված եղել նաև երաժշտական կրթությունը, ինչպես իր տեսական, այնպես էլ գործնական բաժիններով: Այսինքն, ըստ բոլոր տվյալների, Մագիստրոսի հիմնաձեմարանում, որը շրջիկ է եղել, դասավանդվել են յոթ ազտ

<sup>61</sup> Կոստանեանց Կ. Տեր Պետրոս Ա Գետադարձ, էջ 48:

գիտությունները կամ արվեստները, անտիկ Հռոմատանից ժառանգած մի ուսումնական-կրթական համակարգ, որն իրեն լիովին արդարացրել է նաև ողջ միջնադարի ընթացքում, ինչպես Միջերկրական ծովի ավազանին հարակից երկրներում, այնպես էլ Մերձավոր Արևելքում և Արևմտյան Եվրոպյում:

Արդեն այն փաստը, որ Գրիգոր Մագիստրոսը հիշատակվել է շարականազիրների միջնադարյան ցուցակներում<sup>62</sup>, ինքնին ուշագրավ է: Բացի Գրիգոր Մագիստրոսից, եկեղեցին ևս մեկ անգամ է կանոնականացրել Շարակնոցում տեղ գտած աշխարհիկ անձի ստեղծագործությունը<sup>63</sup>: Խոսքը VIII դարի կին երգահան, Գողթնի իշխան Խոսրով Գողթնեցու դստեր՝ Խոսրովիդուխտ իշխանութու մասին է: Իր եղբոր՝ Վահան Գողթնեցու նահատակությանը նվիրված «Զարմանալի է ինձ» մանկունքը ի սկզբանե հորինվել է որպես աշխարհիկ գովք կամ ողբ<sup>64</sup>: Սակայն իր բացառիկ երաժշտաբանաստեղծական արժանիքների շնորհիվ կանոնականացվել է եկեղեցու կողմից և կազմել Վահան Գողթնեցու հիշատակին նվիրված կանոնի միակ երգասացությունը:

Այդ շարականի հեղինակային պատկանելության վերաբերյալ եղել են տարբեր կարծիքներ: Հայր Ղևոնդ Ալիշանը, օրինակ, այն կարծիքն էր, որ «Զարմանալի է ինձ» ողբի իրական հեղինակը ոչ թե Խոսրովիդուխտ Գողթնեցին է, այլ VIII դարի մեր մյուս նշանավոր կին երգահանը՝ Ստեփանոս Սյունեցու միանձնուի քույրը՝ Սահակադուխտը, ով երիտասարդ տարիքից նվիրվել էր կրոնական կյանքին՝ ճգնելով Գառնիի կիրճում՝ սուրբ Սահակ Պարքեի անունը կրող մենաստանում: Իր եղբոր՝ Ստեփանոս Սյունեցու վարքից հայտնի է, որ նա հորինել է «բազում կցուրդս քաղցրահամս», այսինքն՝ հեղինակել է մի շարք

<sup>62</sup>Տե՛ս Անասյան Հ. Հայկական մատենագիտություն, հ. Ա, էջ LXVII, LXXI, LXXIV, LXVIII:

<sup>63</sup>Այդ մասին տե՛ս Արևատայք Ա. Проблема канонического в армянском духовном письменстве, сб. "Калофония", Лъвов, 2004, с. 56-60.

<sup>64</sup>Այդ երգասացության մասին ավելի մանրամասն տե՛ս մեր հորիվածը՝ Շարականերգութիւն և վկայաբանութիւն. Հայկական Ուժանի ԴԿ. դարձուածքի առեղծուածը, ՀՀՀ, հ. ԻԵ, Պեյրութ, 2003, էջ 163-175:

հոգևոր երգեր, մասնավորապես ձռնված Մարիամ Աստվածածնին, որոնցից ընդամենը մեկի՝ «Սրբուի Մարիամ» սկզբնատողով անվանական ակրոստիքոսով գրված օրիներգի բանաստեղծական բնագիրն է պահպանվել, այն ի՝ պատահական բարեբախտությամբ: Դարձյալ հ. Ղ. Ալիշանն առաջ է քաշել ուշագրավ մի տեսակետ, համաձայն որի մանրուսման արվեստը սկիզբ է առել ոչ թե հայկական Կիլիկիայում XI դարում, ինչպես կարծում էր, օրինակ, Կոմիտասը<sup>65</sup>, այլ սկզբնավորվել է բուն Հայաստանում, շատ ավելի վաղ՝ Ստեփանոս Սյունեցու, Գրիգոր Գողիկ Այրիվանեցու և Սահակադուխտի շանքերով<sup>66</sup>: Ալիշանը իր վարկածը հաստատելու համար իբրև փաստարկ է բերում այն հանգամանքը, որ Ստեփանոս Սյունեցու և Գրիգոր Գողիկի՝ Կոստանդնուպոլսում անցկացրած տարիները (712-720թթ.) բյուզանդական հոգևոր երգարվեստում կալոֆոնիկ երգեցողության հարածուն վերելքի ժամանակաշրջանն էր սկզբնավորում: Եվ երկու աշակերտակից ընկերները, Հայաստան վերաբառնալով, ամենայն հավանականությամբ, այդ առաջատար երգանձը սկսել են զարգացնել նաև հայրենիքում: Այդ մասին բավական հստակ ակնարկ կա Ստեփանոս Սյունեցու վարքի՝ Գրիգոր Այրիվանեցուն վերաբերող հատվածում<sup>67</sup>: Նույն վարքագրական հուշարձանը հաղորդում է, որ Սահակադուխտը հայտնի շարականագիր լինելուց բացի, մանկավարժական գործունեություն է ծավալել, իր գեղեցկությամբ ոչ մեկին չգայթակղելու համար Հայաստանի տարբեր վայրերից իր մոտ եկած պատանիներին վարագույրի հետևից երգ-երաժշտություն է դասավանդել: Սա կնոջ նմանատիպ գործունեությունը հաստատող աննախադեալ մի

<sup>65</sup>Տե՛ս, օրինակ, Կոմիտաս Վարդապետ, Հայոց եկեղեցական եղանակները, Ուսումնասիրութիւններ և յօդուածներ, աշխ. Գ. Գասպարեանի և Ս. Սուշեղեանի, գիր Ա. Երևան, 2005, էջ 55-56:

<sup>66</sup>Տե՛ս Ալիշան Ղ. Յուշիկը հայրենեաց հայոց, հ. Ա, Վենետիկ, 1920, էջ 262:

<sup>67</sup>Տե՛ս Յովսեփեանց Գ. Սիմիքար Այրիվանեցի և նորագիւտ արձանագրութիւններ, Երուսաղեմ, 1931, էջ 18:

փաստ է ոչ միայն այդ ժամանակվա, այլ նաև ողջ միջնադարի ավատատիրական Հայաստանի իրականության համար<sup>68</sup>:

Վերոնշյալ շարականի կապակցությամբ իր կարծիքն է արտահայտել նաև Հրաչյա Աճառյանը: Նա գտնում էր, որ Խոսրովինությանը անունը հորինել (Ելնելով հոր՝ Խոսրով Գողթնեցու անունից) և շրջանառության մեջ է դրել Ալիշանը, որը հրատարակել էր շարականի բանաստեղծական տեքստը<sup>69</sup>: «Զարմանալի է ինձ» «...երզը, թեև շատ ծանր ստեղի եղանակով է, բայց բովանդակությամբ ոչ միայն քրոջ շեշտ չունի, այլև առհասարակ ոչ մի կնօշական փափուկ զգացմունք չունի»<sup>70</sup>: Այդ տեսակետը մասսամբ կրկնեց նաև զրականագետ Գրիգոր Հակոբյանն իր շարականների ժամանակակից առաջարկության մեջ ավելի հեռուն գնալով և մի ամբողջ նովել հյուսելով Վահան Գողթնեցու և Սահակադրության Սյունեցու միջև կարծեցյալ սիրավեպի մասին<sup>71</sup>: Չնայած արտահայտված նման կարծիքներին՝ հայագիտության մեջ, այնուամենայնիվ, մի վերջնական տեսակետի կարգավիճակ է ստացել Խոսրովինության Գողթնեցուն «Զարմանալի է ինձ» շարականի հեղինակ համարելու վարկածը:

<sup>68</sup> Նոյն տեղում:

<sup>69</sup> Տե՛ս Ալիշան Ղ. Յուշիկը հայրենեաց հայոց, հ. Բ, էջ 194:

<sup>70</sup> Չնայած դրան, Աճառյանը գետեղել է շարականի ամբողջական բնագիրը՝ նշելով. «Ստորև դնում եմ այդ շարականը՝ իրոն երկրորդ հայ կին հեղինակի առեղծագործությունը (առաջինն է Սահակադրության), տե՛ս Աճառյան Հ. ՀԱԲ, հ. Դ, էրևան, 1944, էջ 539:

<sup>71</sup> Տե՛ս Հակոբյան Գր. Շարականների ժամանք հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դր.), Երևան, 1980, էջ 167-171:

Օրինակ 1  
«Զարմանալի է ինձ»

*Ծամբ*

The musical score consists of ten staves of music. The first staff begins with a treble clef, a key signature of one sharp, and a common time signature. It features a melodic line with various note values and rests, accompanied by a harmonic line below it. The lyrics "Զար մա նա" are written underneath the notes. The second staff starts with a bass clef and continues the melodic line. The third staff begins with a treble clef and follows the same pattern. The fourth staff starts with a bass clef. The fifth staff begins with a treble clef and includes the lyrics "ինձ". The sixth staff starts with a bass clef. The seventh staff begins with a treble clef and includes the lyrics "ուրս". The eighth staff starts with a bass clef. The ninth staff begins with a treble clef and includes the lyrics "ըստ". The tenth staff starts with a bass clef.

Հստ Գրիգոր Տաթևացու կազմած ցուցակի՝ Մագիստրոսն է Խաչի նաւակատեաց Ե. օրվա «Զորս ըստ պատկերի Քում» ԳԶ ողորմեայի հեղինակը: Թեև այս շարականի հեղինակի կապակցությամբ հայագիտության մեջ նույնպես արտահայտվել են տարբեր կարծիքներ: Մասնավորապես, տարածված է եղել այն կարծիքը, որ վերոնշյալ շարականը VIIդ. իշխան Աշոտ Պատրիկ Բագրատունու հեղինակածն է՝ կապված պատկերամարտության շրջանում Բյուզանդիայից դրւու քերված հրաշագործ Ամենափրկիչ մի սրբապատկերի հետ: Սակայն, ի վերջո, պատմական ճշմարտությունն արտահայտել են այն գիտնականները, որոնք պնդել են, որ «Զորս ըստ պատկերի» շարականի իրական հեղինակը Գրիգոր Մագիստրոսն է:

Գրիգոր Մագիստրոսի գիտական լայն ընդգրկումների մասին են վկայում նրա գեղագիտական հայացքները, որոնք առանձին հետաքրքրություն են ներկայացնում: Եվ դա լիովին արդարացված է, քանի որ իր նամականիում և «Մեկնութիւն քերականին» երկասիրության մեջ Մագիստրոսը հանդես է զայխ իբրև հին և նոր (իրեն ժամանակակից) երաժշտարվեստի խորաթափանց գիտակ, որն ունի սեփական որոշակի դիրքորոշումն ու գործուն վերաբերունքը իր ժամանակի մտավորականներին հուզող արվեստի մի շարք հրատապ հարցերի նկատմամբ:

Գրիգոր Մագիստրոսի՝ որպես շարականագրի և տաղասացի վաստակին է նվիրված մենագրության Երրորդ գլուխը, իսկ նրա գեղագիտական հայացքները լուսաբանվում են Չորրորդ գլխում:

\* \* \*

Անիում է կրթվել և իր կյանքի մի զգալի մասը անցկացրել միջնադարյան Հայաստանի նշանավոր գիտնական, հանրագիտակ մտածող, բանաստեղծ և երաժիշտ Հովհաննես Սարկավագ Իմաստասերը (†1129 թ.): Հստ Ս. Աբեղյանի դիպուկ բնորոշման

նա հանդիսացել է «մեր վերածնության նոր մտավոր հոսանքի առաջին արտահայտիչներից մեկը»<sup>72</sup>:

Հայտնի է, որ Հովհաննես Սարկավագը եղել է Անիի վարդապետարանի ուսուցչապետը, շարունակել է Գրիգոր Մազհատրոսի սկսած կրթական համակարգի բարեփոխումները: Իր եռանդրուն և բազմակողմանի գրծունեության շնորհիվ Անիի դպրոցը աննախադեպ ծաղկում է ապրել պատրաստելով հայ մշակույթի հետագա զարգացման համար պիտանի բազմաթիվ աշակերտներ:

Ստվերում չի մնացել նաև Հովհաննես Սարկավագի վաստակը որպես շարականագիր և տաղասաց, ինչպես նաև երաժշտության գեղագիտության հարցերը նոր գիտական մակարդակի բարձրացրած տեսաբան: Այս կապակցությամբ հիշարժան են Ն. Թահիմիզյանի ծավալուն հոդվածը<sup>73</sup> և Կ. Միրումյանի՝ Հովհաննես Սարկավագի աշխարհայացքին նվիրված մենագրության՝ երաժշտության էսթետիկայի հարցերին վերաբերող ենթագրությունը<sup>74</sup>:

Հովհաննես Խմաստասերը կարևոր դեր է խաղացել իր ժամանակի պաշտոներգության բարեկարգման մեջ: Սաղմոսերգությունն անցանկալի աղավաղումներից պաշտպանելու նպատակով նա Հաղպատի մատենադարանում հայոնաբերել է V դարից պահպանված ընտիր մի Սաղմոսարան, որը տվել է ընդօրինակելու և տարածել է ողջ Հայաստանում: Այդ կապակցությամբ Հովհաննես Գառնեցի վարդապետը վկայել է, որ «Ձ»սարմոս Դաւթի, մանաւանդ զերզս հոգույն սրբոյ՝ այլ եւ այլ եւ կամ աւելի եւ պակաս նուազեն մանկունք եկեղեցւոյ. ոչ ուսեալքը զճշգրիտն եւ ոչ իմացեալքը զճշմարիտն: Եւ այս եղեւ յանհոգութենէ ոմանց եւ ի սխամլազիր զգրչացն: Իրահամարձակը ումանք եւ ինքնավստահը, մտայօր իմացմամբ՝ տարա-

<sup>72</sup>Տե՛ս Աբեղյան Մ. Երկեր, հ. Դ. Երևան, 1970, էջ 63:

<sup>73</sup>Թահիմիզյան Ն. Յովհաննես Սարկավագ Խմաստասերը և հայ միջնադարեան երաժշտական մշակույթը, «Բազմավեպ», 1978, թիվ 3-4, էջ 328-356:

<sup>74</sup>Միրումյան Կ. Հովհաննես Սարկավագի աշխարհայացքը, Երևան, 1984, էջ 207-223:

գրվեցին գուղիղն և գուղորդ սաղմոսս: Եւ այլք ումանք ծայրաքաղ առնելով բարբանջեն, անզեղ սրտիք և անխմաստ բանիք: (...) Որոնեալ գտի գրած ի թարգմանչացն սաղմոսարան, որը առեալ սուրբ Վարդապէտին Յովհաննու, որ Սարկաւագ կոչիր, այն որ զտումարն երեւեցոյց զիին հային. եւ նա սերմանեաց զայս ուղիղ եւ գուղորդ սաղմոսս»<sup>75</sup>: Ուշագրավ է նաև հին ձեռագրերից մեկի հիշատակարանի հաղորդածն այն մասին, որ Սարկավագ Իմաստասերը սպասավորել է Անիի Կաթողիկե եկեղեցում պաշտոներգության ժամանակ<sup>76</sup>:

Յովհաննես Սարկավագի շարականերգության մեջ ունեցած ավանդին է նվիրված տույն ուսումնասիրության Հինգերորդ գլուխը, իսկ նրա գեղագիտական հայացքներին կանդրադառնանք Վեցերորդ գլխում:

\* \* \*

Բագրատունիների օրոք գործած շարականագիրներից հիշատակելի են նաև մեկական, սակայն բնորոշ երկերով հայտնի Ստեփանոս Ապարանցին՝ Խաչի նաւակատեաց Դ օրվա «Սրբութիւն սրբոց» օրինությամբ, Սարգիս Սևանեցին՝ ննջեցելոց կանոնի «Սարսափելի որոտմամբ» տերերկնիցով և Հակոբ Սանահնեցին՝ նույն կարգի «Յանսկզբնական ծոցոյ Հօր» ողորմեայով: Սահմանափակվենք այստեղ ասելով, որ այդ շարականներն օժտված են երաժշտաբանաստեղծական որոշակի արժանիքներով և հատկանշական են X-XIդդ. համար: Թեև հայագիտության մեջ նշված շարականագիրներին այս կամ այն շափով անդրադարձել են Գաբրիել Ավետիքյանը, Միքայել Չամչյանը, Սահակ Ամաստունին, Գրիգոր Հակոբյանը և Նիկողոս Թահմիզյանը, սակայն վերոհիշյալ շարականների երաժշտական բաղադրիչը մինչև անցյալ դարի 90-ական թվականները չէր ներկայացվել ընթերցողին և չէր քննվել ըստ արժանվույն<sup>77</sup>: Մինչդեռ, այդ շարական-

<sup>75</sup> ՍՍ, ձեռ. 4913, էջ 107-108ա:

<sup>76</sup> ՍՍ, ձեռ. 666, թղ. 250ա:

<sup>77</sup> Տե՛ս մեր հոլվածը՝ Ասիի երաժշտական մշակույթը և նրա հետ կապված շարականագիրները, «Բազմավեպ», 1995, էջ 210-215:

ներն արժանի են վերլուծության և ավելի լայն շրջանառության մեջ դրվելուն: Երեքն էլ ունեն անվանական ակրոստիքոսներ, ինչն ավելի է որոշակիացնում հեղինակային պատկանելության հարցը: Տվյալ շարականները գրված են VII դարից հայ շարականերգության մեջ արմատավորված բյուզանդական կոնդակի և ասորական մադրաշայի ժամբերից սերող կացուրդի ձևով:

Սրանցից ամենածավալունը (9 տուն) Ստեփանոս Ապարանցու «Սրբութիւն սրբոց» շարականն է<sup>78</sup>: Այն հորինվել է 983 թվականին՝ Վասիլ կայսեր կողմից Ստեփանոս Ապարանցուն, որը Մոկաց եպիսկոպոսն էր, մի քանի նշանավոր սրբությունների և դրանց թվում Ապարանից Ս. Խաչի ընծայման կապակցությամբ<sup>79</sup>: Այդ առիթով է գրել Գրիգոր Նարեկացին նաև իր Ապարանից Խաչի պատմությունն ու ներբողը նվիրաբերելով դրանք Ստեփանոս Ապարանցուն:

Շարականն ընթանում է Երրորդ ձայնեղանակի դարձվածքում (ԳԶ դարձուածք) և ունի վար արտահայտված վիպաքնարական բնույթ<sup>80</sup>: Այն աչքի է ընկնում ոճի մաքրությամբ, վանկական և ներվանկական սկզբունքների ներդաշնակ զուգորդումով, մոտիվային տարբերակման կիրառությամբ՝ կապված ազատ բարդունյա խառը տաղաչափությամբ գրված ոտանավորի ձևի օգտագործման հետ: Ընտրված ձայնեղանակի լուսավոր երանգավորում ունեցող վերին հատվածի գերիշխումը շարականին հաղորդում է համապատասխան տրամադրություն՝ ի տարբերություն բուն ԳԶ-ում ընթացող շատ ուրիշ երգասացությունների: Հ. Գ. Ավետիքյանն այն որակել է որպես «գերապանծ շարական», առաջիններից մեկը՝ դեռևս XIX դարի սկզբին գնահատելով նրա գեղարվեստական արժանիքները:

<sup>78</sup> Շարականագիրների միջնադարյան որոշ ցուցակներ տվյալ Օրինությունը վերագրում են Ստեփանոս Սյունեցուն, սակայն տակավին միջնադարում ճշգրտվել է և այդպես էլ հաստատվել է հայագիտության մեջ Ստեփանոս Ապարանցու հեղինակությունը պաշտպանող տեսակետը:

<sup>79</sup> Տե՛ս Աճառյան Հ. ՀԱԲ, հ. Դ, Երևան, 1943, էջ 607-608:

<sup>80</sup> Շարական, էջ 774-777:

Օրինակ 2

Օրհ. Խաչի վերացման Դ. աւոր  
«Սբութիւն սրբոց»  
ԳԶ դարձվածք

Չափավոր

The musical score consists of ten staves of music for a vocal part. The lyrics are written below each staff in Armenian. The key signature is one sharp (F#), and the time signature is common time (indicated by 'C'). The vocal part uses eighth and sixteenth note patterns, with several melodic phrases highlighted by slurs.

Սըր - բո - բիմ  
Ծնոր - հն - ցիր է - կե - ղեց - ոյ  
սարք լիք - խայ Քոյ Տեր  
բան - զի հն - դա - սիր ծրա - ճամբ ա - նա - յատ ծեռ  
ծե - ռին Քոյ ի սա հա - մա - հա - ւա -  
բեայ աս բեզ զիա - մօ - րեց  
սե - ոլս բա - նա - կամ  
կեմ - դա - մեաց, ա - դա - շնոր զգ մեզ  
Սեր,  
պահ - պամ - եա զգ մեզ ընդ հն - ւա - մեա  
խա - շի Քոյ սարք:

Շարակնոցում Ստեփանոս Ապարանցու շարականը գետեղված է Ս. Խաչի նաևակատեաց Դ օրվա կանոնում: Այդ կանոնը կազմված է երկու օրինությունից և հարց կոչվող մասից, որ փոխի է առնված Շողակարի կանոնից: «Մրբութիւն սրբոց»-ը կանոնի երկրորդ օրինությունն է: Մեր ամենահմուտ շարականագետներից Սահակ Վրդ. Ամատունին նշել է, որ Դ օրվա կանոնում երգվելիք «Հարցը եւս՝ իւր սարօքն յօրինել է Ստեփանոս Ապարանցին»<sup>81</sup>: Այսինքն, Ամատունին Ստեփանոս Ապարանցուն է ընծայում Ս. Խաչի նավակատյաց Դ օրվա ամբողջ կարգը: Անշուշտ, հետաքրքիր կլիներ ձեռքի տակ ունենալ Ստեփանոս Ապարանցու գրչին պատկանող նաև այլ գործեր, սակայն պարզ չէ, թե ինչն է հիմք հանդիսացել Ամատունու տվյալ պնդման համար:

Երկրորդ շարականը Հանգստյան կարգի Ավագ կողմ ձայնեղանակում մտահղացված «Սարսափելի որոտմամբ» տերերկնիցն է (6 տուն), որի տնագլուխները հոդում են «Սարգիս» անունը<sup>82</sup>: Տեղինակն օգտագործել է այստեղ յամբական (նոր կամ հին ժամանակների) երկանդամ 7 և 8-վանկանի ոտանավորի ձևը զուգորդելով տների ներսում այդ ձեի երկու հայտնի տարրերակները: Զուտ վանկական կառուցվածք ունեցող և սաղմոսատիպ շարականներին հարող այս նմուշը թվում է, թե համեստ երաժշտական արժանիքներ ունի: Սակայն, միապահադությունը թվացյալ է: Շարականի անփոփոխ, ներքին ուժ և հաստատակամություն արտահայտող մեղեդու բազմակի կրկնությունը, զուգորդվելով բանաստեղծական խոսքի մեջ պատկերված ահեղ դատաստանի տեսարաններին, ձեռք է բերում գեղարվեստական հնարանքի նշանակություն: Ուշագրավ է նաև գրական բնագիրը, որն իր ներքին անհորրադդ կշռույթով իրապես նարսափազդու տպավորություն է ստեղծում: Այդ հանգամանքը թույլ է տալիս տվյալ երգասացությունն, օրինակ, համադրել կաթողիկ եկեղեցու երգեցողական ավանդույթը ներկայացնող՝ գրիգորյան խորալնե-

<sup>81</sup> Տե՛ս Ամատունի վրդ. Ս. Հին և նոր պարականուն կամ անվավեր շարականներ, Կաղարշապատ, 1911, էջ 128-129:

<sup>82</sup> Շարական, էջ 989-990:

թից թերևս ամենահայտնի մեղեդու՝ Dies irae հանրահայտ սեկ-  
վենցիայի հետ<sup>83</sup>:

Հետաքրքրական է նաև շարականի հեղինակի հարցը: Սո-  
վորաբար, այն համարվում է Սարգիս Ա Սևանեցի կաթողիկոսի  
հեղինակումը, սակայն, մեր կարծիքով, ավելի հավանական է, որ  
նրա հեղինակը լինի Սարգիս Վարդապետ Սևանեցին՝ Սևանա  
վանքի նշանավոր առաջնորդը, որին իր մոտ հրավիրեց Գագիկ Բ  
քազավորը՝ միասին ուսմամբ պարապելու համար: Վարդապետ,  
ով թղթակցում էր նաև Գրիգոր Մագիստրոսի հետ<sup>84</sup>: Սարգիս  
Սևանեցի վարդապետն ունի հունարենից թարգմանված ննջե-  
ցելց նվիրված մի ձառ, որի տպավորության տակ կամ ի լրա-  
ցումն, գուցեն, գրվել է մեզ հետաքրքրող շարականը<sup>85</sup>: Պարա-  
կանոն շարականների մեջ էլ կա մի շարական (մանկունք ԳԿ),  
որի ակրոստիքոսը կազմում է «Սարգիս» անունը, սակայն այս-  
տեղ հավելյալ դժվարություն է հարուցում շարականի՝ Սուրբ  
Սարգսին նվիրված լինելու հանգամանքը, ինչը և անորոշ է  
թողնում հեղինակային պատկանելության հարցը<sup>86</sup>:



<sup>83</sup> Տվյալ երգասացությունը դարեր շարունակ գրավել է տարբեր ազգային կոմպոզիտորական դպրոցների ակնառու ներկայացուցիչների ուշադրությունը որպես Աստծո արդար դատաստանը պատկերող մի մեղենիական ազդեցիկ արտահայտություն: Կարելի է հիշատակել, օրինակ, Բեռլինոցի «Ֆանտաստիկ սիմֆոնիա»-յի ֆինալը, Ռախմանինովի «Շապտյան Պազանինիի թեմանե-  
րով», դաշնամուրի և նվազախմբի համար, իսկ հայ հեղինակներից՝ Արամ Խա-  
չատրյանի Երկրորդ՝ զանգերով սիմֆոնիայի երրորդ մասը, Էղվարդ Միրզոյա-  
նի Բնորոդության ջուրակի և նվազախմբի համար, ինչպես նաև նրա Սիմֆոնիան՝ լարայինների և գոսերի (լիտավորների) համար:

<sup>84</sup> Տե՛ս ՍԱՀԱՐՅԱՆ Հ. Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, էջ 410:

<sup>85</sup> Զարքիանալեան Հ.Գ. Պատմութիւն հայ հին դպրութեան (Դ-ԾԳ դր.),  
Վենետիկ, 1897, էջ 591:

<sup>86</sup> Տե՛ս ՍԱՄԱՍՈՒԿԻ Ս. Աշվ. աշխ., էջ 56, տե՛ս նաև Հակոբյան Գր., Աշվ. աշխ.,  
էջ 311:

### Օրինակ 3

«Սարսափելի որտումամբ»

Չափանոր.- ԲԿ<sup>87</sup>

Սար - սա - վե - լի ո - րու - մամբ և ա - հա - զին  
զո - րու - թեամբ զա - լոց է Փօր - կի յաշ - խարս յա -  
րու - ցա - նել զգ - մեռ - եալ - սըն || ծանօթա

Երրորդ ներկայացվող շարականը Հակոբ Սանահնեցու «Յանակզբնական ծոցոյ Հօր» Հանգստյան շարականն է (5 տուն)<sup>88</sup>: Այստեղ նույնպես օգտագործված է ազատ բարդությա խառը ուժանափորք, ինչը հավաստում է, որ տվյալ տաղաչափական ձևը, առաջին անգամ կիրառվելով Գրիգոր Նարեկացու տաղերգության մեջ, գրավել է նաև ժամանակակից և հետևորդ այլ շարականագիրների ուշադրությունը և մշակվել նրանց կողմից: Գերազանցապես վանկական կառուցվածքի այս երգասացությունն աչքի է ընկնում քնարական, աղաչական բնույթով, ինչը բնորոշ է ողորմեաներին<sup>89</sup>: ԳԿ ձայնեղանակը, ինչպես և բուն ԳԶ-ը, հաճախ են ընտրվել աղաչական-զղական, ընդհանրապես քնարական երանզավորում և բովանդակություն ունեցող երգասացությունների համար<sup>90</sup>: Բազմատուն կառուցվածքը և նրա

<sup>87</sup> Շարական, էջ 988-990:

<sup>88</sup> Շարական, էջ 997-998:

<sup>89</sup> Գ. Ավետիքյանը, «Վայելու և հոգեշարժ» նկատելով սովոն շարականի կազմությունը, ենթադրում է Հակոբ Կայեցի կարողիկոսի հեղինակ իննելլ, տես ն Բացատրութիւն շարականաց, էջ 655:

<sup>90</sup> Դեռևս վաղ միջնադարում ԳԶ-ի որոշակի արտահայտչականությունն իր արտացոլումն է ստացել Սովուն Քերպողակոր «Յաղագս կարգաց եկեղեցւոյ» երկասիրության մեջ, որտեղ ասված է. «Երրորդ ձայն՝ զիգական աղաչողութիւն ունի»: Այդ մասին տես ն Արեշատյան Ա. Քարոզի ժանրը հայ հոգևոր երգա-

սահմաններում որպես գեղարվեստական հնարանք կիրառված մեղեղային կրկնողությունը տվյալ շարականում, զղականապաշխարական բնույթի շարականներում և նախորդ օրինակներում, նպաստում են ընդհանուր քնարական տրամադրության խորացման և կանոնի խորհրդի բովանդակության բացահայտմանը: Ըստ Հ. Աճայյանի՝ Հակոբ Սանահնեցուն պետք է վերագրել նաև Ս. Հակոբ Մծբնացուն նվիրված շարականը, որի ծայրակապն է «Յակոբ», և որը միջնադարյան որոշ ցուցակներում ընձայված է Ներսես Շնորհալուն<sup>91</sup>: Այստեղ ուշագրավ է նշված երկու շարականների նմանատիպ սկզբնատողը, մի դեպքում՝ «Յանսկզբնական ծոցոյ Հօր», մյուս դեպքում՝ «Յանսկզբնական յեռթեան անեղ ծնունդ»<sup>92</sup>, ինչպես նաև՝ նույն ձայնեղանակին (ԳՎ) դիմելը, ինչը, իրոք, մտածել է տալիս, որ երկու երգասացությունների հեղինակը, հնարավոր է, Հակոբ Սանահնեցին է: Յակոբ, այս դեպքում հանդիպում ենք նախորդ հեղինակին վերաբերող երգասացությունների կապակցությամբ նշված նույն դժվարությանը, ինչը տվյալ դեպքում ևս բաց է թողնում հեղինակային պատկանելության հարցը...

Գրիգոր Մագիստրոսի մուերիններից և նամակագիրներից էր Դանիել Երաժիշտը, որին նա անվանում էր «նոր Օրիելս»: Այդ փաստին Ներսես Շնորհալուն նվիրված իր աշխատության մեջ անդրադարձել է Դ. Ալիշանը՝ գրելով. «Մեր Պահլաւունեաց իմաստաւեր նահապետն Գրիգոր Մագիստրոս՝ իր Թոթոց մեջ շատ հեզ և մեծ գովութեամբ յիշէ գԴանիել ուն երաժիշտ, նոր Օրիելս կոչելով. ասոր թոյի անսուրը մնացած շարական մը, Մեծացուցէ, ակ. որոյ տնագլուխք Դանիել կապեն, և սկսի «Դասապիտն հրեշտակաց»<sup>93</sup>: Անկասկած, Դանիել Երաժիշտը եղել է Անիի ճանաշված և հեղինակավոր երգահաններից մեկը:

ստեղծության մեջ, ՊԲՀ, 1992, 2-3, էջ 206: Տե՛ս նաև նույնի՝ Զայսեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Երևան, 2013, էջ 67-72:

<sup>91</sup> Աճայյան Հ. ՀԱԲ, հ. Գ, Երևան, 1946, էջ 484:

<sup>92</sup> Տե՛ս Ամաստուի Ս. Աշվ. աշխ., էջ 141:

<sup>93</sup> Տե՛ս Ալիշան Դ. Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 90:

Օրինակ 4  
«Յանսկզբնական ծոցոյ Հօր»  
Միջակ.-ԳՎ

Սիրակ

Սակայն, դժբախտաբար, նրանից զրելք ոչինչ չի հասել մեզ, բացի այդ «Անձացուցե» շարականից: Անգամ պատկերացում չունենք, թե ինչ ժանրերում է նա ստեղծագործել՝ միայն շարականի՝, թե դիմել է նաև տաղի, զանձի կամ ողբի տեսակներին: Զգիտենք՝ Դանիել Երաժիշտը հոգևորական էր, թե՝ աշխարհական, ազնվական էր, թե ռամկական ծագում ուներ: Սահակ Վարդապետ Ամաստունու հայտնի աշխատության մեջ հիշատակություն կա այն մասին, որ իրեն հայտնի ձեռագիր Շարակնոցներում առկա է այդ շարականը, որը նվիրված է Մարիամ Աստվածածին և օժտված է «Դանիել» ծայրակապով<sup>94</sup>: Այդ հանգա-

<sup>94</sup>Տե՛ս Ամաստունի Ս. Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ, էջ 13-14:

մանքն Ամատունուն թույլ էր տվել ենթադրելու, որ այդ երգասացության հեղինակը հենց Մազիստրոսի սիրած Դանիել Երաժիշտն էր: Մեջբերենք վերոհիշյալ շարականի բնագիրը.

*Դասապետն հրեշտակաց եւ սպասաւոր երկնից  
Արքային առաքմամբ իջեալ ի բարձանց  
Յերկիր ի յողոյն ուրախալից առ քեզ Սարիամ.  
Ալրհնութեամբ երգով զքեզ մեծացուցանեմք:*

*Արարիշն յաւիտեանց և ստեղծագործողն էական  
Սեոից խոնարհեալ ի փրկութիւն ազի մարդկան,  
Մարմնացաւ ի քէն կոյս անապական.  
Ալրհնութեամբ...*

*Նորոգողն բոլորից և անքննին  
Էական սենից գերազոյն ծնանի ի քէն  
Գերազոյն բնութեամբ և անշիոթ աստուածութեամբ.  
Ալրհնութեամբ...*

*Ի հայրական ծոցոյ լրյուն փառաց  
Միածին որդին ծագեցաւ յորովայնի սրբուհոյ կուսին՝  
Ըստ կանխասաց ձայնի մարգարէին.  
Ալրհնութեամբ...*

*Էնն էից անպարազիրն յաւետենից  
Սահմանեալ բուանդակ ի յարգանդի կուսին,  
Կենսագործելով զմեզ ի նախահաւրն յանցանաց.  
Ալրհնութեամբ...*

*Լուսազարդ շուշան ծաղիկ և մորենի անկիզելի,  
Հեատն վիմածին, երկիր բանաւոր, սափոր ոսկի  
Կենաց հացին կոյս Սարիամ:  
Ալրհնութեամբ երգով զքեզ մեծացուցանեմք:*

Թեև Դանիել Երաժշտի շարականի մեղեդին չի պահպանվել (հայտնի է միայն նրա ձայնեղանակը՝ ԱԿ), շարականիս մեջ արտահայտված կրոնական զգացումն ու ապրումներն աչքի են ընկնում բնականությամբ և նրբագեղությամբ, տաղաչափական մշակվածությամբ, թեպետ երգասացության բանաստեղծական կերպարային ոլորտը որուր չի զայիս Աստվածամորը նվիրված ավետիսներում և մեծացուցեներում ընդունված ածականների («զուսազարդ շուշան ծաղիկ», «մորենի անկիզելի», «սափոր ուկի կենաց հացին» և այլն) շրջանակներից: Այդուհանդերձ, «Դասապետն իրեշտակաց» շարականի հեղինակը միանշանակ երաժշտաբանաստեղծական առումով օժտված անհատ է եղել: Տվյալ բանաստեղծության մեջ ցայտունորեն արտահայտվել է հայկական Վերածննդի ոգին, ինչն առաջին հերթին իրեն զգացնել է տվել ավանդական կրոնական թեմաների մարմնավորման մեջ:

Դիտելի է, որ վերը դիտարկված շարականներն իրենց երաժշտական մեղեդիական արտահայտչականությամբ նաև սերտորեն կապված են VII-VIIIդդ. ազգային շարականերգության մեջ բյուրեղացած ոճական հատկանիշներին: Նրանցում կիրառված են տաղաչափության գրեթե բոլոր՝ ազատ բարդունյա, կանոնավոր չափաբերված և այլ տեսակներ: Պատկանելով հիմնականում «չափատր-միջակ» տիպի շարականներին և զաղափարված լինելով հայկական Ութձայնի տարբեր ձայնեղանակներում՝ ներառյալ բուն, կողմ, դարձվածք և ստեղի եղանակները, նրանք դարերի ընթացքում լիովին պահպանել են իրենց ոճական անաղարտությունը և զուսպ գեղեցկությունը:

\* \* \*

Անիի թագավորության շրջանի տաղային արվեստի՝ որպես ինքնուրույն գեղարվեստական երևույթի մասին լիարժեք պատկերացումը դեռևս կարոտ է մանրամասն ուսումնախրության: Մի կողմ թողնելով Գրիգոր Նարեկացու տաղերը, որոնք առավել քան իսուսն վկայությունն են այդ շրջանի տաղային արվեստի ծաղկման ու գեղարվեստական մակարդակի մասին, և որոնք արդեն բավական լավ ուսումնախրված են թե՛ բանա-

սերների<sup>95</sup> և թե՛ երաժշտագետների<sup>96</sup> կողմից, նրան ժամանակակից մյուս տաղերգու հեղինակների մասին եղած տվյալները սակավաբիշ են և անբավարար քննված։ Այս շարքում կարելի է առանձնացնել, ինչպես նրան Ն. Թահմիզյանն է պայմանականորեն անվանել, Անանուն Անեցուն, իր հիաքանչ «Տիրամայր»՝ Խաչի ողբով, որն այսպես կոչված հայկական Վերածննդի Stabat Mater ժանրին պատկանող մի հիանալի նմուշ է, մարդկային խոր ապրումներով և մեղեղիական քնարական հուզական արտահայտչականությամբ աղեցուն, ինչը որոշ ուսումնասիրողների հիմք է տվել վերագրելու «Տիրամայր» տաղը Գրիգոր Նարեկացուն<sup>97</sup>։

Սակայն «Տիրամայր» ստեղծած հեղինակի կողքին, անկասկած, եղել են նաև ուրիշ տաղերգուներ, որոնց ստեղծագործության լուսարանում ու նրանց գրչին պատկանող նմուշների բացահայտումը առայժմ մնում են հայ միջնադարյան երաժշտաբանաստեղծական տաղային արվեստի հետազա հետազոտման խմբիր։ Զարգացած ավատատիրության շրջանի և առաջին հերթին հենց Անիի տաղային արվեստի մակարդակի մասին վկայում է նաև այն հանգամանքը, որ, ինչպես Ք. Կուշնարյանն է նշել իր հիմնարար աշխատության մեջ՝ մեջբերելով Հ. Հովհաննիսյանի կարծիքը. «...в данную эпоху появляются новые категории специалистов - деятелей искусства: сочинителей тагов "тагергу" и исполнителей - "тагасацев". (...) Специализация шла еще дальше: сами "тагергу" подразделялись на сочинителей поэтического текста и сочинителей музыки. Хотя традиция сочинения музыкального и поэтического текста произведения одним и тем же лицом

<sup>95</sup> Տե՛ս Գրիգոր Նարեկացի, Գանձեր և տաղեր, աշխ. Ա. Քյոշկերյանի, Երևան, 1987։

<sup>96</sup> Տե՛ս Կոշնարև Խ. Ս. Вопросы истории и теории армянской монодраматической музыки, Ленинград, 1958, с. 128-137; Թահմիզյան Ն. Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դարերում, Երևան, 1985; Նավոյան Մ. Տաղերի ժանրի ծագումնաբանությունը և ազատ մեղեղիական ոճը հայ միջնադարյան մասնագիտացված երգարվեստում, Երևան, 2000։

<sup>97</sup> Այսպես, օրինակ, Ք. Կուշնարյանը և Ռ. Աքայանը «Տիրամայր» տաղի հեղինակ են համարում Գրիգոր Նարեկացուն։

держалась и держится по сию пору в творчестве народов Востока оченьочно (...»<sup>98</sup>.

### Օրինակ 6 «Տիրամայր»

Ծանր

S̄h - րա-մայ - րըն եան դնպ Որդ ույն ի խա - չին  
կայր

տքրս - մա զին ն լը - սե-լուլ

ըզ-ծա - րա - ին հա - ռաշ մամբ

լայր

ցա - տա զին ի փող պը - սա - կըն  
դի - ան - լով, ողբ, կոծ

կայ տայր ինք ան - ձին.

«Ա - շա - ցըս լուն  
Որ - դնակի ին, թի - սոս, ես ընդի

մեզ մն ուս - ճիմ»:

<sup>98</sup> Кушнарев Х.С., ук. соч., с. 132.

Ի մի բերելով ասվածը, կարող ենք եզրակացնել. Շարակ-նոցում վավերացված Անիի հետ կապված շարականագիրների հոգևոր երգերը վկայում են, որ նրանք իրենց մեջ խտացրել են V-VIII դարերի հայ հիմներգության լավագույն ձեռքբերումները՝ ընդլայնելով ավանդական թեմաների շրջանակը։ Նրանց գործերում առանձնակի հնչեղություն է ստացել հայրենասիրական թեման՝ կապված ժամանակի իրողությունների և ազգային-ազատագրական պայքարի հետ։ Այդ շարականագիրները զգալի չափով նախապատրաստել են նաև Կիլիկյան Հայաստանի հեղինակների ստեղծագործության մեջ իրագործած հետագա մեծ թոփչքը։

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԴԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁԻ ՕՐՀՆԵՐԳԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ. «ՄԱՆԿՈՒՆՔ» ՏԻԴԻ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

Շարականագիրների միջնադարյան ցուցակներում Պետրոս Գետադարձին են վերագրվում, ինչպես արդեն նշվել է, բազմաթիվ շարականներ: Սակայն այդ շարականների թվում հատկապես նշելի են առավոտյան ժամին երգվող մանկունք կոչված շարականները, որոնք Շարակնոցում կազմում են մի շարք սրբերի ձևնված մեկական երգ: Այստեղ տեղին է հիշեցնել, թե ինչ են իրենցից ներկայացնում հիմներգական կանոնի կամ շարականի կարգի վեցերորդ մասը կազմող «մանկունք» տիպի երգասացությունները որպես երաժշտաբանաստեղծական՝ ժանրային տեսակ:

Հայտնի է, որ ժամանակի ընթացքում հայկական ուժմասնյա հիմներգական կանոնից անջատվել է նրա վեցերորդ երգը՝ «մանկունք» կոչվող մասը (Սղմ. 112), որը ստացել է ինքնուրույն ժանրային տարատեսակի նշանակություն: «Մանկունք» կանոնակարգման մասին հիշատակություն կա XIIIդ. մատենագիր և մանկավարժ Հովհաննես Վանականի «Հարցմունք եւ պատասխանիք» դասագրքում, որը «զՄանկունքն ո վ է սահմանել» հարցին պատասխանում է. «Եզր կաթողիկոս»<sup>99</sup> (†641թ., հայոց կաթողիկոս է եղել 631-ից):

Այդ տիպի առաջին նմուշը Խոսրովիդուխտի՝ ի սկզբանե որպես աշխարհիկ ողբ կամ գովր հորինված «Զարմանալի է ինձ» երգն է, որը սկիզբ դրեց ինքնուրույն մի ավանդույթի և իր ակնառու երաժշտաբանաստեղծական արժանիքների շնորհիվ կանոնակարգվեց եկեղեցու կողմից: Միանգամայն ակնհայտ է, որ տվյալ երգասացության ժանրային պատկանելությունը «մանկունք» տեսակին կատարվել է ավելի ուշ և պայմանական բնույթ

<sup>99</sup> ՍՍ, ձեռ. 5611, էջ 76թ:

Է կրում: Սակայն երգասացության ցայտուն ծորերգայնությունը, նրա պատկանելությունը ԴԿ ստեղիին, դարձան ավանդական նաև հետազայի հեղինակների համար, ովքեր դիմում էին հիմներգական այդ տեսակին: Տվյալ ձայներանակի ոլորտին դիմումը առումով մատնանշենք հետազայի հեղինակների մի քանի օրինակներ, որոնց թվում առաջին տեղում են հենց Անիի հետ կապված շարականագիրները:

Պետրոս Գետադարձ - շարական Սբ. Վարդանանց «Արիացեալը առ հակառակսն» - ԴԿ Ի ստեղի,

Հովհաննես Սարկավագ Խմատասեր - շարական Սբ. Հոփիսիմեանց «Անսկիզբըն քանըն Աստուած» գրված տողային այբբենական ակրոստիքոսի ձևով,

Ներսես Շնորհալի - շարական Սբ. Վարդանանց՝ «Նորահրաշ պսակատըր» հորինված «ՆԵՐՄՒՄԻ ԵՐԳ» ծայրակապով, երկուսն էլ՝ ԴԿ դարձվածք եղանակում:

Այս օրինակները ներկայացնում են ԴԿ դարձվածքի հորինվածքային իրականացման զանազան տարրերակները այլայլ շարականագիրների ստեղծագործության մեջ<sup>100</sup>: Այս կապակցությամբ Կուշնարյանը ժամանակին արծարծել է հերոսական սկզբի խնդիրը հայ հոգևոր երաժշտության մեջ. «Առաջինը ինչն աչքի է զարնում հայ հոգևոր երաժշտության հերոսական շերտերը քննելիս,- գրել է նա, - նրանց տարաբնույթը լինելն է, ինչպես կերպարային բովանդակության, այնպես էլ հորինվածքի առանձնահատկությունների իմաստով: Այստեղ և խատաշունչ-արխահիկ սաղմուսերգություններն են, և հայենիքի համար նահատակված Վարդան Մամիկոնյանի հիշատակին ձռնված հայոնի շարականի տիպի ծորերգային մինողիաներն են, այստեղ և Պատարազի եզրափակիչ համարների տիպի չափաբերված քայլերգակերպ երգասացություններն են: Հարց է ծագում, արդյո ք հերոսական սկիզբը հայ հոգևոր երաժշտության մեջ ծագել է ինքնըստինքյան, իր իսկ եկեղեցու զարգացման արդյունքում, թե ներ-

<sup>100</sup> Այս ձայնեղանակի արտահայտչականության մասին ավելի մանրամասն տես մեր հորդվածը՝ Շարականերգութիւն և Վկայաբանութիւն. Հայկական Ուրացայնի ԴԿ Դարձուածքի Առեղծուածը, ՀՀ, հ. ԻԳ, Պեյրու, 2003, էջ 163-175:

թափանցել է այդ գործառույթի մեջ դրսից: (...) Հաշվի առնելով բազմաթիվ դարերի ընթացքում ժողովրդական և ժողովրդապրտեսիոնալ երաժշտության հսկայական դերը եկեղեցական երաժշտության կազմավորման մեջ առավել ևս պետք է մտածել, որ եկեղեցական երաժշտության հերոսական ձևերն արդյունք են ժողովրդական երաժշտության համապատասխան ձևերի ընկալման: Բացառված չէ, - զրել է Կուշնարյանն այնուհետև, - որ եկեղեցին յուրացրել է սաղմոսերգային տիպի հերոսական երգասությունների ձևերը, որոնք բյուրեղացել են հայ աղանդավորական-պավլիկյանների, իսկ ավելի ուշ՝ թոնդրակեցիների պաշտոներգության մեջ: Բացառված չէ նաև, որ առանձին դեպքերում եկեղեցին օգտագործել է նաև ուազմական երգերը<sup>101</sup>:

«Մանկունք»-ի ժանրային տեսակը հայ շարականերգության մեջ մշակած և զարգացրած երկու նշանավոր հեղինակներն են երկու շարականազիր կաթողիկոսներ՝ Պետրոս Գետադարձը և Ներսես Շնորհալին: Նրանց գրչի արգասիքն են ինչպես մի շարք համաքրիստոնեական, այնպես էլ ազգային հերոս-նահատակներին նվիրված «մանկունք»-ներ, ինչը և հանգեցրեց տվյալ ժանրային տարատեսակի վերջնական բյուրեղացմանը հայ հոգևոր երգաստեղծության մեջ<sup>102</sup>:

Պետրոս Գետադարձի կապակցությամբ հատկապես նշելի են հենց առավոտյան ժամին երգվող «մանկունք»-ները, որոնք Շարակնցում կազմում են մի շարք սրբերի ձռնված մեկական երգ: Ինչպես արդեն նշվել է, Պետրոս կաթողիկոսի գրչին պատկանող մանկունքներից են սրբոց Սուրբասեանց՝ «Ստուգութեամբ տեղեկացեալ», Ուսկեանց՝ «Որք արժանաւորեցայր», Աստվածեանց՝ «Աղաշեմբ զքեզ Տէր», Սանդուխտ կուսին, Դավիթ Դվինեցուն, Կիրակոսին և Յուլիսային նվիրված շարականները, ինչպես նաև՝ սրբոց Վարդանանց կանոնի ԴԿ ստեղի «Արիացեալը առ հակառակսն» շարականը: Պետրոս Գետադարձի շա-

<sup>101</sup>Տէ՛ս Կոստնարես Խ. Ս. Вопросы истории и теории армянской монодической музыки, с. 117.

<sup>102</sup>Այդ մասին տե՛ս նաև Աւետիքեան Գ. Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 591-593:

բականների գրական արժանիքները նշելով՝ Կ. Կոստանյանցը արդարացիորեն նկատել է, որ «Տեր Պետրոսի յօրինած հոգևոր երգերի մեջ երևում է նուրբ ճաշակ, վսեմ զաղափար և (...) հոգեկան վիճակի բնական արտահայտութիւն»<sup>103</sup>:

Եթե քննելու լինենք լոկ նրա Մանկունքների, որպես առավել արժանահավատ կտորների երաժշտական բաղադրիչը, ապա կարող ենք եզրակացնել, որ այն գտնվում է գրական բնագրի վերոհիշյալ արժանիքների հետ ներդաշնակ միության մեջ: Ինչպես և Վարդանանց կանոնի «Արիացեալք» շարականը, վյուս բոլոր մանկունքները նույնպես ծանր կամ չափավոր շարժումով, տարրեր ձայնեղանակներում ընթացող, վսեմ, ծորերգային և ճաշակավոր մեղեղիներ ունեն:

Սրանց մեջ, անկասկած, ամենահայտնի շարականը «Արիացեալք»-ն է, որն աչքի է ընկնում իր եռամաս կառուցվածքով և ծորերգային-զարդութրուն (կանտիենային-մելիզմատիկ) մեղեդային պտույտների բարդ շարադրատրյամբ: Տվյալ երգասացության բարդ մտահղացքն արտահայտվել է ոչ միայն շարականագրի ԴԿ ստեղի ձայնեղանակին դիմելու մեջ, ստեղիներին առհասարակ բնորոշ մեկ մեծածավալ մեղեղիական հորինվածքի շրջանակներում կարծես մի քանի ինքնուրույն եղանակներ միավորելու և մոդալ շեղումների ու մոդույցիաների հնարավորություններով, այլ նաև՝ «Արիացեալք»-ի մեղեդային շարադրման ընթացքի տեմպային փոփոխությունների մեջ, ինչը հազվադեպ է հանդիպում հոգևոր երգարվեստում, հատկապես շարականերգության մեջ: Այդ երևույթը պարզորոշ ի հայտ է գալիս, եթե դիտարկում ենք շարականի բանաստեղծական բնագիրը՝ տուն առ տուն, պահպանելով տեմպային փոփոխությունների ցուցիչները.

*Շարական սրբոց Վարդանանց  
«Արիացեալք առ հակառակն»  
Ծանր ԴԿ ստեղի<sup>104</sup>*

<sup>103</sup> Կոստանեանց Կ. Տեր Պետրոս Ա Գետադար, էջ 48:

<sup>104</sup> Շարական, էջ 889-890:

**Ծանր.-** Արիացեալք առ հակառակսն  
Քաջութեամբ առնուլ ըզվրեժ խարեւութեան,  
Հանճարեղ ի հասուցումըն դաւանաց,  
Զամբարքտացն արդարադատ չափմամբ,

**Ծանր.-** Զորականք յաղթողք  
Պրսակեալք ի Քրիստոսէ:

**Չափ.-** Փոխանակեալք գունայնութիւնս  
Ընդ ճշմարիտ յուոյ անսահութեանն:

**Ծանր.-** Փափազանաց

**Չափ.-** Ճերոց առիք բզկատարումըն,  
Մաքրիլ արեամբ յաղտոյ մեղաց տըլմոյ:

**Ծանր.-** Զորականք յաղթողք  
Պրսակեալք ի Քրիստոսէ:

Հայցեցէք զիսաղաղութիւն,  
Ճշմարիտ վրկալք Սըրբոյ Երրորդութեանն,  
Նեղելցու յանօրինաց բրոնութենէ,

**Չափ.-** Զի ցընծասցէք յաղթանակաւ  
Մարտի Ճերոյ,  
Նահատակք յարգոյք:

**Ծանր.-** Զորականք յաղթողք  
Պրսակեալք ի Քրիստոսէ:

Այսպիսով, շարականի երեք տներից բաղկացած տեքստը, դատելով երաժշտական բաղադրիչի տեմպային և մոդուլյացիոն ընթացքից, փաստորեն ներկայացնում է եռմասանի մի ձև, որտեղ ծայրի մասերն ընթանում են «ծանր» շարժումով, իսկ միջին մասը բնորոշվում է «չափավոր» և «ծանր» տեմպերի ձկուն փոփոխականությամբ ստեղծելով երգասացության բավական ծավալուն մոնողիսկան մի հորինվածք:

Պետրոս Գետադարձի վերը դիտարկված շարականք Սըրբոց Վարդանանց կանոնում նախորդում է Ներսէս Շնորհալու հանրահայտ «Նորահրաշ պսակաւոր»-ին: Ինչպես ենթադրում է վաս-

տակաշատ երաժշտագետ Ն.Թահմիզյանը, հետագա դարերում «Արիացեալք»-ը կրել է նաև վերջինիս եղանակավորման ազդեցությունը<sup>105</sup>, մանավանդ որ երկուսն էլ ծավալվում են ձայնեղանակային նույն ոլորտում՝ «Նորահրաշ»-ը՝ ԴԿ դարձվածքում, իսկ «Արիացեալք»-ը՝ ԴԿ I Ստեղիոսի: Ի դեպ, հ. Ղ. Ալիշանը «Արիացեալք»-ը համարում էր Ներսէս Շնորհալու գործը<sup>106</sup>: Նույն կարծիքին էր նաև Ե. Տնտեսյանը<sup>107</sup>, հավանաբար, հետևելով Կիրակոս Գանձակեցու հաղորդած տեղեկությանը<sup>108</sup>: Սակայն ժամանակակից հետազոտողների մեծ մասը հակված է տվյալ շարականի հեղինակային պատկանելության հարցը լուծել Պետրոս Գետաղարձի օգտինի<sup>109</sup>:

Այսպիսով, երկու կաթողիկոս հեղինակների՝ Վարդանանց հիշատակը հավերժացնող և նույն ձայնեղանակում ծավալվող շարականները հանուում են որպես հայ հոգևոր մոնողիկ երգարվեստի հոյակերտ մի դիպտիխ, ներդաշնակորեն լրացնելով միմյանց: Ստորև մեջբերում ենք նաև Ներսէս Շնորհալու «Նորահրաշ պատկանը» շարականը՝ Միքայել Վարդանանց կանոնի մասին լիարժեք պատկերացում տալու համար.

<sup>105</sup> Տէ՛ս Թահմիզյան Ն. Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դարերում, Երևան, 1985, էջ 236-237:

<sup>106</sup> Տէ՛ս Ալիշան Ղ. Ներսէս Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 82:

<sup>107</sup> Տէ՛ս Տնտեսեան Ե. Նկարագիր Երգոց Հայաստանեաց սուրբ Եկեղեցւոյ, Բ տպ., Խորանպուկ, 1933, էջ 137:


<sup>108</sup> Տէ՛ս Վիլակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխ. Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 119:

<sup>109</sup> Տէ՛ս Թահմիզյան Ն. Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դարերում, էջ 233-239, տէ՛ս նաև մեր հոդվածը՝ Անիի երաժշտական մշակույթը և նրա հետ կապուած շարականագիրները, «Բազմավեպ», 1995, էջ 205-207:


Օրինակ 7

«Արիացեալք առ հակառակն»

Օրհ. Ծանր. - ԴԿ Ստեղի



вр  
 վրեմ  
 խա  
 պլ  
 բեան,  
 հան - ճան  
 բեր  
 ի  
 հան - ւաս - ցու  
 մըն  
 նացն  
 զամ - րա - բու - տացն  
 ար - դա - րա - դա  
 րա - դատ  
 չափ  
 մամբ:  
 զօ<sup>j</sup>  
 րա  
 կամբ



Օրինակ 8  
«Նորափառ պսակաւոր»

*Զափառը*

Անդրեաս Մանուկյանը և Հայաստանի պատմությանը համապատասխան աշխարհական պատմությունները կազմություն են:

Սեղբերենք նաև Պետրոս Գետադաձի «Ստուգութեամբ տեղեկացեալ» սրբոց Սուրբիասեանց «մանկունք» շարականը.

### Օրինակ 9 «Ստուգութեամբ տեղեկացեալ».

*Ծանոթ*

The musical score consists of ten staves of Armenian music. Each staff begins with a treble clef, a key signature of one sharp (F#), and a common time signature. The lyrics are written in Armenian characters below each staff, corresponding to the musical notes. The lyrics are as follows:

- Ստու - գու - թեամբ տե - ղեկաց - եալ
- կա - ցա - ցամբ
- իար - ցա մե - լով
- զա - նար - զա
- բլե,
- մի - լու - ցիր լուա
- որի - անսամ լուա
- մի կաց - ցիր
- ի անդ ան - զըն սոր -
- րու - ս - թեամբ:

Ուշագրավ է, որ ինչպես հստակ երևում է այս շարականի մեղեդու վերլուծությունից, այն բացահայտ ընդհանրություններ ունի Պատուարագի «Ամէն. Հայր սուրբ» պրբասացության հանրածանոթ ելեկջների հետ: Համեմատության համար մեջբերենք վերոհիշյալ սրբասացությունը:

**Օրինակ 10**  
«Ամէն: Հայր սուրբ»

Մեջբերված երկու երգասացությունների մեղեդիների ընտրյունն ի հայտ է բերում նրանց աներկրա ընդհանրությունները: Նույնն է ձայնեղանակը՝ F2-ի ստեղի, պարզորոշ նշմարվում են ելեկջային նմանատիպ դարձվածքները և այլն: Նմանատիպ, ժամանակակից լեզվով ասած, remake-ները հաճախ են հանդիպում հայ հոգենոր երգարվեստում՝ հավաստելով այն իրողությունը, որ գեղարվեստականորեն, մեղեդիական հորինվածքի տեսակետից առավել հաջողված, եթե չասենք՝ բարձրակետային դրսնորում ստացած երգասացությունները դարեր շարունակ չափանմուշ են ծառայել հաջորդ սերունդների ստեղծագործողների համար:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԸ ՇԱՐԱԿԱՆԱԳԻՐ ԵՎ ՏԱՂԱՍԱՑ

Հայ մշակույթի Բագրատունյաց հարստության շրջանի փայլուն ներկայացուցիչներից է Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (980-1058), որի գրական ժառանգությունը շարունակում է գրավել ուսումնասիրողներին: Նա եղել է Անիի մշակութային մշնոլորտի վրա ներազդած այն գործիչներից, որոնք հանդիսացել են զարգացած ավատադիրության շրջանը բնորոշող նոր մտավոր հոսանքի արտահայտիչները:

Գրիգոր Մագիստրոսի բազմակողմանի ստեղծագործական գործունեությունն ընդգրկում էր նաև երաժշտական արվեստը: Ուստի հետազոտական չափազանց գրավիչ խնդիր է Գրիգոր Մագիստրոսի սեփական երաժշտական հորինումների հարցը: Ինչպես արդեն նշվել է, եկեղեցին հազվադեպ է կանոնակարգել աշխարհիկ հեղինակների ստեղծած հոգևոր երգերը<sup>110</sup>: Ահա այդ բացառիկ դեպքերից է Գրիգոր Մագիստրոսին վերագրվող նաշինավակատյաց Եօրփա «Զորս ըստ պատկերի Քում» ԳԶ ողորմեան: Բոլոր ցուցակների կազմողները (բացառությամբ այն հեղինակների, որոնք հատուկ չեն անդրադարձել այդ շարականին,

<sup>110</sup> Շարակնոցում գրանցված է ընդամենը երկու նման դեպք. բացի Գրիգոր Մագիստրոսից, դա VIII դ կին երգահան Խորովվիդուկս Գողթեցու արդեն նշված մերքն է կամ Գովքը, որի մասին տե՛ս մեր հոդվածը՝ «Վկայաբանութիւն և շարականներութիւն. Հայկական Ուժային ԴԿ դարձուածքի առեղծուածք, ՀՀ, հ. ԲԳ, Պէլյութ, 2003, էջ 163-175, տե՛ս նույնը նաև ուսերեն՝ Մարտirologia и гимнография: загадка “дарцвацка” Четвертого побочного гласа армянского Октоиха, Мартироология и гимнография: загадка “дарцвацка” Четвертого побочного гласа армянского Октоиха, “Устная и письменная трансмиссия церковно-певческой традиции. Восток-Русь-Запад”, сб. “Гимнология”, вып. 5, М., 2008; сс. 124-132;և ֆրանսերեն՝ L'hagiographie et l'hymnographie: le Darc' wac'k de Quatrième mode plagal de l'Octoéchos arménien, REArm, 30, Paris, 2005-2007, pp. 411-418.

ինչպես Սարգիս Երեցը և Առաքել Սյունեցին) միահամուր են տվյալ շարականի հեղինակի հարցում, ինչպես, օրինակ, Գրիգոր Տաթևացին. «Զորս ըստ պատկերին՝ Գրիգոր Մագիստրոս»<sup>111</sup>, Ստեփանոս Զիգ Չուղայեցին. «Գրիգոր Մագիստրոն՝ զԼստ պատկերին»<sup>112</sup>, Հակոբ Սսեցին. «Խաչ կենարարըն Մագիստրոս, Զորս ըստ պատկերին նորա ի հոս»<sup>113</sup>, Անանունը. «Գրիգոր Մագիստրոսն՝ զԶորս ըստ պատկերին, զոր այլը Խսահակայ Զորափորեցոյ տան»<sup>114</sup>: Իսկ Հովհաննես Վանականն իր «Հարցմունք եւ պատասխանիք»—ում անդրադարձել է այդ շարականին առանձին պարբերությամբ, այսպես. «Հարց. Զորս ըստ պատկերի [ո՞] ստեղծեր: Պատասխան. Մագիստրոս Գրիգոր (...»<sup>115</sup>:

Չնայած դրան, շարականագիտության մեջ եղել է նաև այլ տեսակետ, ըստ որի տվյալ շարականը ոչ թե Գրիգոր Մագիստրոսի, այլ VII դարի իշխան Աշոտ Պատրիկ Բագրատունու գործն է<sup>116</sup>: Այդ տեսակետը հիմնված է Վարդան Արևելցու «Պատմութիւն»—ից քաղված միակ իիշատակության վրա, որը լայն տարածում է ստացել Գ. Ավետիքյանի հեղինակության շնորհիվ<sup>117</sup>: Նույն տեսակետը եռանդրուն կերպով պաշտպանել է և Կ. Կոստանյանցը՝ այդ հարցին նվիրելով առանձին հոդված, որին կանդրադառնանք քիչ ավելի ուշ<sup>118</sup>: Այսինչ Ս. Աբեղյանը հետևել է

<sup>111</sup> Տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ.Ա, Երևան, 1959, էջ LXVII:

<sup>112</sup> Նույն տեղում, էջ LXXI:

<sup>113</sup> Նույն տեղում, էջ LXXXIV:

<sup>114</sup> Նույն տեղում, էջ LXVIII:

<sup>115</sup> Ս.Ս, ձեռ. 5611, ԺԳ դ, էջ 111բ:

<sup>116</sup> Այդ տեսակետը պաշտպանել են, օրինակ, Վ. Կոստանյանը (տե՛ս նրա «Հին իիշատակը» հոդվածը, «Արարատ», 1897, օգոստոս, էջ 289-343), Գր. Հակոբը (տե՛ս նրա «Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, Ե-ԾԵ դդ.» մենագրությունը, Երևան, 1980, էջ 203) և Ն. Թահիմիզյանը (տե՛ս նրա «Ներսես Շնորհալին՝ երգահան և երաժիշտ», Երևան, 1973, էջ 20, նաև՝ «Ուկեփորիկ. Հայ երգի գոհարներ», Երևան, 1980, էջ 24 և 33):

<sup>117</sup> Տե՛ս Ավետիքյան Գ. Բացասորութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 521-524:

<sup>118</sup> Տե՛ս Կոստանյանց Կ. Հին իիշատակը, «Արարատ», 1897, օգոստոս, էջ 289-343:

շարականագիրների միջնադարյան ցուցակների ընձեռած տվյալներին՝ ըստ երևոյթին արժանահավատ համարելով Գրիգոր Մագիստրոսին վերաբերող տեղեկությունը<sup>119</sup>: Անցյալ դարի 70-80-ական թվականներին երաժշտագետ Ն. Թահմիզյանը գիտական շրջանառության մեջ դրեց այն պնդումը, թե Գրիգոր Մագիստրոսը հեղինակել է ոչ թե Խաչի նավակատյաց Եօրվա վերոհիշյալ ողորմեան, այլ նույն կարգի Դ օրվա «Խաչն կենարար» ԲԿ օրինարքունը<sup>120</sup>: Նույնը կրկնեց նաև շարականների ժանրին նվիրված իր ուսումնասիրության մեջ գրականագետ Գր. Հակոբյանը ավելացնելով, որ այդ փաստը պարզապես գրիշների անփութության հետևանքով սխալ է արձանագրվել<sup>121</sup>: Սակայն այդ պնդումները նորություն չեն պարունակում, հեղինակներից ոչ մեկն այս կապակցությամբ որևէ աղյուր կամ փաստարկ չի բերում՝ կուրորեն հետևելով Գ. Ավետիքյանի տեսակետին:

Բնական է, որ տվյալ հարցին անդրադառնալիս նախևառաջ դիմեցինք Գրիգոր Մագիստրոսի «Թղթերի» առաջին հրատարակող և գիտակ, նրա կյանքին և գրական ստեղծագործությանը նվիրված բովանդակալից առաջարանի հեղինակ Կարապետ Կոստանյանցի հոդվածին: Այս հոդվածում Կոստանյանցը անդրադարձել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի զանձատանը պահպող Ամենափրկիչ Կոչվոր բյուզանդական սրբապատկերին, որը, ըստ ավանդության, Հայաստան է բերվել VII դարում: Այդ սրբապատկերի պատմույթյանը և նրա հետ կապված հիշյալ շարականի ստեղծմանն առնչվում են երկու մեծատոհմիկ իշխանների՝ Աշոտ Պատրիկ Բագրատունու և Գրիգոր Մագիստրոս Պահլավունու անունները: Կոստանյանցի հոդվածի ողջ պարուն, վկայակոչված մատենագրական աղյուրները հանգում են մի բանի՝ «Զորս ըստ պատկերի Քում» շարականի հեղինակն է Աշոտ Պատրիկը:

<sup>119</sup> Տե՛ս Աքեղյան Ս. Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 50:

<sup>120</sup> Տե՛ս Թահմիզյան Ն. Ներսես Շնորհալին՝ երգահան և երաժիշտ, էջ 20, տե՛ս նաև «Ուկեփորիկ», էջ 24 և 33:

<sup>121</sup> Տե՛ս Հակոբյան Գր. Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ, Ե-ԾԵ դր., Երևան, 1989, էջ 203:

Ուշադիր հետևենք հոդվածում արծարծված աղբյուրներին՝ դիմելով նաև այլ՝ մեզ ծանոթ բնագրերի տվյալներին:

Պատկերամարտության շրջանին պատկանող Ամենափրկիչ սրբապատկերի Հայաստան բերելու ամենավաղ հիշատակությունն առկա է VIII դարի պատմիչ Ղևոնդ Վարդապետի մոտ, որը հայտնում է Աշոտ Պատրիկի մասին. «Եւ շիներ զեկեղին Դարիւնից յիւրում ոստանին, եւ զկենդանազքեալ պատկեր մարդեղութեանն Քրիստոսի ածեալ ի մտիցն արեւու մեծասրանց օրութեամբ՝ հանգուցաներ ի նմա, եւ նորա անուամբ զեկեղին անուանեաց»<sup>122</sup>: Ղևոնդ պատմիչի խոսքերը գրեթե նոյնությամբ շարադրել է Ստեփանոս Ասողիկը. «Աշոտ պատրիկ, այր երեւեի, ուսումնասեր եւ լի երկիւլին Աստուծոյ, որ շինեաց զեկեղին Դարիւնից եւ զկենդանազքեալ պատկեր մարդեղութեանն Քրիստոսի ածեր ի մտիցն արեւու, մեծասրանց օրութեամբ հանգուցաներ ի նմա, յորոյ զեկեղին անուանեաց յանուն»<sup>123</sup>: Հաջորդ պատմիչը, ով հիշատակում է այդ փաստը, Թովմա Արձրունին է. «... Բարձրաբերձ եկեղեցին, որ յանուն Փրկչին մերոյ շինեալ էր յիշխանէն Բազարատայ, ի ծախս մեծամեծ զանձուց, իբրեւ երեք հազարաց»<sup>124</sup>: Առայժմ շարականի մասին ոչ մի հիշատակության չենք հանդիպում:

Ժամանակի ընթացքում Դարունիք (Դարոյնք, Դարիւնք, Դարօնք) եկեղեցին անշքացել, անկում է ապրել, իսկ զիսավորն այն է, որ սրբապատկերը փոխադրվել է Գառնիից ոչ հեռու գտնվող Հայոց Թառի կամ Հավուց Թառի վանք: XI դարում Գրիգոր Մագիստրոսը նորոգել է այդ վանական համալիրը, մասնավորապես Ամենափրկիչ եկեղեցին և ընծայել նրան փրկչական պատկերը: Այդ փաստը վավերացված է Հավուց թառի հայտնի արձանագրության մեջ, որը և մեջբերել է Կոստանդնուպոլիս:

<sup>122</sup> Տե՛ս Պատմութիւն Ղետանդեայ մեծի վարդապետի հայոց, Բ տպգր., Ս. Պետերբուրգ, 1887, էջ 16:

<sup>123</sup> Տե՛ս Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողիկան Պատմութիւն տիեզերական, Բ տպգր., Ս. Պետերբուրգ, 1885, էջ 122-123:

<sup>124</sup> Տե՛ս Պատմութիւն տաճին Արձրունեաց ի Թովմայ վարդապետէ Արձրունուց, Կ. Պոլիս, 1852, էջ 533:

ՆԿԲ (1013 թ.), ի բազաւորութեանն Գագկայ եւ ի հայրապետութեան տէր Սարգսի, ես՝ Գրիգոր Մազհատրոս վերստին շինեցի գեկեղեցին յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց, (...) եւ ի նաւակատիս տաճարիս, զոր շինեցաք, ընծայեցաք զիայրենիս մեր ս. եկեղեցիս որ է Հայոց Թառ, հանգստարան եւ օթարան անձեռագործ առարք պատկերին Յիսուսի Քրիստոսի, որ ի փայտին, խնդրելին Յահաննու ս. աւետարանչին հրամանաւ Մօր Տեառն մերոյ ս. Աստուածածնին եւ, նորոգեալ հաստատեցաք վերստին ս. ուխտս վերջինս քան զառաշինն. աստ եղաք զիմն հաւատոյ հիման ս. եկեղեցւոյ: Գրիգոր, Վահրամ պատանին»<sup>125</sup>: Ինչպես արդարացիորեն նկատել է Կոստանյանցը. «Վերջինս քան զառաշինն. աստ եղաք զիմն հաւատոյ հիման առարք եկեղեցւոյ» տողը գրեթե նույնությամբ առնված է «Զորս ըստ պատկերի Քում» շարականից<sup>126</sup>: Հարց է ծագում. արդյո՞ք դա մեջբերում է, թե՞ հենց իր՝ Գրիգոր Մազհատրոսի հորինած երգասացության մի հատված: Կոստանյանը մանրամասն վերլուծում է շարականի բովանդակությունը, ուստի մեջբերենք նրա գրական տեքստը ամբողջությամբ: Այն չորս տնկից բաղկացած ազատ բարդունյա խառը տաղաչափությամբ գրված տիպական կցուրդներից է, որ բազմատուն կացուրդների հետ մեկտեղ կազմում էին կանոնի երգաշարի բաղադրամասերը:

*Զորս ըստ պատկերի Քում ստեղծեր,  
Նորոգելով քեզ տաճարացուցեր,  
Զնորոգեալս ի մենց զգուաճարս  
Ընկալ քեզ ի բնակութիւն:*

*Որ շնորհես մեզ կենաց տուող  
Զկենդանազիր քո ծառայական կերպի,*

<sup>125</sup> Կոստանեանց Վ. Ճին իիշատակը, էջ 341: Տէ՛ս նաև Սիմեոն կաք. Երևանցւոյ Զամբո, Վաղարշապատ, 1873, էջ 276: Ալիշան Ղ. Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 354-355: Ցավեկիտեանց Գ. Հասուց Թաղի Ամենափրկիչը և Ամանուի հուշարձաններ հայ արուեստի մէջ, Երևանցւոյ, 1937, էջ 3-6:

<sup>126</sup> Կոստանյանց Վ., նշվ. հոդվածը, էջ 341:

*Բերելով ըզբոլոր ըզվերբերողդ,*

*Ի փառս Սուրբ Երրորդութեանդ:*

*Կեցո զորդի ծառայի քո,*

*Զոր ի Հոռվմայ զահիցըն վերապատուեցեր,*

*Ուր եղին զվեմն հաւատոյ հիման սուրբ եկեղեցոյ:*

*Որ ըզվերջինըս զայս հրաշազարդեցեր,*

*Քեւ չափ բնակչութեամբ հիմնափայլեցեր,*

*Ըզանձալի եւ ըզփայլեալ փառքս տանս*

*Այս վերջինս քան զառաջինն<sup>127</sup>:*

Շարականի բովանդակությունը նույնպես տարակուսանքների տեղիք է տվել, հատկապես նրա երրորդ տունը՝ «Կեցո զորդի ծառայի քո» և այլն։ Ավետիքյանը, մեկնելով շարականիս բովանդակությունը, փորձել է պարզել, թե ում որդու մասին է խոսքը. Աշոտ Պատրիկի, թե՝ Գրիգոր Մագիստրոսի<sup>128</sup>. Ակներև է, որ Ավետիքյանը, լուծելով հարցը Աշոտ Պատրիկի օգսին, վկայակոչել է Վարդան Արևելցու հաղորդած, մեր կարծիքով, թյուր տեղեկությունը. «Աշոտոյ, որ շինեաց զԴարօնից եկեղեցին յանուն փրկչական պատկերին, զոր երեր որդի նորա յարեւմտից մասամբ. եւ ի նաւակատիսն երգեաց Զորս ըստ պատկերին»<sup>129</sup>: Այստեղից է սկսվել երկու իշխանների հետ կապված խառնաշփոթը: Ինըը՝ Կոստանյանը, մեջբերելով Վարդան պատմիչի տվյալ հատվածը, ընդունել է, որ «այս տեղեկությունը չենք գտնում մյուս հիշատակարանների մեջ Վարդանից առաջ և հետո»<sup>130</sup>, սակայն սեփական վարկածի հրապուրանքն այնքան մեծ է եղել, որ նա անուշադրության է մատնել այդ հանգամանքը: Հավանական է, որ Վարդան Արևելցու սխալը խորացել է իր

<sup>127</sup>Տե՛ս Շարական, էջ 495:

<sup>128</sup>Ավետիքեան Գ. Բացատրութիւն շարականաց, էջ 522:

<sup>129</sup>Հաւաքառմն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 71:

<sup>130</sup>Տե՛ս Կոստանյան Կ., նշվ. Խորվածը, էջ 342:

ուսուցիչ Հովհաննես Վանականի «Հարցմունք եւ պատասխանիք»-ում տեղ գտած անձշտության ազդեցության տակ, այն ուղղելու ցանկությամբ, բայց ստացվել է հակառակը:

Հայտնի է, որ շարականազիրների մեջ հասած հնագույն համառոտ ցուցակը պատկանում է Հովհաննես Վանականի գրչին: Այն գետեղված է նրա իբրև դասազիրք ծառայած «Հարցմունք եւ պատասխանիք» վերնազիրը կրող հարցարանում<sup>131</sup>: Այդ ցուցակում Գրիգոր Մագիստրոսի անունը բացակայում է: Սակայն ցանկանալով, հավանաբար, շարադրել սեփական տեսակետը և իմացածը մեզ հետաքրքրող շարականի վերաբերյալ կամ բավարարել դրա հետ կապված հարցումները, Վանական վարդապետը մեկ այլ տեղում անդրադարձել է տվյալ շարականին առանձին հարց ու պատասխանի ձևով. «Հարց. Չորս ըստ պատկերի [ո՞] ստեղծեք: Պատ. Մագիստրոս Գրիգոր Դարուն եկեղեցի է շինել եւ ծախիւք պատկեր բերել եւ անդ եղեալ. եւ զկենդանազիր անարատ ծնողի քո արկանեմ: Եւ Թումա պատմազիրն յիշել է զեկեղեցին: Տէր Վահրամ կարողիկոս որդի է նմայ»<sup>132</sup>:

<sup>131</sup> Տէ՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սրբոց Հակոբեանց վանքի, կազմեց՝ Նորայր եպս. Պողարեան, Երուսաղէմ, հ. Դ, 1969, էջ 485:

<sup>132</sup> ՍՍ, ձեռ. 5611, ծգ դ, էջ 111թ: Հովհաննես Վանականի «Հարցմունք և պատօսխանիք»-ում առկա են նաև մի քանի այլ ուշագրավ վկայություններ շարականների հեղինակների մասին, որոնք բացակայում են մյուս ցուցակների մեջ, այսպէս. «Յաղագ շարականին թէ ո վ է արարեալ: Որ գծորան հոգոյն արքին յիմանալի աղքիւրէն երգեցին ի ժամանակս ժամանակս: ԶԾնելեան՝ Սովու Քերթողն: ԶՓոխմանն, զԿարդավառն, զՄարգարիցն, և զՎարդասպետացն, զՄելքարն ամենային մինչ յԱռաքելոց Յնհան Մանդակունույ: ԶԱպաշխարությն՝ Մերուա Վարդասպետն: ԶՅարութեան Հարցնակարզն և զրովանդակի Անամիա Շիրակացին: ԶՅարութեան Արինութեանն Է. ձայնն՝ Ստեփանոս Սիմեոնին, և զՎանն՝ Ներսէս Կարողիկոս: ԶՀանգստեանն, զՄարտիրոսացն՝ Պետրոս Կամքածառեցին: ԶԽաչին և զԾկեղեցւոյն՝ տէր Սահակ Կամքածառեցին: ԶԱռաւոռու Եղան և զՃայնից բաժանումն՝ Պարթեն» (Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Սրբոց Հակոբեանց վանքի, հ. Դ, էջ 485): Կամ նաև Շարականցի պատմության անշվլող այլ գրառումներ, օրինակ, «Հց. զՄանկունքն ո վ է սահմանել: Պատ. Եզր Կարողիկոս: Հց. Առաւոռու կանն: Պատ. Գիւտ կարողիկոս որ և զԲարձրացուցեթին ուզել ի Դաւթայ» (ՍՍ, ձեռ. 5611, էջ 76թ):

Ամենայն հավանականությամբ, երկու իշխանների շարականի հեղինակ լինելու հարցը շփորչել է դեռևս միջնադարում: Դրա վառ ապացույցն է Հովհաննես Վանականի հաղորդածը: Մինչև վերջ անաշառ լինելու համար նշենք, որ Վանական վարդապետը թույլ է տվել անձշտություն: Նրա վկայակրչած Թումա պատմագիրը, անկասկած, Թովմա Արծրունին է, որը հիշատակել է Աշոտ Պատրիկի կառուցած եկեղեցին: Միքայել Չամշյանը, ձեռքի տակ ունենալով Վանական վարդապետի «Հարցմունք եւ պատասխանիք»-ի մեկ այլ տարրերակ, տվյալ հատվածը մեջքերել է համալրված տեղեկություններով, ինչը համաձայնեցվում է մեզ ծանոթ ուրիշ աղբյուրի հետ: Ձեռագիրը, որն իր տեսադաշտում է ունեցել Չամշյանը, Գրիգոր Մագիստրոսին է վերագրում նաև Խաչի նավակատյաց Ե օրվա կանոնի տեղ երկնիցը ևս, այսպես: «Զորս ըստ պատկերի քում. եւ գույք երկնիցն. Որ զարդարեաց»<sup>133</sup>:

Աշոտ Պատրիկի և Գրիգոր Մագիստրոսի անունների խառնաշփոթը, մեր կարծիքով, զայիս է նաև որոշ հանգամանքների նմանությունից: Երկուսն էլ պատկանել են նշանակոր իշխանական տոհմերի, եղել են ուսումնասեր, կրթված, կրել են բյուզանդական բարձրաստիճան տիտղոսներ, զորավարներ են եղել, կառուցել են եկեղեցիներ: Բացառված չեն, որ միջնադարյան գրիշները շփորչել են Դարուն և Դարոյնք տեղանունները, ինչը կախված էր նրանց աշխարհագրական գիտելիքներից և անձնական ճամփորդական փորձից:

Վերջապես, չափազանց կարևոր է Հավուց Թառի արձանագրության մեջ հիշատակված տարեթվի ճշտումը: Այդ կապակցությամբ նույնպես եղել են տարբեր կարծիքներ: Որոշ հեղինակներ, օրինակ, Սիմեոն Երևանցին<sup>134</sup>, Ղ. Ալիշանը<sup>135</sup>, նույն Կոստանյանը<sup>136</sup> հակվել են այն մտքին, որ արձանագիրը տեղադրվել է ավելի ուշ, սակայն նրանց շփորեցրել է «Գրիգոր պա-

<sup>133</sup> Չամշյան Մ. Պատմութին հայոց, հ. Բ, էջ 1032:

<sup>134</sup> Տե՛ս Սիմեոն կաթ. Երևանցայ Զամբո, էջ 275-276:

<sup>135</sup> Տե՛ս Ալիշան Ղ. Այրարատ, էջ 355:

<sup>136</sup> Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի Թոթերը, ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, Յառաջաբան, էջ ԼԲ:

տանի» արտահայտությունը, որի տակ ենքաղըվել է ապագա Գրիգոր Վկայասեր կաթողիկոսը: Իմանալով Վկայասերի մահվան թվականը և որոշ մոտավոր հաշվումներ կատարելուց հետո նրանք փակուղու մեջ են ընկել և կանգ առել: Գուցե հենց դա՝ է եղել պատճառը, որ հրաժարվել են կապել շարականի ստեղծումը Գրիգոր Մագիստրոսի հետ և ընծայել են այն Աշոտ Պատրիկին, իսկ «Կեցո զորդի ծառայի քո» սողերը (նաև Վարդան պատմիչի հաղորդածի հիման վրա) նրա որդուն: Թեև Ալիշանը կարծիք է հայտնել, որ արձանագիրը թերի է պահպանվել, և «Գրիգոր պատանի» խոսքերից հետո շարունակություն է եղել: «Գրիգոր» անունը նա դիտել է որպես արձանագրի գրիշ-վարպետի անուն, որը ոչ մի կապ չունի իմադրու առարկա շարականի հետ:

Այդ կծիկը վարպետորեն կարողացավ քանդել Գարեգին Հովսեփյանը ապացուցելով հենց արձանագրության մեջ եղած տեղեկությունների հիման վրա, որ արձանագրությունը տեղադրվել է շատ ավելի ուշ՝ Ամենափրկիչ եկեղեցու վերանորոգությունից հետո՝ 1045 թ., չնայած նրանում, իրոք, հիշատակված է վերանորոգության ավարտելու տարին՝ 1013 թվականը<sup>137</sup>:

Ամփոփելով, մի անգամ ևս ուշադիր քննենք տեսադաշտում եղած տվյալները: Վկայակոչված պատմիչները (Ղևոնի, Ստեփանոս Ասողիկ, Թովմա Արծրունի, նաև Մխիթար Այրիվանեցի), խոսելով Աշոտ Պատրիկին վերաբերող միջադեպի մասին, հիշատակում են նրա կողմից Ամենափրկիչ սրբապատկերի Հայաստան բերելը և այդ կապակցությամբ եկեղեցու շինարարությունը, բայց ոչ շարականի հորինումը: Փաստորեն, առաջին անգամ «Զորս ըստ պատկերի Քում» շարականի մի հատվածը երևում է հենց Գրիգոր Մագիստրոսի Հավուց Թառի արձանագրության մեջ: Այնուհետև՝ 1193 թ. պահպանված հնագույն Շարակնոցում<sup>138</sup>, ապա արծարծվում Վանական Վարդապետի «Հարցմունք եւ պատասխանիք»-ում: Վարդան պատմիչի հաղորդածով

<sup>137</sup> Տե՛ս Յովսեփեանց Գ. Հատուց Թառի Ամենափրկիչը և նմանատիպ հուշարձաններ հայ արվեստում, Երուսաղեմ, 1937, էջ 3:

<sup>138</sup> ՍՍ, ձեռ. 9838, թղ. 94ա:

խախտվում է այն բնական շղթան, որը շուտով վերականգնվում է Գրիգոր Տաքեացու խմբագրած շարականագիրների ցուցակում, և այդպես էլ հարատևում մինչև 1875 թ. տպագրված «Զայնագրեալ շարականը»: Տրամաբանական է եզրակացնել, որ եթե Վարդան Արևելցու «ուղղումը» ճիշտ էր, ապա դա պետք է հաշվի առնվեր շարականի հետագայի բոլոր ցուցակագիրների կողմից: Սակայն այդ բանը տեղի չի ունեցել: Հավանական է, որ Հավուց Թառի արձանագրությունը միակ հավաստի աղբյուրն է, որը կապում է այդ շարականի ստեղծումը Գրիգոր Մագիստրոսի անվան հետ: Անշուշտ, եթե պահպանված լինեին Գրիգոր Մագիստրոսի ժամանակներից առաջ գրված Շարակնոցներ, հարցը կլուծվեր այլ կերպ: Ներկա պայմաններում, սակայն, ինդրի բանալին թերևս պետք է փնտրել դարձյալ շարականի բնագրի մեջ:

Ուշադրություն ենք հրավիրում շարականի առաջին տան և Հավուց Թառի արձանագրության մի բանի դարձվածքների փոխադարձ աղերսների վրա.

*Չորս քստ պատկերի քում ստեղծեր,  
Նորոգելով քեզ տաճարացուցեր,  
Զնորոգեալս ի մէնջ տաճարս  
Ընկալ քեզ ի բնակութիւն.*

«(...) ես, Գրիգոր Մագիստրոս, վերստին շինեցի զեկեղեցին» կամ «նորոգեալ հաստատեցաք» (...) ս. ուխտս: Ակներևաբար, շարականի առաջին տան իսկ մեջ ասվում է վերստին հաստատված, նորոգված եկեղեցու մասին, այլ ոչ թե նոր շինված, ինչպես Աշոտ Դատրիկի դեպքում: Այսինքն, արձանագրության և շարականի հեղինակը նույն անձն է: Հազիվ թե Գրիգոր Մագիստրոսի նման հմուտ քերրողը այս դեպքում մեջքերում աներ ուրիշ հեղինակից: Ավելի հավանական է, որ իր ջանքերով վերականգնված տաճարի նավակատիրի և սրբապատկերի ընծայման առիթով նա, հավուր պատշաճի, հորիներ մի նոր հոգևոր երգ:

Մեր կարծիքով, երրորդ տան մեջ՝ «Կեցո զորյի ծառայիքո», որն այդքան տարակարծությունների առիթ է տվել, Մագիստրոսն ի նկատի է ունեցել ոչ թե իր որդուն, այլ ինքն իրեն։ Ինչո՞վ է դա ապացուցվում։ Ինչպես արդեն նշվել է, հնատիպ Շարակնոցների վերջում սովորաբար գետեղվում է «Ժամանակագրությունը սրբոց վարդապետաց հեղինակաց շարականաց» ցուցակը, որտեղ հիշատակվում են շարականագիրների հեղինակած հոգևոր երգերի ստեղծման մոտավոր կամ ստույգ թվականները, սկսած Սահակ Պարքեից և Մեսրոպ Մաշտոցից մինչև Շարակնոցը եզրափակող հեղինակը։ Կիրակոս Երզնկացին։ Ահա այդ ցուցակներում Գրիգոր Մագիստրոսի անվան դիմաց գրված է 1044 թվականը, որի տակ, անկասկած, ենթադրվում է «Զորս ըստ պատկերի Քում» շարականի ստեղծման տարեթիվը։ Որտեղից է վերցված այդ թվականը, անհայտ է։ Սակայն ցուցակներ կազմողները, հավանաբար, իրենց տեսադաշտում ունեցել են ինչ-որ մատենագրական տվյալներ, որոնք չեն հասել մեզ։ Դա այն թվականն է, երբ Գրիգոր Մագիստրոսը, իրոք, արդեն ստացել էր մագիստրոսի, դուկի տիտղոսները, արժանացել պատկերի և ճանաչման բյուզանդական արքունիքում, ուստի շարականի երրորդ տունը հենց այդ իրադարձությունների մասին է պատմում<sup>139</sup>։

Շարականագիրների ցուցակների հանդեպ ունեցած մեր վստահությունը՝ նաև այլ աղիթներով արդարացված<sup>140</sup>, մղեց մեզ նոր պրատումների, որոնց նպատակն էր (բացի վերոնշյալ երկու երգասացություններից) Շարակնոցում տեղ գտած Գրիգոր Մագիստրոսի կանոնակարգված կամ պարականոն երգասացությունների որոնումը այլ ձեռագրական աղբյուրներում։ Այսպես, Ս.Չամչյանը, ձեռքի տակ ունենալով Վանական Վարդապետի

<sup>139</sup> Սույն շարականի վերաբերյալ տե՛ս նաև մեր հոդվածը՝ Ո՞վ է «Զորս ըստ պատկերի Քում» շարականի հեղինակը, «Էջմիածին», 1997, Դ-Ե, էջ 106-115։

<sup>140</sup> Այդ կապակցությամբ տե՛ս, օրինակ, մեր հոդվածը՝ Ստեփանոս Այունեցի, իրական անձն ու վաստակը (Սյունեցի համանուն երկու երաժիշտների գոյության հարցի շուրջ), Հայ արվեստի հարցեր, գիտական հոդվածների ժողովու, հ. 2, Երևան, 2009, էջ 23-34։

«Հարցմունք եւ պատասխանիք»—ի մեկ այլ տարբերակ, մեջբերել է Գրիգոր Մագիստրոսին վերաբերող հատվածը հավելյալ տեղեկություններով համալրված, որոնք համաձայնեցվում են մեզ ծանոթ ուրիշ աղբյուրի հետ: Ձեռագիրը, որն իր տեսադաշտում է ունեցել Զամշյանը, Մագիստրոսին է վերագրում Խաչի նաևակատեաց Ե. օրվա կանոնի տեր երկնիցը ևս, այսպես. «...շարական Զորս ըստ պատկերի քում. և գտէր երկնիցն. Որ զարդարեաց»<sup>141</sup>: Բացի Վանական Վարդապետի բերած խոսուն վկայությունից, որը մինչև այժմ վրիպել է երածշոտագետների ուշադրությունից կամ միտումնավոր շրջանցվել, մեզ հաջողվեց հավելյալ մատենագրական տվյալներ հայտնաբերել, որոնք թեև նույնպես հրատարակված են, սակայն աննկատ են մնացել: Օրինակ, Զմմառի վանքի մատենադարանի թիվ 71 Շարակնոցն ուշագրավ է շարականների հեղինակներին վերաբերող իր լուսանցագրերով: Այսուեւ Խաչի նաևակատեաց Ե. օրվա կանոնի դիմաց կարդում ենք. «Խաչի նաևակատեաց Ե. աւուրն հարց Այսօր պայծառ և սիւն լրտայ – զիարցս իւր սարաւքն Մագիստրոս ի պատիւ Դարունից եկեղեցւյ»<sup>142</sup>: Արդյոք ի նշ նկատի ուներ միջնադարյան գրիչը «իւր սարաւքն» ասելով:

Խաչի նաևակատեաց Ե. օրվա կանոնի կազմը հետևյալն է.

Օրի. – Զափաւոր–Ծանր. «Ուրախ լեր սուրբ եկեղեցի»: Սահակ Զորափորեցուն վերագրվող հայտնի շարականն է: Կանոնի հաջորդ մասերը, ըստ վերոհիշյալ ձեռագրի, ընծայվում են Գրիգոր Մագիստրոսին, այսպես.

Հարց – ծանր. «Այսօր պայծառ եւ սիւն լրտայ» (5 տուն),

Ողորմեա – չափաւոր. «Զորս ըստ պատկերի քում» (4 տուն),

Տէր երկնից – միջակ–չափաւոր. «Որ զարդարեաց մեծապայծառ փառօք» (3 տուն),

Մանկունք – չափաւոր. «Այսօր ուրախացեալ ցընծան երկնից» (3 տուն):

<sup>141</sup> Տէ՛ս Զամշյան Ս. Պատմութիւն հայոց, հ. Բ, Երևան, 1984, էջ 1032:

<sup>142</sup> Տէ՛ս Ս. վրդ. Քեշիշյան, Ցուցակ ձեռագրաց Զմմառու վանուց, Վիեննա, 1964, էջ 113-115:

Այս համատեքստում միանգամայն հասկանալի է դառնում անանուն խմբագրության շարականագիրների ցուցակի «զոր այլք Բահակայ Զորափորեցոյ տան» արտահայտությունը<sup>143</sup>:

Պակաս ուշագրավ չէ Վիեննայի Միհիթարյան միաբանության մատենադարանի թիվ 202, 1312 թվականի Շարակնոցը, որը հնագույնն է տվյալ հավաքածոյում և օժուլած է «ամեն շարականի հեղինակաց անուններով»<sup>144</sup>: Այստեղ կարդում ենք. «Կանովն սրբոյ խաչին Դ. առուրն. Խաչին կենարար որ եղեւ մեզ փրկութիւն Գրիգորի Մագիստրոսի ասացեալ». Մեր կարծիքով, «Խաչն կենարար» շարականի հետ կապված պնդումը կարելի է կատարել Գրիգոր Մագիստրոսի «Ներբողեան ի Սուրբ Խաչն Քրիստոսընկալ» և «Յաղագս խաչանման զաւագանին»<sup>145</sup> քերթվածները բովանդակությունն ու ոճական առանձնահատկությունները նկատի ունենալով, ինչը մինչ այժմ անտեսվել է ուսումնասիրողների կողմից<sup>146</sup>:

Հետևաբար, շարականագիրների ցուցակներում, որոնք որոշ իմաստով նույնպես կանոնական մի վավերագիր-հիշտակարան էին ներկայացնում, Գրիգոր Մագիստրոսի անվան հիշտակությունը սխալմունք չէ: Նա հանդես է զայխս որպես առնվազն հինգ շարականի հեղինակ՝ ներկայացնելով Ամիկ մշակութային մթնոլորտից սերած շարականագիրների շրջանակը:

Այժմ ներկայացնենք Խաչի վերացման Ե. օրվա կանոնի երաժշտական բաղադրիչը:

Կանոնի օրինությունը, որով բացվում է այդ երգաշարը, Սահակ Զորափորեցու հանրահայտ «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» ԳԶ շարականն է.

<sup>143</sup>Տե՛ս Անասյան Հ. Հայկական մատենագիտություն, հ. Ա, էջ LXVIII:

<sup>144</sup>Տե՛ս Տաշեան Յ. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց ի մատենադարանին Միհիթարեան, Վիեննա, հ.Ա, 1895, էջ 523-524:

<sup>145</sup>Տե՛ս Տաղասացութիւնը Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունայ, Վիեննայի, 1868, էջ 80-92:

<sup>146</sup>Այդ մասին տե՛ս և Խաչի հոդվածում՝ Ամիկ երաժշտական մշակոյթը և նրա հետ կապուած շարականագիրները, Վիեննաիկ, «Բազմավեպ», 1995, էջ 209:

Օրինակ 10

Օրինութիւն. Ծանր - ԳԶ

«Ուրախ լեր սուրբ եկեղեցի»

Ու - րախ լեր  
սուրբ ե - կե - ղե - ցի.  
քան - զի Քրիս - տու ար - քայն երկ - ցից  
այ - սօր պը-սակ - եաց զգ - բեզ խա - չիւն իւ - րով,  
և զար - դար - եաց զա - մու - րզս րու  
սրան - չե - լի փա - որը իւ - րովք:

Կանոնի մյուս բոլոր մասերը, ըստ վերոնշյալ ձեռագրի, պատկանում են Գրիգոր Մագիստրոսի գրչին: Հետաքրքրական է վերլուծել այդ կտորների երաժշտական բաղադրիչը.

Օրինակ 11

Հարց - «Այսօր պայծառ եւ սիւն լուսոյ» Ծանր. - ԳԶ

Ծանր

Այսօր պայծառ եւ սիւն լուսոյ  
լուսակ Ասսա ուսա ծայ յին շնօր հիս սուրբ  
Ասա աղ ուսած հար ցըն մն բաց:  
օրին մետ ցըր ամն նայն գործք տեսան ըզ մեր  
օրին մետ ցըր լու աս ուսա մել բարձր ար բա բաց:

Օրինակ 12

Ողորմեա - «Զորս ըստ պատկերի Քում»

Չափաւոր

Զորս ըստ պատ - կե - - րի քում ստեղ - ծեր,  
նո - բո - զն - լով քեզ տա - ճա - րա - ցու - ցեր,  
զն - բազ - եալս ի մեջ ըզ - տա - ճարս  
լն - կալ քեզ ի բառ կո - - թիմ:

Օրինակ 13

Տէր երկնից. «Որ զարդարեաց մեծապայծառ փառօք»

Սիցակ - չափավոր

Որ - զար - դար - նաց մն ծա - պայ - ծառ - փա - ռօք  
տարք զն - կն դն - ցի ն լու - սա ժն  
բնա - կա - րան կար զնաց խն - րան դա - սոց  
հինչ - տա - կաց, պ - նա  
ա - մն - նայն ա - րա - րածը օրի - նն - ցեր:  
Որ ինք - նա - գոյ իրա - շիւ - բն իիմ - նն - ցոյց ի վի -  
րայ իի - ման տարք ա - տա - րա - րա - րածը օրի - նն - ցեր:

և շնոր - հնաց բա - լու - թին - ի մամ,  
 որդ - ոց մարդ - կան վն - բա - դա - պի ընդ վն - թին զը - ուար - քաննմ:  
 գր ար - մն - նա - կա - լող զօ - բու - թնամբ խ - րտկ ան - ճա -  
 ռն - լի ծագ մամբ տառ - ուա - ծա - պնս ա -  
 ռա - տա - ճնաց ազ - զի մարդ - կան, և պար - զն -  
 նաց շնորս ա - նա - զա - կան ըզ - զնս - տըս պայ - ծատ որ և զարդու  
 և բո - լո - թնամ պը - սա - կըս յան մա - տոյց լու - սացն:

**Օրինակ 14**  
**Մանկունք - «Այսօր ուրախացեալ ցնծան երկնից»**

Չափակոր

Այ - սօր ու - բա - խա - ցեալ ցըն - ճան երկ - մից  
 բազ - նա - թինքն ի նա - ւա - կա - պիս  
 սարք ե - կն դեց - ոյ,  
 բան - զի շնոր - նն - ցաւ մնզ բա - նա - յա - պնս  
 յա - լի - ան - նից ի լա - սա - ւա - բնէ

Այս երգասացությունները քննելիս ակնհայտ է դառնում, որ նրանց միավորում է ոչ միայն շարքի բովանդակությունը, որը հիմնականում խաչի, եկեղեցու, քրիստոնեական առաքինությունների գովաբանությանն է նվիրված, այլ նաև նույն ձայնեղանակային ոլորտին (ԳԶ և ԳԶ դարձվածք) պատկանելու հանգամանքը և որպես հետևանք՝ ի հայտ եկող ելսէջային մեծ ընդհանուրությունը։ Այսինքն, դրանք ի սկզբանե զաղափարված են եղել որպես մեկ երգաշարի իրար հաջորդող և իրար լրացնող երաժշտաբանաստեղծական միավորներ, ինչոք շատ բնական է հիմներգական կանոնի (իբրև ցիկլիկ ժանր) մտահղացքի համար։ Ուստի Գրիգոր Մագիստրոսին այդ կանոնի բոլոր շարականների (բացի օրինությունից) ընծայումը կասկած չի հարուցում։

Բնշպես արդեն նշվել է, Խաչի վերացման Դ. օրվա կանոնի մեջ է գետեղված Գրիգոր Մագիստրոսին վերագրվող մեկ այլ երգասացություն։ Դա «Խաչն կենարար» շարականն է, որը գրված է ԳԶ ձայնեղանակում։


78

Օրինակ 15

Շարական Խաչի վերացման Դ. աւոր

Չափատր.- Դ2

«Խաչն կենարար»



Եվ մեկ այլ՝ չափազանց ուշագրավ մի փաստ. Կոմիտասի դիվանում պահպանվող խազարանական ձեռագրերի թվում են գտնվում «Խազարանութեան պատմական նիւթեր»<sup>147</sup> վերնագրով մի քանի թերթիկներ, որոնցից և քաղել ենք մեզ հետաքրքրող տեղեկությունը.

«Ճառնատիր. 646-ից յետոյ»: Այստեղ ժամանակագրական կարգով բերվում են V-XIV դարերի շարականագիրների անունները և Շարակնոցում վավերացված նրանց երգասացությունները: Հասնելով Անիի շրջանի հեղինակներին կարդում ենք.

«Պետրոս Գետադարձ (ԺԱ դարում)

1. Մարտիրոսաց եւ ննջեցելոց մեծ մասը շարականների»<sup>148</sup>:

Հետաքրքրական է, որ հիշատակված չէ Վարդանանց կանոնի «Արիացեալք»-ը:

<sup>147</sup>Տե՛ս Կոմիտաս Վարդապետ, Ուսումնասիրութիւններ և յօդուածներ երկու գրքով, Գիրք Բ, Երևան, 2007, էջ 457-461:

<sup>148</sup> Հավանարար, պետք է լինի «... շարականների մեծ մասը»:

## «Ակոր ԺԱ դարում

1. «Անսկիզբն» <Աստուած սկիզբն արարչական>  
(Ննջեցելոց շարական)»<sup>149</sup>:

Ենթադրելի է, որ խոսքն այսուեղ Հակոր Սանահնեցու մեկ այլ՝ «Յանսկզբնական ծոցոյ հօր» շարականից տարբեր մի երգասացության մասին է, որը մոտ է Վերջինիս և թեմայի, և՝ ննջեցելոց կարգում զետեղված լինելու առումներով:

## «Մարգիս Սեւանեցի

1. «Մարսափելի որոտմամբ եւ ահազին զօրութեամբ»<sup>150</sup>:

Յովհաննես Սարկաւագ վարդապետ ԺԲ դար  
(† 1139 կամ 1129)

1. Ղետնդեանց «Պայծառացան»<sup>151</sup>

Հետաքրքրական է, որ Յովհաննես Սարկավագի անվան տակ Կոմիտասը զետեղել է միայն Անոնյանց կանոնի «Պայծառացան այսօր» ճաշուն, այսինքն՝ միայն այն շարականը, որը հիշատակվում է Շարակնոցի հեղինակների միջնադարյան ցուցակների մեծամասնության մեջ:

Իսկ ահա Գրիգոր Մագիստրոսի անվան տակ կարդում ենք հետևյալը.

## «Գրիգոր Մագիստրոս ԺԱ դարում

1. Պահոց Բ. Կիրակէի»<sup>152</sup>:

<sup>149</sup> Կոմիտաս վարդապետ, նշվ. աշխ., էջ 458:

<sup>150</sup> Նոյն տեղում:

<sup>151</sup> Նոյն տեղում:

<sup>152</sup> Նոյն տեղում:

Սակայն Կոմիտասը չի նշել, թէ կոնկրետ որ շարականը նկատի ունի: Պահոց Բ. կիրակիի կանոնի կազմը հետևյալն է.

Օրհ. ԴԶ. - «Որ գօրէնս սըրբութեան պահոց» (6 տուն),

Հրց. ԱԿ. - «Որ յառաջ քան զյահիտեանս անժամանակ» (6 տուն),

Մեծ. ԱԿ. - «Որ ըզկեանքն անմահարար» (3 տուն),

Ողբ. ԱԿ. - «Որ առաքեցար ի հայրական ծոցոյ» (3 տուն),

Տէր. ԱԿ. - «Որ անմարմոց հոգեղինաց դասակցեցեր» (3 տուն):

Թվում է, թէ կանոնի հարցը, մեծացուցեն, ողորմեան և տէրերկնիցը, որոնք ծավալվում են ԱԿ-ում, պատկանում են միևնույն հեղինակի գրչին, իսկ մենք զիտենք, որ Պահոց կիրակիների շարականների գերակշռող մասի հեղինակը Ներսես Շնորհալին է, ով վերանայել է Շարակնոցի երաժշտական բադայրիչը համարելով այն բազմաթիվ սեփական հորինումնեռով: Սակայն նա պահպանել է իրեն նախորդող հեղինակների լավագույն ստեղծագործությունները: Կարելի է ենթադրել, թէ դրանց թվում եղել են ինչպէս V-IX դդ. շարականագիրների գործերը, այնպէս էլ՝ Կիլիկյան Հայաստանի թագավորության հեղինակներին անմիջականորեն նախորդող Անիի հետ կապված երգահանների երկերը: Անկասկած, Ներսես Շնորհալին մեծ հարգանք պետք է տածեր Պահլավունիների տոհմի նշանավոր ներկայացուցիչ, իր ազգական Գրիգոր Մագիստրոսի ստեղծագործական վաստակի հանդեպ: Մեր կարծիքով, շարքի գեղարվեստական ամբողջականությունը պահպանելու նպատակով Շնորհալին բոլոր վերոնշյալ երգասացություններում հետևել է մեկ՝ ԱԿ ձայնեղանակին, այնինչ շարքի ներածական երգասացությունը հորինված է ԴԶ-ում<sup>153</sup>: Այսպիսով, ստեղծվում է գեղար-

<sup>153</sup> Ն. Թահմիզյանը, թվելով Շարակնոցում Ներսես Շնորհալու ստեղծագործությունները Աղոմացից երկրորդ Կիրակիի Կանոնը՝ օրինությունը, հարցը, մեծացուցեն, ողորմեան և տէրերկնիցը համարում է Շնորհալու գրչի ար-

վեստական հակադրություն, կոնտրաստ, ինչը հոգևոր մոնողիկ երգաստեղծության ձայնեղանակային մտածողության պայմաններում ամենազորեղ արտահայտչամիջոցներից էր: Դրանով իսկ շարքի առաջին երգասացությունը՝ օրինությունը, առանձնանում է ստանալով հատուկ նշանակություն, ինչը համեմատելի է բյուզանդական կանոնի իրմոսին: Այդ ամենը մտածել է տախի, որ նրա հեղինակը տարբեր է: Ուստի Կոմիտասի աղբյուրը գուցեն հավաստի տեղեկություն է պարունակել:

### Օրինակ 16

#### «Որ զօրէնս սըրութեան պահոց»

Որ զօ - րէ - նը սըր - րու - թան պա - հոց նախ ի  
որախ - տին ա - թան ղե - ցըր, զօր  
ոչ պա - հե - լով նա - խաւ  
սեն - ծի - ցը ճա - շակ - մամբ պըտ - դոյն ճա - շա - կե -  
ցին զգ դառ - նու - րին մն - դայ է ու նա -  
հու, վասն ո - րայ շնոր - հեա մնզ աւ  
ու ճա - շա - կել զգ քաղց - րու - րին  
բաց պատ - ի բա - նաց:

գասիրը. տէ՛ս Թահիմիզյան Ն. Ներսես Շնորհալին՝ երգահան և երաժիշտ, Երևան, 1973, էջ 38:

Մեջբերենք նաև շարականի բանաստեղծական բնագիրը.

*Որ զօրէնս սըրբութեան պահոց  
Նախ ի դրախտին աւանդեցեր,  
Զոր ոչ պահելով նախաստեղծիչըն  
Ճաշակմամբ պըստոյն ճաշակեցին  
Ըզդառնութիւն մեղաց եւ մահու,  
Վասրն որոյ շնորհեայ մեզ Տէր  
Ճաշակել ըգբաղցրութիւն  
Քոց պատուիրանաց:*

*Որ զանազան վիրօք մեղաց  
Հարաք հոգիս ի թըշնամնոյն  
Եւ ի բազմապատիկ հիւանդութիւնս  
Կարօտացաք մարդասիրիդ  
Բառնալոյ ըզցավըս մեր,  
Վասն որոյ բբժըշկեա ըզմեզ  
Քրիստոս որպէս մարդասեր:*

*Որ եկիր ի փրրկութիւն մարդկան  
Ծննդեամբ կուսին Սարիամու  
Եւ կենդանարար Քո Յարութեամբդ  
Հրաւիրեցեր ըզմահացեալսն  
Ի Յարութիւն անմահութեան,  
Վասն որոյ աղաչանօք մօր Քո  
Կեցո զմեզ Փրկիչ:*

*Որ գերագոյն փատօք բարձրացուցեր  
Զմանկունս եկեղեցւոյ Քո Քրիստոս,  
Խոնարհութեան Քո ճանապարհաւ  
Առաջնորդելով ի յերկնային  
Վարքս հրեշտակաց,  
Աղաչեմբ առաջնորդեա մեզ  
Տէր ի Յարութիւն:*

Որ գդառնութեան պըտղոյ ճաշակն,  
 Որով մեռաք արդարութեան պահելով  
 Քո քառասնօրեայ  
 Փոխեցեր ի քաղցրագոյն  
 Օրինաց Քոյ ճաշակումն  
 Աղաշեմք արբո մեզ Տէր  
 Չուրախարար սիրոյ Քո քածակ:

Որ անապական ծննդեամբրդ Քո լուծեր  
 Զերկունըս նախամօրն  
 Մարիամ մայր Աստուծոյ,  
 Բարեխօսեա առ միածին որդին  
 Լուծանել զկապանըս մեղաց մերոց,  
 Եւ աղաշեա փըրկել զանձինըս մեր  
 Ի փորձութենէ:

Ինչպէս տեսնում ենք, տվյալ շարականի գրական բնագիրը բաղկացած է վեց տնից, որոնցից յուրաքանչյուրը յոթ տող ունի, բացի առաջին տնից, որը ուրեմն է ներառում: Դրանք բոլորն եւ անհամաշափ տաղաչափությամբ կազմված՝  $8+8+10+9+9+8+7+5$  կամ  $8+8+10+8+7+8+7$  վանկերի դասավորությամբ, բավական ծավալուն երգասացություն են կազմում: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ Բ. Կիրակէի կանոնն ամբողջությամբ Ներսես Շնորհալու հեղինակումն է, ինչը համապատասխանում է մատենագրական աղբյուրների հաղորդած տեղեկություններին այն մասին, որ Ներսես Շնորհալին է հեղինակել Պահոց բոլոր կիրակինների շարականները: Դրա մասին են վկայում առաջին հերթին «Որ զօրէնս սըրբութեան պահոց» շարականի ծավալը և զուտ բանաստեղծական-տաղաչափական առանձնահատկությունները: Շարականի բազմատուն կառուցվածքը, կերպարային կերտվածքը և բանաստեղծական հնարանքները շատ հոգեհարազատ են Շնորհալու ոճին: Այնինչ Գրիգոր Մագիստրոսի բոլոր շարականները երեք, չորս կամ հինգ (ոչ ավելի) տնից բաղկացած երաժշտաբանաստեղծական նմուշներ են: Բոլոր դեպքերում Կոմիտասի վերոնշյալ գրառումը մտածելու տեղիք է տալիս՝ լրացուցիչ կովան-

ներ ստեղծելով Մագիստրոսին որպես շարականազիր ներկայացնելու համար, չբացառելով լիովին «Որ օրէնս սըրբութեան պահոց» շարականի Գրիգոր Մագիստրոսի գրչին պատկանելու հարցը:

Վերադառնալով Կոմիտասի մատնանշված ցանկին՝ VII դ. հեղինակներին վերաբերող մասում տեսնում ենք հետևյալը.

*«Աշոտ Պատրիկ (Մագիստրոս)  
<կանոն վերացման Սրբոյ խաչին Ե. աւուրն>  
(«Զորս ըստ պատկերի»)»<sup>154</sup>:*

Այսինքն՝ Աշոտ Պատրիկին վերաբերող գրառման մեջ Մագիստրոսի անվան մեջերումով փակագծում արտացոլվել է դարերի խորքից եկող այդ երկու հեղինակներին վերաբերող խառնաշփոթը, ինչը և դրսնորվել է Կոմիտասի նման գրառման մեջ:

Ինչ վերաբերում է Գրիգոր Մագիստրոսի անունով գրչազիր գանձարաններում պահպանված տաղերին, ապա նշելի է Հովհաննես Մկրտչին նվիրված «Կարապետ սուրբ հաւատոյ» սկրզբանատող ունեցող տաղը, որն օժտված է «Կարապետին տաղ» ակրոստիքոսավ<sup>155</sup>: Ինչպես ենթադրում է Ս. Չամչյանը՝ հիմնվելով Արիստակես Լաստիվերցու, Ներսես Շնորհալու և Վարդան Արեվելցու հաղորդած տեղեկությունների վրա, տաղը, հավանաբար, հորինվել է Սուրբ Կարապետի գանգակատան կառուցման արիթքով<sup>156</sup>: Մեզ ծանոթ գրչազրերից երեքի մեջ հեղինակի մասին կան շատ որոշակի ցուցումներ, այսպես. «Տաղ Յովկանու ի Գրիգորէ Մագիստրոսէ»<sup>157</sup>, «Տաղ ի Մագիստրոս իշխանէ եւ պարօն Գրիգորէ»<sup>158</sup> և «Տաղ ի Մագիստրոսէ»<sup>159</sup> ձևերով: Ցավոք, տաղի մեղեղիական բաղկացուցիչը, գանձարանային բազմաթիվ այլ երաժշտական բաղկացուցիչը,

<sup>154</sup> Նոյն տեղում, էջ 456:

<sup>155</sup> Տե՛ս Տաղասացութիւնը Գրիգորի Մագիստրոսի Պահլաւունոյ, Վենետիկ, 1868, էջ 93-94:

<sup>156</sup> Տե՛ս Չամչյան Ս. Պատմութիւն հայոց, հ. Բ, էջ 926:

<sup>157</sup> ՍՍ, ձեռ. 8188, 1480թ., թղ. 240ա:

<sup>158</sup> ՍՍ, ձեռ. 474, 1474 թ., թղ. 213ա:

<sup>159</sup> ՍՍ, ձեռ. 423, 1742 թ., թղ. 171թ.:

բանաստեղծական միավորների նման, չի հասել մեր օրերին։  
Վերջերս մեզ վիճակվեց ի հայտ բերել Գրիգոր Սագիստրոսի անունով պահպանված ևս մեկ տաղ, որը Գրիգոր Գապասարայանը ժամանակին գետեղել էր իր «Նուազարան երաժշտական» տաղարանում : Դա «Կանայք ումանք եկին՝ ի մեծ Զատկին» սկզբնատոռով օժտված Հարության տաղն է, որը Գր. Գապասարայանն, ամենայն հավանականությամբ, ընդօրինակել է իր տեսադաշտում եղած միջնադարյան խազագիր մի Գանձարանից կամ Տաղարանից: «Նուազարան երաժշտական»—ում տաղը բերված է հետևյալ խորագրով. «Տաղ Յարութեան ի Գրիգոր Սագիստրոսէ»: Մեր կարծիքով, տաղն ի սկզբանե ունեցել է մի քանի տուն: Պահպանվել է միայն մեկը կամ մեկնենք, որովհետև շարադրանքն ակնհայտորեն կիսատ է մնում.

**Կանայք ումանք եկին ի մեծ Զատկին  
Յայն շարաթին Մարիամ Սողովմէի  
Եւ իր ընկեր Սագդաղենի:  
Այլ դրացիք և սրբազնեալը  
Որք ընդ նմա այլ շրջէին<sup>160</sup>:**


Քերթված գրականության գրված է խառը տաղաչափությամբ (6+4), (4+6), (4+4), (4+4), (4+4): Երեք տեղ առանձին բառերի վրա (Մարիամ, Սողովմէի, դրացիք) կան խազեր: Ուշագրավ է, որ իր առաջին տպագրված աշխատության մեջ Գապասարայանը գետեղել է նույն տաղը շատ մանրամասն խազագրված, ընդ որում, գուգահեռ նոտագրությամբ՝ հայկական խազերով և ուշբուզանդական նևմերով՝ նշելով նաև նրա ձայնեղանակը՝ ԳԿ, ինչը թույլ է տալիս մոտավորապես պատկերացում կազմելու սույն տաղի ելակչային կազմի մասին<sup>161</sup>.

<sup>160</sup> Գապասարալեան Գր. Գրքոյկ որ կոչի Խուազարան, Կ. Պօլիս, 1794, էջ 223-224: Տե՛ս նաև նոյնի, Գիրք երաժշտական, յորում պարունակին հարցմունք և պատասխանատուութիւնք Հայերէն, Յունարէն և Պարսկերէն համառուտար, Խուազարան երաժշտական, Կ. Պօլիս, 1803, էջ 57:


<sup>161</sup> Տե՛ս և Գապասարալեան Գր. Գրքոյկ որ կոչի Խուազարան, Կ. Պօլիս, 1794, էջ 223-224:

Օրինակ 17

Գր. Գապասաքայյան. «Գրքոյիկ, որ կոչի նուազարան»



223.



224.

Այսպիսով, ներկայումս Գրիգոր Մագիստրոսի՝ որպես շարականագրի և տաղասացի մասին մեր պատկերացումները աստիճանաբար հաստակվում են, ավելին նաև ընդլայնվում հավաստելով, որ Գրիգոր Մագիստրոսը, որն իր ժամանակի ամենաուսալ և բազմակողմանիորեն զարգացած մտավորական-ներից էր, եղել է ոչ միայն քաղաքական գործիչ, զիտնական, մանկավարժ և բանաստեղծ, այլ նաև տաղանդավոր երաժիշտ-երգահան: Այդ մասին են վկայում Շարականցում տեղ գտած և եկեղեցու կողմից կանոնակարգված նրա հինգ շարականները, որոնք հավաստում են Մագիստրոսի ազգային շարականներգության նախորդող շրջանների հիմանալի իմացությունը, ինչպես աստվածաբանության, այնպես էլ աստվածաշնչան պոետիկայի,

զուտ բանաստեղծական, տաղաչափական հնարանքների և եկեղեցական երգարվեստի տեսական և գործնական ոլորտներին հմուտ տիրապետման առումով։ Դրա մասին է վկայում, օրինակ, Գր. Մագիստրոսի Թղթերում տեղ գտած Ստեփանոս Սյունեցու Ավագ օրինություններից մեջըերված մի տող, որին անդրադարձալով Գ. Ավետիքյանը գրել է հետևյալը. «Յօրինադ աւագ օրինութեանց ասի լինել Ստեփանոս Սիւնեցի (...) բաց ի վառ ձայնեն՝ զոր ասեն արարեալ Ներսէսի Շնորհալւոյն, ըստ որում յիշէ զայս յետինս Կիրակոս պատմիչ. Բայց ըստ այս թերեւս տարակոյս արկանիցէ այն, զի ի Մագիստրոսի թուղթս բերի բան երկրորդ տան իններորդ շարականին, «Որ յաքոռս քերովքեականս բազմեցաւ ընդ Հօր». թեպետ նա ոչ իրեւ շարականի բերէ զայս», ինչն ինքնըստինքյան ուշադրության արժանի փաստ է<sup>162</sup>:

Ուստի միանգամայն հասկանալի է նրա նամակներում և «Սեկնութիւն քերականի»—ում այդքան լայն և նախանձախնդիր անդրադարձն իր ժամանակի երաժշտարվեստի (ինչպես հոգևոր, այնպես էլ աշխարհիկ), նաև հեռավոր անցյալի, հատկապես հելլենական երաժշտական մշակույթի այլևայլ հարցերին ու կողմերին:

Ուրեմն, Գրիգոր Մագիստրոս երգահանի վաստակն առաջմ ներկայանում է հետևյալ տեսքով.

### Շարականներ

*Կանոն Խաչի Նաւակատեաց Ե. աւուրն*

*ԳՀ*

*Հարց - Ծանր. Այսօր պայծառ եւ սին լուսոյ*

*Ողորմեա - Չափաւոր. Զորս ըստ պատկերի քում*

*Տէր երկնից - Միջակ-Չափաւոր. Որ զարդարեաց մեծապայծառ փառօք*

*Մանկունք - Չափաւոր. Այսօր ուրախացեալ ցնծան երկնից*

<sup>162</sup>Տե՛ս Աւետիքյան Գ. Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 672:

*Կանոն Խաչի նաւակատեաց Դ. աւուրն*

**Դ2**

*Օրհնութիւն Ա.- Չափաւոր. Խաչն կենարար որ եղեւ մեզ  
փրկութիւն*

*Գուցեն՝ Պահոց Բ. Կիւրակէի*

*Օրհնութիւն Դ2 «Որ զօրէնս սրբութեան պահոց»*

*Տաղեր*

*Տաղ Յովաննու ի Գրիգորէ Մազհստրոսէ*

*Կարապէտ սուրբ հաւատոյ*

*Տաղ Յարութեան ի Գրիգորէ Մազհստրոսէ*

*Կանայք ումանք եկին ի մեծ Զատկին*

Ուրեմն, առնվազն յոթ միավոր՝ իինգ շարական և երկու տաղ, ինչն ամենելին է քիշ չէ, եթե նկատի ունենանք, որ Շարակնոցում կան մեկական շարականով ներկայացված նշանավոր հեղինակներ, ինչպիսիք են, օրինակ, իշխանուհի Խոսրվիդուխիստ Գողբնեցին իր եղբոր՝ Վահան Գողթնեցու նահատակությանը ձունված «Զարմանալի է ինձ» ԴԿ դարձվածքի մեջ ընթացող մանկունք ողբ-գովլով, Սոլիսի եպիսկոպոս Ստեփանոս Ապարանցին՝ «Սրբութիւն սրբոց» անվանական ծայրակապով օժտված Գ2 դարձվածքի օրինությամբ, կաթողիկոս Սարգիս Ա Սևանեցին՝ «Սարսափելի որոտմամբ» ԲԿ տերերկնիցով, Հակոբ Վարդապէտ Սանահնեցին՝ «Յանսկզբնական ծոցոյ հօր»<sup>163</sup> ԳԿ ձայնեղանակին պատկանող ողորմեայով, դարձյալ անվանական ծայրակապերով օժտված կամ Կիրակոս Երզնկացին՝ Աստվածածնի վերափոխման տոնին նվիրված «Արեւելք գերարփի» այրքենական ակրոստիքոսով գրված ԱԿ օրինությամբ և այլն:

<sup>163</sup> Վերջին երեք հեղինակների մասին տե՛ս մեր «Անիի երաժշտական մշակույթը և նրա հետ կապուած շարականազիրները» հոդվածը, «Քաղմակեա», 1995, էջ 210-215:

## ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

### ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Գրիգոր Մագիստրոսի գիտական լայն ընդգրկումների մասին են վկայում նրա գեղագիտական հայացքները և երաժշտաբանաստեղծական ժանրերի տեսությունը, որոնք առանձին հետաքրքրություն են ներկայացնում<sup>164</sup>: Եվ դա լիովին արդարացված է, քանի որ իր Թղթերում և «Մեկնութիւն քերականի» երկասիրության մեջ Գրիգոր Մագիստրոսը ներկայանում է իբրև հին և նոր (իրեն ժամանակակից) երաժշտարվեստի խորաթափանց գիտակ, որն ունեցել է սեփական որոշակի դիրքորոշումն ու գործուն վերաբերմունքը իր ժամանակի մտավորականներին հուզող մի շարք հրատապ հարցերի նկատմամբ:

Պետք է նշել, սակայն, որ Մագիստրոսի գեղագիտական հայացքներն ուսումնասիրված են անբավարար: Որքան էլ զարմանալի թվա, որեւէ առանձին ուսումնասիրություն դրանց վերաբերյալ առ այսօր չի գրվել, այնինչ Մագիստրոսի Թղթերում առկա մի շարք նամակներ՝ ուղղված տարբեր քաղաքական, հոգևորա-

<sup>164</sup> Այդ մասին տե՛ս մեր հոդվածը՝ Գրիգոր Մագիստրոսի երաժշտական ժառանգությունը, ՊԲՀ, 2012, 3, էջ 78-93: Տե՛ս և նաև Մузыкальная эстетика стран Востока, вступительная статья и общая редакция В.П. Шестакова, раздел “Армения”, вступительные статьи, переводы и библиография С.С. Аревшатяна и Н.К. Тагмизяна. Переводы с древнеармянского С.С. Аревшатяна, М., 1967, сс. 358-359. Հարությունյան Հ. Երաժշտությունը V-XV դարերի հայ մատենագրության մեջ, Երևան, 2010, էջ 61-64, Արևշատյան Ա. Անիի դերը հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության պատմության մեջ, Սիօնագոյին գիտաժողով՝ «Անիի միջնադարյան Հայաստանի քաղաքական և քաղաքակրթական կենտրոն», Երևան, 15-17 նոյեմբերի, Զեկուլումների ժողովածու, Երևան, 2012, էջ 336-377: Հայրապետյան Ա., Հարությունյան Հ. Գրիգոր Մագիստրոսը և Անիի երաժշտական մշակույթը, նոյն տեղում, էջ 378-383:

կան հայ և բյուզանդացի անձանց, ներկայացնում են հեղինակին հետաքրքրող գեղարվեստական-գեղագիտական հարցերի մի լայն շրջանակ: Այսուղ կարելի է հանդիպել և՝ հոգևոր, և աշխարհիկ՝ գուսանական երաժշտությանը վերաբերող տեսակետների և գնահատականների, որոնք փաստում են ոչ միայն Գրիգոր Մագիստրոսի այդ հարցերին քաջատեղյակ և խորամուխ լինելը, այլ նաև ընկալվում են իբրև այդ ժամանակաշրջանի գեղարվեստական-մշակութային կյանքի անցուղարձի կենդանի վկայություններ:

Քիչ չեն անտիկ և հին հայկական դիցաբանությանն ու նրանց առնչություններին կապված ասույթները, որոնցում արտացոլված է Մագիստրոսի հին հունական և հին հայկական առասպելների փայլուն իմացությունը: Կան արժեքավոր դիտարկումներ և դատողություններ՝ այն ժամանակաշա Հայաստանի խոշորագույն վարդապետարաններում՝ Անիում, Հաղպատում և Սանահինում տիրող Մքնուրսի և դասավանդվող ուսումնական-կրթական ծրագրերի վերաբերյալ և այլն:

Մեջբերենք Մագիստրոսի Նամականիում և «Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ արտահայտված մի քանի ուշագրավ ասույթներ փորձելով նաև մեկնաբանել դրանք: Հայտնի է, որ Գրիգոր Մագիստրոսի լեզուն և ոճը բարդ են, խրթին, հաճախ պաճուճազարդ, ինչը և դժվարացնում է, մասնավորապես, նրա Նամականիի թարգմանությունը: Մենք հիմնավել ենք վերջին հրապարակումների վրա՝ ձգուելով հնարավորինս ճշգրտել (իսկ որոշ դեպքերում ուղղել) թարգմանության մեջ տեղ գտած անձշուությունները:

«Մեկնութիւն քերականի» երկասիրության մեջ Գր. Մագիստրոսը բազմից անդրադառնում է հազներգությանը կիրառելով այն հիմնականում երաժշտական ժանրի իմաստով, որպես երաժշտաբանաստեղծական տեսակ: Մագիստրոսն այն բնորոշել է իբրև «զաւազաներգութիւն», որը հնչյունավորվում է «ի հագուցանելոյ ընդ միմեանս ընդ միմեանս և կարկատելով բանս՝ յիրարս յեռել» կամ «ելք շնչոյ հազագին, որը երաժշտականության մեջ առաջանական է»:

թեամբ նուագէին ի տաղս պարանցիկ երգոցն»<sup>165</sup> և այլն: Մեկնության «Յաղագ հազներգութեան» զլխում քերականն այսպես է բնորոշում տվյալ երաժշտական սեռը. «Իսկ հազներգութիւն, ըստ որում ասէ ի հազնելոյ կարկատուն բանս. կարկատուն բանիւք յարամանին շարամանեալ ամենայն մրմունջք եւ երգք գուսանութեան, քանզի բազում բանից պետք են կարկատել եւ աւարտել զաս, զոր այժմ ի հայում առաւել քան ի յունականին գուանեմք: Քանզի չափ եւ կշիռ բանի արուեստաւորեալ ներգործեն զայտսիկ յոյժ չքնար եւ դժուարազիւտ եւ հրաշալի առասութիւնս»<sup>166</sup>: Այսինքն՝ «Հազներգությունը նման է կարկատված բաները հազնելուն. իրար միացված կարկատուն բաներից են կազմված բոլոր մրմունջներն ու գուսանական երգերը, որոնք ներկայումս հայերի մեջ առավել տարածված ենք գունում, քան հույների: Որովհետև այդ երգերում գեղարվեստական խոսքի չափն ու կշիռը ներգրծում են (ունկնդիրի վրա) չքնարագույն, հազվադեպ և հրաշալի կերպով»<sup>167</sup>: Այսպիսով, նա ոչ միայն անդրադառնում է հազներգությանը (ռապսոդիային), որպես գուսանական երաժշտության առաջատար ժանրին, իր կառուցվածքով և բնորոշ հատկանիշներով, այլ նաև ընդգծում է չափի և կշռի կամ կշռույթի (մետր և րիտմ) արտահայտչական մեծ հնարավորություններն ու ներգործության ուժը:

Դետրու Գետադարձ կաթողիկոսին գրած նամակներից մեկում (Թ-9), անդրադառնալով վերջինիս խաչանման զավազանին նվիրված ներքողին (հազներգությանը), Մագիստրոսը գրել է.

«Հազներգութիւնս այս ոչ ըստ որում հազներգութիւն է մասն քերթուածոց ներտառեալ ստորոգութեամբ, եւ ոգեալ է հազներգութիւն հազնելոյ զիոներական քերթուածնն, այլ տաղ է հոմերական քաջ ոլորեալ. եւ սա տաղ դիւցագնական չափաբե-

<sup>165</sup> Գրիգոր Մագիստրոս, Մեկնութիւն քերականի, քննական բնագիր, Խաչեան Լ., նշվ. աշխ., էջ 383-384:

<sup>166</sup> Ст. и Адониц Н. Дионисий Фракийский и армянские толкователи, с. 232.

<sup>167</sup> Հատվածի բարգմանությունը մերն է:

բեալ ըստ Ելենացւոցն»<sup>168</sup>: (...) իսկ շարակայեցեալն եթէ քերթողապէս ոք նկատեսցէ, ի քաղից տասանց չափաբերեալ չափութենէ շարաբարձեալ յինքեան ունի»<sup>169</sup>:

«Այս հազներգությունը նման չէ բանաստեղծական ստորագությամբ հորինվածքի, ինչպէս հազներգության, որը կազմված է կարկատված խոսքերից եւ կամ դափնէ գավազանով երգվող հոմերական մի քերթվածքի, այլ վի տաղ է հոմերական՝ քաջ ոլորված (հմտորեն չափված): Սա դյուցազներգական մի տաղ է, հորինված հելենացիների չափով»: (...) «Իսկ եթէ շարակցությունները դիտենք բանաստեղծական արվեստի տեսանկյունից, ապա կգտնենք քառասուն ուոր (...), քանզի թվաբանությունից է շարաբաննեալ»<sup>170</sup>:

Կամ Հովհաննես Սյունյաց արքեպիսկոպոսին իր հորեղբոր՝ Վահրամ Պահլավունու մահվան առիթով ուղղած նամակում, որն անկեղծ կովկիծով և ափսոսանքով լի դամբանական մի ողբ է՝ հուտորական փայլուն ոճով զրված, կարդում ենք հետևյալը. «Եւ զի՞նչ արդեօք. մի թէ դորա ողբս առից, զի արժանապէսն արձակեցից ձայն դամբանական եւ ողբերգական կամ ներքողականս նմանապէս գերեզմանական բանաստեղծութիւնս»<sup>171</sup>: «Եվ ի՞նչ է այդ. մի թէ դրա վրա այդպիսի ողբ կասեն, քանզի արժանապէս արձակելու են դամբանական և ողբերգական ձայններ կամ հատկապէս ներքողական գերեզմանական բանաստեղծություն»<sup>172</sup>:

Վահրամ Պահլավունու մահվանը նվիրված հանդիսությունների նկարագրության մեջ ասվում է.

<sup>168</sup> Տէ՛ս Գրիգոր Մազհատրոսի Թողերը (այսուհետ՝ Թողեր), բնագիրն առաջբանով և ծանոթագրություններով ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 33:

<sup>169</sup> Նույն տեղում:

<sup>170</sup> Մեջքերումների քարգմանությունը՝ Հ. Հարությունյանի և Ռ. Հովհաննի, տէ՛ս Երածշտությունը V-XV դարերի հայ մատենագրության մեջ, Երևան, 2010, տէ՛ս Հավելված (այսուհետ՝ Հավելված), էջ 143-144:

<sup>171</sup> Թողեր, էջ 36:

<sup>172</sup> Տէ՛ս Հավելված, էջ 144:

«...որ եւ նոցա իսկ զքոյդ հանդիսի մրցութիւն տաղս և սոխնչս յօրինեալ անպատկառաբար ազատագունդն պարէին եւ ի հրապարակս գուեհից եւ քաղաքաց իբրև զդիւցազանցն երգէին»<sup>173</sup>:

«...որ և քո հանդեսների մրցությունների ժամանակ տաղէր և սոխնչներ հորինելով ազատների խմբերն էին պարում և քաղաքների հրապարակներում ու փողոցներում իբրև ոյուցազներգություն էին երգում»<sup>174</sup>:

Նոյն թղթում դարձյալ Վահրամ Պահլավունու մասին կարդում ենք. «Քեզ այդպէս վայելէր թագաւոր եւ այսպիսի պաղատան ճեմել, (...) այսպիսի փողիարօք եւ թմբկօք Ճոխանալ»<sup>175</sup>: «Քեզ վայելում էր թագավորի նման այսպիսի պալատում ճեմել, (...) այսպիսի փողիարներով և թմբկահարներով Ճոխանալ»<sup>176</sup>: Նոյնի մահվանն անդրադառնալիս Մագիստրոսը շարունակել է. «Եւ զի ոչ էր պարտ զարիական արութեան քո եւ զօրութեան յոյս քաջութեան հիբից եւ կանանց ողբերգականս ոգել, մերով իսկ արական եւ բնական իմաստասիրական երգով զքոյդ ներբողական եւ գերեզմանակն պարել ողբս, եւ զորդիութեան եւ սննդեան հասուցանել պարտս»<sup>177</sup>: «Եվ պատշաճ չեր քո արիությանն ու զորությանը քաջության թշվառ ապավինություն և կանանց ողբերգություններ ոգել, (այլ) մեր իսկ արական և բնական իմաստասիրական երգով քեզ ներբողական և գերեզմանական ողբեր իմբապետել և որդիական և (հոգնոր) սննդի պարտքերը հատուցել»<sup>178</sup>:

Նամակներում կա նաև արքեալիսկոպոսին ուղղված մի նամակ, որտեղ Գրիգոր Մագիստրոսը վրդովմունք է արտահայտում թաղման արարողությունների ժամանակ հեթանոսական ծեսերի վերապրուկների դրսնորման կապակցությամբ.

<sup>173</sup> Թղթեր, էջ 40:

<sup>174</sup> Հավելված, էջ 144:

<sup>175</sup> Թղթեր, էջ 41:

<sup>176</sup> Հավելված, էջ 44:

<sup>177</sup> Թղթեր, էջ 41:

<sup>178</sup> Հավելված, էջ 144:

«Աւա՞ղ բախտին եւ այն այդպիսի վայրս եւ յիւրն սեփականի, բայց եւ զկնի այնր շոայլութիւն շուայտացեալ թշնամացն աշխն Քրիստոսի որ գերեզման թղացեալ զի՞նչ ձեւ զմայլական արառաքար կաքաւողացն խնջինս եւ սրնջան եւ ոտիւք բափահարումն, եւ դաստակօք անյորինաբար բաղբախումն, եւ քարշումն քղանցից մրրկեալ պտուտելով գիտշի կնքելոյ գերեզմանին, թեպետեւ ոչ ըստ օրինի քրիստոսական կրօնից»<sup>179</sup>:

«Ավա՞ղ բախտին, այն կ հենց այս՝ սեփական վայրում: Բայց կանցնի Քրիստոսի խաչի թշնամիների, գերեզմանը թղատողների շվայտ շոայլությունը: Ի՞նչ է նշանակում զմայլական պարերի մեջ կաքավողների խնջույքը, սոխնչները, ոտքերի դոփյունը և դաստակների անարվեստ բարախումները, քղանցքների քարշումների մրրկացած պտուտներից առաջացած փոշին, որ բափվում էր գերեզմանին, ինչը քրիստոնեական կրոնի օրենքներին անհարիր է»<sup>180</sup>:

Իսկ Սարգսի վարդապետին ուղղված նամակում քրիստոնեության մասին գրում է. «Արդ յայսմ վայրի բաւական լիցի ասացեալն յայրի անդ մինչեւ ի ցվախճան եւ այն գտեառնէ իւր եւ զարքայէ. սակայն ինձ սպասեցին արդարքն մինչեւ եկեսցէ: Զայսպիսի ինձ բանս դիւրացուցանող է եւ օրացուցանող միշտ զաստուծայինս երգել երգս որպէս երկիր անապատ եւ անջուր կամ որպէս եղջերու զի փափազէ աղբերս ջուրց...»<sup>181</sup>:

«Արդ, ասվածք բավարար չէ մինչև մարդու վախճանի, նրա տիրոջ և արքայի մասին խոսելիս, սակայն ինձ սպասեցին արդարները, մինչ վերադարձն: Այս խոսքերն ինձ թեթևացնում են և մշտապես զորացնում է աստվածային երգերի կատարումը, ինչպես անապատ և անջուր երկիր, ինչպես եղջերու, որ փափազում է աղբյուրի ջրին...»<sup>182</sup>:

ԻԵ-25 թղթում դրսուրվում է Սագիստրոսի հոգաւոր մանկավարժ և ուսուցիչ լինելու հանգամանքը: Հավանաբար, իրեն

<sup>179</sup> Թղթեր, էջ 47:

<sup>180</sup> Հավելված, էջ 144:

<sup>181</sup> Թղթեր, էջ 54:

<sup>182</sup> Հավելված, էջ 144-145:

աշակերտած հայր Կարապետին գրած այս նամակում կարդում ենք. «Իսկ եթէ կամիս յօժարութեամբ բացատրեցից քեզ զիրողութին ենթակային, եթէ որպէս գրադիցն ի նա տողորս երեւակայութեամբ ցուցից զթուականութեանն, զերածշտականութեանն, զերկրաչափականն, զաստեղաբաշխութեանն եւ զիւր գործառնութեանցն բաղազանութիւն»<sup>183</sup>: «Իսկ եթէ կամենում ես, հոժարությամբ քեզ կբացատրեմ (դասավանդվող) առարկայի բովանդակությունը, թէ ինչպիսին են չորս բաղադրամասերի՝ թվաբանության, երածշտության, երկրաչափության, աստղաբաշխության և իր կիրառության հարաբերությունները»<sup>184</sup>:

Գրիգոր Մագիստրոսի մտերիմ բարեկամներից է Եղել Դանիել Երաժիշտը, որի երածշտական տաղանդը բարձր գնահատելով, Մագիստրոսն անվանել է նրան «նոր Որփես»: Դա նշանակում է, որ Վերջինս եղել է ոչ միայն երեսելի հորինող, այլ նաև երգեցող: Դանիել Երաժիշտին ուղղված նամակներից մեկում (ԾԴ-54) Մագիստրոսը վերապատմում է երածշտության ներազդեցությանը վերաբերող հին հունական մի առասպել. «...Պոռփիլիփոնոսն ի Պելոպիկ հանդիսացեալ ընդ հաւս ի գարնանային յեղանակային փողէր եւ ի փողս սրնգէր, իսկ լեզուովն ճուղէր յոգնաբերուն բաղդատական տրոհմամբ զիրաքանչիւրոյն յատուկ ըստ տեսակի: Զաս ասեն եռասեռեան եւ բազմայատուկ եւ անհատական: Եռասեռեան իբրու զմարդ բանական եւ զձայնս հաւուց բարբառեալ ըստ իւրաքանչիւր սեռի. նաև պատկանեալ քատակէր իւրաքանչիւրոցն ձայն ըստ տեսակի յատուկ: Պոռփիլիփոնոսն երբեմն երթեալ յԱրգիացիսն, տաղն Որփեայ զառաջինն սկսեալ, մերկ երգով ձեղուն յարկին պատառէր եւ ոստք սեանն ծաղկեալ բողբոջէին եւ զիաւս ի վերայ նատեալ տեսանէին Արգիացիքն...»<sup>185</sup>:

«(Սի անգամ) զարնանային եղանակին Պոռփիլիփոնոսը Պելոպիկէից, հանդես զալով թոշունների հետ, փող էր նվազում, սրինգ էր փողում, իսկ լեզվով ճովողում էր բազմապիսի նմա-

<sup>183</sup> Թղթեր, էջ 72:

<sup>184</sup> Հավելված, էջ 145:

<sup>185</sup> Թղթեր, էջ 125:

նողական զանազանությամբ, յուրաքանչյուրին հատուկ եղանակով: Այս (երգեցողությունը), ասում են, բաղկացած է երեք սեռից և՝ բազմահատով է, և՝ անհատական: Երեք սեռից, որովհետո իբրև բանական մարդ, արտաքերելով թռչունների ձայները ըստ յուրաքանչյուրի սեռի, նաև ընդօրինակում էր յուրաքանչյուրի ձայնը նրանց պատկանող հատուկ տեսակի համաձայն: Սրա մասին ասվում է, թե Պոռփյուտիփոնոսը, երբեմն գնալով Արգիացիների մոտ, առաջինը Օրփեոսի տաղն էր սկսում (Երգել), լոկ երգով ձեղնահարքն էր պատում, և այսն ոստերը բոլցոշելով ծաղկում էին, և Արգիացիները տեսնում էին թռչուններին, որոնք նստած էին նրանց վրա»<sup>186</sup>:

Հասկանալի է, որ խոսքն այստեղ հին հունական երաժշտական գեղագիտության մեջ մշակված երաժշտական եթոսի ուսմունքի, նաև միմեզիսի տեսության մասին է, իսկ բերված առասպելը՝ ոմն Պոռփյուտիփոնոս երաժշտի մասին, կոչված է ցուցանելու այդ ուսմունքները կոնկրետ օրինակներով: Երաժշտության ներազբեցությանը Գրիգոր Մագիստրոսն անդրադարձել է նաև այլ նամակներում՝ դիմելով միջնադարյան մատենագրության և հատկապես երաժշտագեղագիտական բովանդակության գրվածքների մեջ հաճախ հանդիպող Օրփեոսի կերպարին, այսպես. «Գիտեմք և զգկունս զկնի Որփեայ շրջեալ»: «Գիտեմք նաև, որ Օրփեոսի հետևից ձկներ էին շրջում» կամ «Եւ սակա երաժշտացն է բանս այնոցիկ, որք մերկ երգով զգկունսն խանձացուցանեին և զծառս կաղնիս, ուր և կամեին փոփոխեին»: «Եվ խոսք այն երաժիշտների մասին է, որ սուկ երգով ձկներին էին գրավում և, ուր կամենում էին, կաղնի ծառեր էին տեղափոխում»<sup>187</sup>

Անանիա վարդապետին ուղած նամակներից մեկում (ԾԲ-52) Մագիստրոսն անդրադառնում է մեկ այլ՝ դարձյալ երաժշտությանն առնչվող հին հունական առասպելի, որը պատմում է, թե ինչպես Արտեմիսի աստվածութին ծովի ալիքներից փրկում է

<sup>186</sup> Հաստվածի թարգմանությունը մերն է:

<sup>187</sup> Տե՛ս և Սուլրադյան Գ. Հին հունական առասպելների արձագանքները հայ միջնադարյան մատենագրության մեջ, Երևան, 2014, էջ 50:

Պարմինիդեսի ջնաղագել և հրաշտեսիլ մանկանը, որին «հրամայէր ապրեցուցանել ոչ միայն, այլ եւ շնորհս տալ քահանայութեան։ Եւ վարժեալ նորա ամենայն իմաստութեամբ, իսկ երաժշտականութեամբ առեալ ծայրագոյն։ (...) Զորոյ եւ պատկերն անդրի արարեալ ի պղնձոյ եւ օծեալ ոսկով փող ի բերանն ունի եւ ծիրանի բեկեզ փողեալ ի ծայրս փողին։ Զայսոսիկ նկարագրութեամբ զնա դրոշմել պարտ վարկան (...), զոր նախուստ գրեցաք Պոռփիլուիփոնոսին զաս սալպինփոնիս այսինքն քնարերգ»<sup>188</sup>։ «... հրամայեց ոչ միայն ապրեցնել, այլ նաև շնորհել քահանայություն։ Եվ սովորեցնելով նրան բոլոր գիտությունները ամենաշատը երաժշտության մեջ (հմտացրեց)։ Եվ որի պատկերն է այնտեղ ստեղծված՝ փողը բերանին և փողի ծայրից ծփացող ծիրանի բեկեզով, որը պատրաստված է պղնձից և ոսկիով է պատված։ Այսիսի նկարագրությամբ պատշաճ համարեցինք նրան հիշատակել (...), ինչպես նախկինում գրեցինք Պոռփիլուիփոնի մասին «սալպինփոնիս»<sup>189</sup>, այսինքն՝ քնարերգու»<sup>190</sup>։ Նամակն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Այսորիկ քանք առակականք իմաստափրեալ ի մենց հուսորական յաղաց երաժշտիդ Դանիկի»։ Այսինքն՝ «Սա է առասպեկի իմաստը, որ հուսորական (ոճով) իմաստափրեցինք քո Դանիկել Երաժշտի համար»<sup>191</sup>։

Գրիգոր Մոլացի եպիսկոպոսին գրած նամակներից մեկում (Լ.Գ.-33) Գրիգոր Մագիստրոսը մեջբերում է մահամերձ Արտաշես Պարթեան քազակորի հմայախոսքը կամ ողբը, որը հայ մատենագրության մեջ պահպանվել է հենց Մագիստրոսի մեջբերման շնորհիվ։ Մովսես Խորենացու «Պատմության» մեջ վերաշարադրված կամ մեջբերված հայ հին հեթանոսական վիակերգերի և

<sup>188</sup> Թղթեր, էջ 124։

<sup>189</sup> Հունարեն քառացի՝ փող, շեփոր։

<sup>190</sup> Թղթեր, էջ 124։ Այսուղի «քնարերգու» թարգմանելով «սալպինփոնիս» քառը, Մագիստրոսն անձշտություն է թույլ տվել։ Պետք է լինի «Փողահար», «շեփորահար», օս՝ լուց, օս՝ լուցոց - շեփոր, փող, ուն և Ճրեներеческо-ռուսկий словарь, сост. Дворецкий И.Х., т. II, М., 1958, с.1461.

<sup>191</sup> Հատվածի թարգմանությունը մերն է։

Վահագնի ծննդին նվիրված օրիներգի նման. «... ի Թորգումեան երից եօթն անկեանց եռակի բարդեցելոց Ահկեան: Որում Արտաշեսն Պարթե բաղձայր մրոյ մըրկեալ ծխոյ շամանդաղեալ մակաւասար շինից եւ քաղաքաց: Ո՞ւ տայր ինձ, ասէր, զծուի ծխանի եւ զառաւուն Նաւասարդի զվագելն եղանց եւ զվարգելն եղերուաց. մեք փող հարուաք եւ թրմբկի հարկանէաք, որպէս օրէնն է թագաւորաց: Եւ զայս ասեն ի վախճանելն իրում, զոր եւ ի գրեհիկս աւանդեալ զրաք»<sup>192</sup>: «Այնժամ Թորգումյաններից տարեցը դրեց երեք եռանկյունիներ միմյանց վրա, որոնց մեջ Արտաշես Պարթևը կախարդում էր ծխով, որը մոլից քուլա-քուլա բարձրանում էր և մշուշով պատում շենքի ներսն ու քաղաքը.

*Ո՞ւ տայր ինձ, ասում էր, զծուի ծխանի  
Եւ զառաւուն Նաւասարդի,  
Հզվագելն եղանց  
Եւ զվարգելն եղերուաց.  
Մեք փող հարուաք  
Եւ թրմբկի հարկանէաք,  
Որպէս օրէնն է թագաւորաց:*

... Եվ այս ասում են, (նա ասում էր) իր վախճանի պահին, ինչը գտանք հասարակ մարդկանցից ավանդված»<sup>193</sup>:

Ցավոք, այս հատվածի թարգմանության մեջ տեսնում ենք անձշություններ և բացրողումներ: Թերևս խառնաշփորք տեղի է ունեցել այն պատճառվ, որ զանց է արվել նախորդող հատվածը. «Ուրեմն նահանջեալ յԱմսուէ, զՆիսեանն նշանակեալ ցուցակութիւն, երեւակայէր, եւ այն ի կողմանէ տասնեկին եօթն անկեանցն յունականին բոյ, կամ թէ ի թորգումեան երից եօթ անկեանց եռակի բարդեցելոց...», որը պատմում է հույնների մոտ ընդունված յոթ եռանկյունիների տասնյակ թվի հետ կապված մի ծեսի մասին, ինչը Գրիգոր Մագիստրոսը համեմատում է հայերի

<sup>192</sup> Թոյթէր, էջ 86-87:

<sup>193</sup> Հավելված, էջ 145:

նման մի սովորույթի հետ<sup>194</sup>: Փորձենք հնարավորինս հարազատ մնալ բնագրին. «... կամ թէ թորգոմյանների միմյանց վրա դիզուղ եռակի բազմապատկած յոթ եռանկյունիներն Անեկան ամսին, երբ Արտաշես Դարթելը տենչում էր մոլախոտից մրրկածն բարձրացող ծուխը, որը հավասարապես մշուշով էր պատում շենքերը և քաղաքները»:

Սրբուի Լիսիցյանն իր հայտնի աշխատության մեջ այս կապակցությամբ գրել է հետևյալը. «Скорбный, зимний, старческий цикл йэгэрйэгутийон-ов относился к фаллическим песноплясовым. Погребальным процессиям и театрализованным действиям, к оплакиванию умершей плодородящей силы природы, к смерти, фаллоса, воплощенного в образах умирающих и воскресающих богов: армянского Ара Прекрасного, вавилонского Тамуза, финикийского Адониса, фригийского Аттиса, египетского Озириса (...) и др.»<sup>195</sup>

Նամակներից մեկում (Խ-40) Մազհատրոսը դիմում է Գագիկ Բագրատունի թագավորին հետևյալ խոսքերով. «... ասել քեզ Փոտոմէոս ոչ դանդաղիմ (...): Զի տեսանիմք գրեզ ի հոմերական տալսն վերտառեալ չափաբերական եւ ուսանալորս հագներգական կարկատեալ»<sup>196</sup>: «Շտապում եմ քեզ պատմել Պոտոմեոսի մասին (...): Որպեսզի քեզ տեսնենք հոմերական տաղերը չափաբերված վերտառելով և հագներգական ուսանալորը կարկատելով»<sup>197</sup>:

Հագներգությանը (ոապսոդիային) վերաբերող «կարկատիք», «կարկատել» բնորոշումները հայտնի են դեռևս Դավիթ Քերականի և Ստեփանոս Սյունեցու «Մեկնութիւն քերականի» աշխատություններից, ինչը նշանակում է բազմամաս, տարբեր պատկերներից և դրվագներից բաղկացած մի երաժշտաբանաս-

<sup>194</sup> Թողեկ, էջ 86:

<sup>195</sup> Лисициан С. Старинные пляски и театральные представления армянского народа, т. I, Ереван, 1958, с. 80.

<sup>196</sup> Թողեկ, էջ 97:

<sup>197</sup> Հավելված, էջ 145:

տեղծական ստեղծագործություն, որը նմանեցվում է գոյնզգույն կտորներից կազմված գործվածքի<sup>198</sup>:

Բարսեղ և Եղիսէ աշակերտներին ուղղված թղթում նա արձարծում է Արիստոտելի աշխատությունների որոշ հարցեր՝ փաստորեն շարադրելով կրթական սեփական ծրագիրը, որտեղ երաժշտությունն (ըստ յոթ ազատ արվեստների համակարգի) ունեցել է իր կայուն տեղը. «Նախ պարտ է զբերականութիւնն հանդերձ թարգմանութեամբն ուսանել տիրապէս մակատացականութեամբ, եւ զկնի այսր զիռետորականն երիք հանդիսիք անսխալ տրոհութեամբ, եւ ապա զահիմանցն պարունակել. եւ պղատոնական եւ արիստոտէլական, եւ դարձեալ պիլթագորական կարակնակերտութեանն բացորշմանց եւ դատողութեանց. նախուստ քան զայտրիկ կրթեցելովք նեկուու վերծանութեամբ զիին եւ զնոր կտակարանս, եւ առասպելավարժութիւնս ի բազում եի զանազան տեղիս զեղեալ զորքանութեամբ արտահայտել հաւանիմք, եւ ի խոյ ելանել ջերմագոյն եւ քաջողջական խոհական նախատեսականին եւ այլոցն բոլոր արհեստից եւ մատենից: Զի յամենայնի իմաստասերն խոստովան լիցի զգիտութիւն եւ ուրացեալ անզիտութիւն մանաւանդ ըստ կարողութեան քայլցւ արհեստից թուական, երաժշտական, երկրաչափական, աստեղաբաշխական»<sup>199</sup>:

«Նախ պետք է քերականությունը թարգմանությամբ հանդերձ ուսանել կատարելապես՝ մտքերի մաքրությամբ, և դրանից հետո հոետորական արվեստը՝ երեք ընտությունների անսխալ որոշմամբ, և ապա և՝ պղատոնական, և արիստոտէլական սահմանումներն ամփոփել, և դարձյալ՝ պյութագորյան բոլորակության բացահայտությունները և դատողությունները: Դրանցից առաջ հավանություն ենք տալիս կրթվողներին (ուսուցանել) Հին և Նոր Կտակարանները՝ անդադար ընթերցանությամբ, և առասպելավարժությունը՝ բազմաթիվ և զանազան տեղերում եղած քանակությունը արտահայտելու կարողությամբ, և՝ ջերմագոյն, և՝ ողկությամբ արտահայտելու կարողությամբ, և՝ զերմագոյն, և՝ ող-

<sup>198</sup> Հազմերգության մասին մահրամասն տե՛ս Հովհաննիսյան Հ. Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978, էջ 99-103:

<sup>199</sup> Թողեր, էջ 105:

շամիտ ուշիմությամբ հոմերական և պլատոնական նախաբանի տրամաբանական հասովածներին և մյուս բոլոր արվեստներին և մատյաններին հետախոսված լինել: Որովհետև ցանկացած իմաստանք խոստովանում է գիտությամբ և ուրանում անզիտությամբ, մանավանդ ըստ կարողության թվաբանական, երաժշտական, երկրաշափական, աստղաբաշխական չորս արվեստների»<sup>200</sup>:

Ուշագրավ է Սանահինի միաբաններին ուղղված նամակը (ԿԱ-61), որը ներկայացնում է վարդապետարաններում տիրող բարձր ոգեղեն մթնոլորտը. «Ֆիշելով զյայրական ծերոցդ ծայրագունից խնամս առ մեզ եւ խրատ եւ ողորմութեամբ բարեկարգութիւնս, եւ զերիտասարդացն, որք ի վարժարանսն, հրետորական եւ երաժշտական զնոցայն զմտաւ ածեալ հանդէս եւ զմբցումն եւ զգեղեցիկ մոլութիւնս եւ զմանկանցն սաղմոսերգութիւնս քաղցրածայնութեամբ վերառեցեալ, որ գրեթէ պետութեանցն եւ բոլորն երկնային առաքինությամբ եւ ճգնութեամբ սքանչելի եւ զարմանալի երեւեալ, որ եւ ոչ ի Ակիւթ կամ ի Թերայիտ այսալիսի երբեմն երեւեալ»<sup>201</sup>:

«(Այս ամենի հետ) հիշում եմ նաև ձեր՝ մեծամեծ ծերերի հոգածությունը (մեր մասին) և խրատները ու ողորմածությամբ բարեկարգությունները, (հիշում եմ նաև) երիտասարդներին, որոնք վարժարաններում հրետորական և երաժշտական մտքով անցած հանդէս ու մրցություն և զեղեցիկ մոլություններ էին կազմակերպում, մանուկների քաղցրածայնությամբ հնչող սաղմոսերգությունները, որոնք հրեշտակներին և բոլոր երկնային դասերին և ուժերին գրեթե գերազանցող եմ գտնում, իսկ ումանց՝ զանազան և պեսպես առաքինություններով և ճգնությամբ (համարում եմ) սքանչելի և զարմանալի երևացող, որ ո՛չ սկյութների մոտ և ո՛չ Թերեում երբեսէ չեն երևացել»<sup>202</sup>:

Թվում է, թե «ի Ակիւթ կամ ի Թերայիտ այսալիսի երբեմն երեւեալ» արտահայտությունը սիսալ է քարգմանված: Մեր կար-

<sup>200</sup> Հասովածի քարգմանությունը մերն է:

<sup>201</sup> Թղթեր, էջ 136-137:

<sup>202</sup> Տե՛ս Հավելված, էջ 146:

ծիրով, պետք է լինի՝ «որ անգամ Սկյուրում կամ Թերայիղում երբեմն են երևում»: Գրիգոր Մազհատրոսն այստեղ ոչ թե հերանս սկյուրներին է (скифы) նկատի ունեցել (այդ դեպքում պետք է լիներ «ի Սկիփս»), այլ ինչ-որ հայտնի մենաստան, անապատ (скут, пустыня), ինչը հաստատվում է հաջորդիվ՝ քրիստոնեության առաջին դարերում եզիպտական անապատում գտնվող և իր ճգնավորներով հոչակված Թերայիղի մենաստանի (այլ ոչ թե Թերե քաղաքի) հիշատակումով:

Նույն նամակում, հավանաբար, պատասխանելով Սանահինի միաբանների հետաքրքրասիրությանը՝ Գրիգոր Մազհատրոսն անդրադարձում է նաև Անիի հոգևոր մթնոլորտին՝ գրելով. «Իսկ զի՞նչ արուեստ եւ կարգաւորութիւն մայրաքաղաքիդ. ուղղափառ վարդապետութիւն ի զիշերի եւ ի սուրնջեան եւ այն ոչ սուտ կամ սնուտիպատիր եւ տատիկեցի<sup>203</sup> առասպելոք, այլ աստուածեղին արդեամբ եւ օրորութեամբ եւ քաղցրածայնութեամբ երաժշտականաց եւ նուազումն սազմուելոյ եւ ընթերցումն հարցն վարուց եւ հակառակել զգեղեցիկ հակառակութիւնս եւ զմիմեամբք ելանել»<sup>204</sup>:

«Իսկ ի նշ արվեստ և կարգավորություն է (տիրում) ձեր մայրաքաղաքում: Ուղղափառ վարդապետություն՝ զիշերվա և ցերեկվա ընթացքում և այն էլ՝ ոչ սուտ կամ սնուտիպատում և սատուիկյան առապելներով, այլ աստվածային աշխատանքով և զորությամբ և երաժշտական քաղցրածայնությամբ և սաղմուելու երգեցողությամբ և (սուրբ) հայրերի վարքերի ընթերցումով և զեղեցիկ քանավեճերում միմյանց հանդեպ հակառակությամբ ելնելով»<sup>205</sup>:

Հայտնի է, որ Գրիգոր Մազհատրոսն անզիջում պայքար է

<sup>203</sup> Ինչպես մեզ հայտնեց Մատենադարանի ավագ գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր Գոհար Սուրայյանը, Կոստանյանցի ձեռքի տակ եղած «Թոթերի» ձեռագիրի բնագրում գրիշները սխալ են թույլ տվել, որը ճշգրտվում է այլ գրչագրերի օգնությամբ: Դեռք է լինի ոչ թե «տատիկեցի», այլ «ատտիկեցի», ինչը բոլորովին փոխում է հաստվածի իմաստը: Հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը Գ. Սուրայյանին այդ կարևոր ճշգրտման համար:

<sup>204</sup> Թոթեր, էջ 137:

<sup>205</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

մղել աղանդավորների, մասնավորապես թոնդրակեցիների դեմ: Այդ պայքարի անմիջական անդրադարձն ենք գտնում Կէ (37) թղթում. «Գրեալ են երեւ վասն նախանձու արտաքսեն զմեզ. ո՞ստութեանդ մանաւանդ երեւ զարմացման եւ սքանչացման արժանի. երեւ ի մէնց են եւ մերովս դաւանութեամբ, զի՞նչ արդէօք պարտ է նախանձել, ընդ որո՞յ ձեմարանի կամ վարդապետութեան, ընդ որո՞յ մայրաքաղաքացեաց եւ եպիսկոպոսաց եւ հարանց (...) եւ խաչակրոն կրանաւորաց, երեւ միայնաւորաց քրիստոսազգեաց ճգնազգեաց արանց, որք ի լերինս յայրս եւ ի փապարս բնակեալ են, երեւ յերածշտական հազներգութիւնն եւ ի քաղցրածայնութի՞ւնն, երեւ ի զամպարափայլ կացորդական տօնախմբութիւնն...»<sup>206</sup>:

«Գրել են, թե նախանձից են արտաքսել մեզ: Ո՞ստությունդ, մանավանդ որ արժանի է զարմանքի և սքանչացման: Եթե մեզանից են և մեր դավանության, արդյոք ի՞նչ պետք է նախանձել, ո՞ր ձեմարանի կամ վարդապետության համար, ո՞ր մայրաքաղաքացիների և եպիսկոպոսների և հայրերի (...) և խաչակրոն կրոնավորների համար, թե քրիստոսազգյաց միայնավորների և ճգնազգյաց մարդկանց, որոնք բնակվում են լեռների քարայրներում և կիրճերում, թե երածշտական հազներգություններին և քաղցրածայնություններին, թե լուսափայլ կացորդական տոնախմբություններին...»<sup>207</sup>:

Բնորոշ է Անիի հանդեսներից մեկի նկարագրությունը, որը, շարադրկած լինելով Մագիստրոսին հատուկ վերամբարձ և խրթին լեզվով, դժվարություններ է հարուցում համարժեք քարգմանության համար, ինչը և բազում մեկնաբանությունների և տարընթերցումների տեղիք է տվել: Ահա այդ հատվածը. «Քայց ասել զիոստոմեանն տնկոյ, զորմէ ասեն յոստոցն հատեալ գործէին զնա մանրագոյն բնարս, զորս եղեալ ի ձեռին համբակացն և առժամայն ուսեալը անաշխատաբար որպէս ի սարդենի մահակէ պար զոլով երգին զիոնմերական քերտուածն»<sup>208</sup>:

<sup>206</sup> Թղթեր, էջ 155-156:

<sup>207</sup> Հատվածի քարգմանությունը մերս է:

<sup>208</sup> Թղթեր, էջ 221:

«Բայց (նկատի ունեմ) Ռոստովյան տունկը, որի մասին ասում են, թե ճյուղերը կտրելով գործում էին մանրագոյն քնարներ, որոնք տալով համբակների և այդ պահին անաշխատաբար (նվազել տվածների ձեռքը), որոնք դափնե ճյուղով պար գալով երգում էին տաղաչափական քերթվածքներ»<sup>209</sup>:

Ինչպես տեսնում ենք, թարգմանիչները տվյալ պարբերության մեջ թույլ են տվել մի քանի անձշտություններ: Առաջարկում ենք թարգմանության մեր տարբերակը.

«Բայց (նկատի ունեմ) Ռոստովյան տունկը, որի մասին ասում են, թե ճյուղերը կտրելով սարքում էին նրբագոյն քնարներ, որոնք տալիս էին համբակների ձեռքը, և այդ պահին չզբաղված ուսայաները դափնե գավազանով պարում էին՝ երգելով հոմերական քերթվածքներ»:

Սրբուհի Լիսիցյանը, անդրադառնալով հագներգության և գավազաներգության ժանրերին, վկայակոչել է հոյն հեղինակ Լուկիանոսին նշելով. «Орфей и Музей, принадлежащие к лучшим плясунам своего времени, учреждая свои таинства, конечно, и пляску, как нечто прекрасное, включили в свои уставы, предписав сопровождать посвящения размеренностью движений и пляски...»<sup>210</sup>.

“а. пение с плясками, держа палки, жезлы или ветки тополя или лавра в руках (...). То, что во время пения - нагнэргутийон и гавазанийэргутийон - плясали с палками и ветвями в руках, указывает на принадлежность этих плясок культу плодородия, и в частности, пляскам фаллическим;

б. тексты таких песноплясовых действий, а также содержащие их книги. У греков эти тексты обычно бывали гомеровскими, у армян (вряд ли народ мог петь чужеземные поэмы) их могли петь и плясать с ветвями ученики, изучая греческую поэзию”<sup>211</sup>.

<sup>209</sup> Տե՛ս Հավելված, էջ 146:

<sup>210</sup> Лукян, О пляске, Собрание сочинений, т. II, 1935, 56. Մեջբերվում է լսու՝ Լисициан С. “Старинные пляски и театральные представления армянского народа”, т. I, с. 78.

<sup>211</sup> Նոյն տեղում:

Այնպես որ տվյալ հաստվածի թարգմանության մեր առաջարկած տարբերակը լիովին հաստատվում է Ս. Լիսիցյանի՝ Ժամանակին կատարած դիտարկումներով:

Եվ նորից զայով Անիի հանդեսներին՝ Գրիգոր Մագիստրոսը իշխան Թոռնիկ Մամիկոնյանին ուղղված նամակում (ՀԵ-75) տալիս է դրանցից մեկի գեղեցիկ նկարագրությունը.

«Քաջ գիտեմք, զի հոյլը ի հանդիսի հզորք եւ փառացի եւ փարթամք, եւ վիճակելոց դասք ոսկեհուր զարդիք պարածածկեալը, սպիտակափառ եւ երածշտական պարք զումարեալը դաստակերտացն տնօրէնութեամբ, եւ ոտիւր կաքաւեալը, եւ հնչմանց երգ արտակիտեալ եւ փողեալ քնարական ներդաշնակապէս. քանզի եւ այս ինքեանց յատանցն ներքինեաց մաքրագոյն եւ վճիտ քմազարդութիւն եւ բացագանչութիւն պատկանեալ եւ յարմարեալ ձայնի»<sup>212</sup>:

«Քաջ գիտեմք, որ վիճակավորների ոսկեհուր զարդերով ծածկված դասք, դաստակերտներում տնօրինաբար սպիտակափառ և երածշտական պարեր զումարած (մարդկանց խոսմք), և ուորերով կաքավոռները, դրսում հնչեցնող երգողները, և շեփորվող ներդաշնակ մեղեղիները, որովիետև սրանք ինքնին սեփականված են, (կարծում ենք), թրակացիներից, հատկապես (դա) ցածր դասի մարդկանց է պատկանելիս եղել, որոնք մաքրագոյն և վճիտ (երգը քթի տակ (կատարվող) բացականչությունների ձևով կամ հարմարեցված ձայնով են կատարել»<sup>213</sup>:

Այս պարբերության թարգմանության մեջ նույնպես կան անձշտություններ, ընդ որում հենց երածշտական, կատարողական հասկացողություններին վերաբերող, օրինակ. «Փ յատանցն ներքինեաց մաքրագոյն եւ վճիտ քմազարդութիւն եւ բացագանչութիւն պատկանեալ եւ յարմարեալ ձայնի» նախադասությունը, որը թարգմանել ենք հետևյալ կերպ. «այն հասուկ է պատկանավոր և հարմարեցված ձայնեղանակով ատտիկյան ներքինիների մաքրագոյն և վճիտ ներդաշնակ երգեցողությանը և բացականչությանը»: Այսինքն, խոսքն այսուեղ կատարատների

<sup>212</sup> Թղթեր, էջ 222-223:

<sup>213</sup> Հավեկված, էջ 147:

Երգեցողության մասին է, որը հայտնի է եղել Անիում Բյուզանդիայից հրավիրվող կատարողների՝ կատարատների շնորհիվ, իսկ Գրիգոր Մագիստրոսը, որպես բյուզանդական հոգևոր երգարվեստին և արքունիքի երաժշտական կյանքին քաջատեղյակ և գեղարվեստի հանդեպ զգայուն անձնավորություն, անդրադարձել է տվյալ երևույթին՝ հավաստելով, որ այն առկա է եղել Անիում ևս:

Գրիգոր Մագիստրոսի ուշադրությունից չի վրիփել նաև գուսանական արվեստը, որն Անիում, ինչպես վկայում են պատմական աղբյուրները, ծաղկում է ապրել: Այսպես, «Մեկնութիւն քերականի» աշխատության մեջ Մագիստրոսը հաստատել է, որ «կարկատուն բանիւք յարամանին շարամանեալ ամենայն մրմունջք եւ երգք գուսանութեան (...) գոր այժմ ի հայումն առաւել քան ի յունականին գտանեմք»<sup>214</sup>: Այսինքն՝ «Կարկատուն խոսքերով հարմարեցնում են շարելով բոլոր մրմունջները և գուսանական երգերը, որոնք ներկայումն հայերի մոտ առավել տարածված ենք գտնում, քան հույների»<sup>215</sup>:

Այսպիսով, Գրիգոր Մագիստրոսը ներկայանում է ոչ միայն իբրև Անիի թագավորության շրջանում ձևավորված նոր տիպի երեսելի գիտնական և արվեստագետ, որի վաստակն ու ներդրումը, մասնավորապես, ազգային երաժշտական մշակույթի մեջ դժվար է գերազնահատել, և որն իր նկատելի հետքն է թողել ոչ միայն որպես շարականազիր և տաղասաց, երաժշտության գեղագետ, այլ նաև հեղինակ, ով իր Նամականիում անգնահատելի վկայություններ է բողել իրեն ժամանակակից երաժշտական կյանքի և մտավորականությանը հուզող այլեայլ հրատապ՝ գեղագիտական բնույթ կրող հարցերի վերաբերյալ:

Գրիգոր Մագիստրոսի թողերը և «Մեկնութիւն քերականի» երկը լիովին պատկերացում են տալիս նրա գեղագիտական հայացքների մասին և ներկայացնում են Մագիստրոսին որպես իր ժամանակի հանրագիտակ և առաջադեմ մտածող:

<sup>214</sup>Տե՛ս Ածոնդ Հ. Կշվ. աշխ., էջ 231-232:

<sup>215</sup>Հատվածի թարգմանությունը մերն է:

## ԳԼՈՒԽ ՀԻՄԳԵՐՈՐԴ

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ԻՄԱՍՏԱՄԵՐԻ ԵՐԱԺԵՏԱԿԱՆ ԺԱՌԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Հովհաննես Սարկավագի կյանքի մասին պատմում է հայ միջնադարյան մատենագրության մեջ պահպանված նրա վարքը<sup>216</sup>: Աղբյուրներում նա մեծ մասամբ հիշատակվում է որպես սարկավագ, սակայն որոշ տեղերում, օրինակ՝ վարքում, անվանվում է նաև վարդապետ, երրեմն՝ քահանա: Ուշագրավ են Հովհաննես Սարկավագի վարքի հետևյալ տողերը, որոնք վերաբերում են նրա մանկության տարիներին. «Սա ի մանկական տից եւ ի խանձարոց ըստ սրբոյն Սամուելի նուիրեալ Աստուծոյ եւ կուսութեան, յարենէ եւ յարգանդէ քահանայից սնեալ եւ դաստիարակեալ առ սրբանունդ քեռույն իւրոյ ի վանս Հաղբատ»<sup>217</sup>: Այնուհետև վարքի անանուն հեղինակը գրում է. «Ցառաջազոյն տուալ ի վարժս երաժշտական հոգեւոր ուսմանց եւ ապա յերեւման մեծին ի նմա ծածկելոյ գանձին, աւանդեցալ եւ յանձն արարաւ ի քեռույն իւրմէ ուռճացի վարդապետին»<sup>218</sup>: Այսուեղից պարզ է դառնում, որ Հովհաննես Սարկավագն իր կրթությունը շարունակել է Գևորգ Ուրծացու մոտ, որն իր ժամա-

<sup>216</sup>Տե՛ս Իсточники по истории высших школ средневековой Армении (XII-XV вв.), Перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К.С. Тер-Давтян. Предисловие и редакция С.С. Аревшатяна, Ереван, 1983, сс. 8-20. Армянские жития и мученичества (V-XVII вв.), перевод с древнеармянского, вступительные статьи и примечания К.С. Тер-Давтян, Ереван, 1994, сс. 72-82. .

<sup>217</sup>Հանդէս բանի վասն երանեալ առևն Աստուծոյ Սարկավագին կենաց և մահուն, և այլոց հուաց յայլ ժամանակս, ուն և Յովսէփեան Գ. Յիշատակարանը ձեռագրաց, հ.Ա. Անդրլիխա, 1931, էջ 335:

<sup>218</sup>Նույն տեղում:

նակի հայտնի գիտնական-մանկավարժ վարդապետներից էր<sup>219</sup>: Հետազայում Հովհաննես Սարկավագը հոչակ է ձեռք բերել իրու իմաստաեր, հանրագիտակ գիտնական, գրադիլ է մանկավարժությամբ: Մեծ է եղել նրա համբավը որպես բանաստեղծ և երաժիշտ: Հայտնի է, որ նա եղել է Անիի և Հաղպատի վարդապետարանների ուսուցչապետ: Նա շարունակել է Գրիգոր Մագիստրոսի սկսած կրթական համակարգի բարեփոխումները: Կյանքի մի շրջանը, հատկապես կյանքի վերջին տարիները, անց է կացրել Հաղպատի վանքում՝ դասավանդելով, որտեղ և մահացել է թաղվելով վանքի տարածքում: Իր եռանդրուն և բազմակողմանի գործունեության շնորհիվ Անիի դպրոցն աննախադեպ ծաղկում է ապրել պատրաստելով հայ մշակույթի հետագա զարգացման համար պիտանի բազմաթիվ աշակերտներ: Հովհաննես Իմաստաերի եռանդրուն գործունեությունն ուղղված է եղել նախնառաջ կրթական համակարգի բարեփոխումներին: Այդ առումով նա հիրավի Գրիգոր Մագիստրոսի սկսած գործի արժանի շարունակողն է եղել: Իսկ Մագիստրոսի մանկավարժական սկզբունքների մասին հստակ պատկերացում են տալիս նրա մի շարք նամակներում ուսումնական ծրագրերի կապակցությամբ արտահայտած գաղափարները: Այսպես, Պետրոս Գետադարձին ուղղված նամակներից մեկում Գրիգոր Մագիստրոսը, անդրադարձնալով «Բոլոր Էակացն խոկմունս»-ին, գրել է հետևյալը. «...զիրս Անանիա Շիրակայնոյ (...) յորում եւ ենթակայացեալ են ոչ միայն քաղիցն արհեստք (...) յորում մթերեալ են տողորք աստուածային եւ ենթակայացեալ ամենայն արհեստի մակացութեան եւ նախադասեալ է թուականութեանն եւ երածըշտականութեանն»<sup>220</sup>: Ուստի ակներև է, որ Հովհաննես Սարկավագը, հետևելով Մագիստրոսի որդեգրած սկզբունքներին, բացի քերականությունից և տոմարից, դասավանդել է քառյակ գիտությունների ամբողջական միակցությունը, այն է՝ թվաբանություն, երկրաչափություն, երաժշտություն և աստղաբաշխություն, այ-

<sup>219</sup> Գևորգ Ուրծացու մասին տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն հայոց, աշխ. Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, Առաջարան, էջ Զ:

<sup>220</sup> Տե՛ս Գրիգոր Մագիստրոսի Թոքերը, էջ 8:

սինքն՝ այն, ինչ հնուց ի վեր, սկսած բարգմանչաց դարից, մշտապես ուսուցանվել է հայոց վարդապետարաններում: «Յետ այսուրիկ, - հայտնում է Սարկավագի կենսագիրը, - ի խոյց եւ ի քնին ընթացից լրացարացդ մտեալ, տայր գումարել ի միատեսական եւ յանատերիւր թիւս տումարի զուշ եւ զակն ոգուց, եւ տեղեակ առներ տօնից կարգաւորաց եւ փոփոխմանց ամսոց եւ ամանակաց եւ եղանակաց քառարածին տարատմամբ: Եւ որ ինչ ի քառեակս եւ ի բոլորս եղեալ են երկասիրացն կաճառք, զայտանիս եւ զարդինարար իրս»<sup>221</sup>: Եվ ավելի մասնավորելով խոսքը Հովհաննես Իմաստասերի դասավանդած առարկաների վերաբերյալ՝ վարքագիրը նշում է. «Նախ զքերականութիւն՝ զբանալին զիտուրեան եւ զգաստիարակն վերծանութեան եւ զաղբերն տասնեակ առողջանութեանց, յորմէ եւ որով տրոհին միտք եւ ձանաշին ոյնք քաջացն եւ հեշտանան լսելիք ունկնդրացն, տեղեկանան երկայնագունիցն եւ սղիցն սիդորքայից երկամանակացն եւ անձայնիցն, եւ տրամախոն անկեցելոյ նշանին, ըստ վերսաստութեան շեշտի եւ ըստ պարբեկութեան պարուկի, եւ յարառուցելոյ ապարարցի, զի մի ծիծաղելի չար խոհակերի նմանեալ, զուոն առ միջակ եւ ստորատ առ աւարտ եղեալ ի կատարեալ մտաց, տարորոշ զբանն առնիցեն: Որոյ եւ զկնի կրթէր, արկանէր ի զիրս նուրս եւ դժուարալուրս եւ ըստ առողջանութեանց եւ զբառ, առնլով համարս, ստուգի պահանջեր»<sup>222</sup>: Ինչպես նկատել է Ն. Թահիմզյանը. «Ուշագրավ է, որ այստեղ առաջ բերուած պահանջների հաշուառումը նպատակ ունի պատշաճ մակարդակի վրայ դնելու արտասանուող եւ կամ թուերգուող որեւէ հատուածի կատարումը, թէ՛ բովանդակութեան (յստակութեան), եւ յէ՛ ձեւի (զեղագզայական) առումներով: Որպեսզի այն, - եղրակացնում է երածշտագեւոր, - լինի ոչ միայն իմաստով ճիշտ, այլեւ հնչողութեամբ ախորժալուր: Այնպէս, որ «հեշտանան լսելիք ունկընդրացն»<sup>223</sup>:

<sup>221</sup> Յավսեփեանց Գ. Թիշատակարան ձեռագրաց, էջ 337-338:

<sup>222</sup> Նույն տեղում, էջ 337:

<sup>223</sup> Տէ՛ ս Թահիմզյան Ն. Կ., նշալ. աշխ., էջ 13:

Արդեն հիշատակել ենք Հովհաննես Սարկավագի նշանակալի մասնակցությունը սաղմոսւերգության բարեկարգման գործում: Ըստ մատենագրական աղբյուրների՝ Հովհաննես Սարկավագը պաշտոնավարել է Անիի մայր տաճարում: Ինչպես կարդում ենք մի ձեռագրի հիշատակարանում. «Եւ զծեցաւ սայ ձեռամբ իմ յետին անարժան եւ մեղապարտ Սարկոսի (...) յընտիր եւ յազնիր օրինակէ, զոր Սարկաւագ քահանայ, սպասաւոր տուքք կաթողիկէ Մեծի՝ որ յԱնի, ի բազմաց օրինակաց, ի ձեռն եւ այլոց զիտնականաց զօտուակարսն առեալ հաւաքեաց ի մի զիր, եւ շարագրեաց իւրով ձեռամբ»<sup>224</sup>:

Վերը նշված իր ուստιմնասիրության մեջ Ն. Թահմիզյանն անդրադարձել է նաև Հովհաննես Սարկավագ Իմաստասերի հեղինակած աղոթագրքին՝ բարձրացնելով Գրիգոր Նարեկացու և Հովհաննես Սարկավագի նույնանուն ստեղծագործությունների հարաբերակցության հարցը: Հղելով Ղ. Ալիշանի հեղինակավոր կարծիքը՝ նա մեջբերում է վերջինիս հետևյալ տողերը. «Մենք քսան հատ ճանչեր էինք, - զրել է հայր Ղևոնդը, - Հովհաննես Սրկ. Իմաստասերի աղոթքների մասին, - ամէնն ալ ընտիր, զսեմ, սրտաշարժ, որ եւ ամէն մեր նախնի աղօթագիրքերէն գերազանց, եւ կերպով մը Նարեկացիէն ավելի բնական եւ կատարեալ, թէպէտ Նարեկն ալ անհաւասարելի է իր կարգին մեց»<sup>225</sup>: Բնականաբար, այն, որ Սարկավագ Իմաստասերը քաջատեղյակ է եղել Նարեկացու Աղոթագրքին, կասկած չի հարուցում: Սակայն իրենք հղանալով՝ նա ստեղծել է այնպիսի մի աղոթագիրք, որը «արուեստով, գեղագիտական ըմբռնումներով, լեզուամտածողութեամբ ու ոճով այնքան նոր երեւոյթ դարձավ, որ եթէ Յովի. Սրկ. Իմաստասերից ուրիշ բան հասած չինէր, լոկ այն էլ բաւական կարող էր լինել»<sup>226</sup>, որպեսզի նրան դասեինք հայ մեծանուն բանաստեղծների շարքում: Ալիշանը, նկատի ունենալով Ներսէս Շնորհալուն և նրա անմիջական շրջապատի մատենագիրներին,

<sup>224</sup> Ս. ձեռ. 666, էջ 250ա:

<sup>225</sup> Տէս Ալիշան Ղ. Յովհաննես Սարկաւագ վարդապէտ, «Բազմավեպ», Վենետիկ, Ե. 1847, էջ 219:

<sup>226</sup> Թահմիզեան Ն. նշվ. հոդվածը, էջ 17:

իրավացիորեն որակել է Հովհաննես Սարկավագին հետևյալ խոսքերով. «ան դպրոցէն չէր, բայց կրնայ հայրը ըստիլ անոր, որովհետեւ քան զայն քիչ մը առաջ նոյն շնորհրով փայլեցաւ՝ հանդերձ հին վսեմութեամբ, եւ իր վարպէտ գրուցուածքովը եղաւ եզական եւ աննման մատենագիր մը»<sup>227</sup>:

Նախքան Հովհաննես Սարկավագի շարականների քննությանն անցնելը, նպատակահարմար է ընթերցողի ուշադրությունը գրավել այն հանգամանքի վրա, որ Աղոռագիրը իբրև գրական ժանր սերտ կապի մեջ է գտնվում հոգևոր երգարվեստի տեսակների հետ, ինչը ցայտուն կարելի է դիտարկել Գրիգոր Նարեկացու Ողբերգության Մատյանի օրինակի վրա: Այդ իրողության վրա ուշադրություն է դարձրել տակավին Ն. Թահիմզյանը՝ գրելով. «Մեզ համար Յովի. Մրկ. Իմաստասէրի աղօթագիրը կրկնակի նշանակութիւն ունի: Նախ՝ այն մի քանալի է, հասկանալու համար նրա արուեստի ոճական մի քանի կարեւոր առանձնահատկութիւններն ընդհանրապէս (ինչպէս ստեղծագործական, նոյնպէս եւ կատարողական հարթութիւնների վրայ): Եւ հետոյ՝ աղօթագիրը մատնանշում է նրա գործի անմիջական վերաբերութիւնը ժամերգութեան եւ Պատարագի արարողութեան նկատմամբ»<sup>228</sup>, ինչը շատ տեղին եւ ճշգրիտ դիտարկում է:

Որպէս շարականագիր՝ Հովհաննես Սարկավագն ունի իր որոշակի ավանդը Շարակնոցի մեջ: Նա մի քանի հայտնի շարականների ստեղծողն է: Վերջին տասնամյակների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ նա հեղինակել է ոչ միայն Կիրակոս Գանձակեցու հիշատակած Ղևոնյանց կանոնի «Պայծառացան այսօր» գողտրիկ ճաշուն, այլ նաև՝ նույն կանոնի «Անձառելի բանն Աստուած» մանկունքը, ինչպէս և Հոփիսիմյանց կանոնի «Անսկիզբն բանն Աստուած» համբարձին ու Վարդանանց հիշատակին նվիրված կանոնի «Անքառամ սիրոյ ծնունդը» օրինությունը: Վերջինս, դժբախտաբար, ժամանակի ընթացքում մեզ անհայտ պատճառներով, դուրս է մնացել կանոնակարգից՝

<sup>227</sup>Տե՛ս Ալիշան Ղ., Հովհաննես Սարկավագ վարդապէտ, էջ 214:

<sup>228</sup>Տե՛ս Թահիմզյան Ն., Խշկ. հոդվածը, էջ 18:

հայտնվելով պարականոն շարականների թվում<sup>229</sup>, ինչի հետևանքով կորավել է նրա մեղեղին<sup>230</sup>:

Գնահատելով շարականիս երաժշտաբանաստեղծական արժանիքները տվյալ երգասացությանն անդրադարձած հեղինակները հայտնել են ոչ այնքան բարձր կարծիք: «Արուեստով երեւելի նմոյշ չե», - զրել է Թահմիզյանը<sup>231</sup>: Արեւյանը նշել է նրա «մեծ ու վեեմ» բովանդակությունը, սակայն համարել ձեւով «հասարակ ու հետեւակ բան»<sup>232</sup>: Թահմիզյանն էլ երկրորդել է այդ կարծիքը՝ ավելացնելով, որ նոյնը կարելի է ասել «շարականիս երաժշտութեան նվատմամբ եւս»<sup>233</sup>: Սակայն անդրադարձարով տվյալ շարականի հեղինակային պատկանելության հարցին Թահմիզյանը, վկայակոչելով Կիրակոս Գանձակեցու հաղորդածը՝ «արար եւ շարական Ղետնդեանցն քաղցր եղանակաւ եւ յարմար բանիս, որոյ սկիզբն է այս. Պայծառացան այսօր սուրբ Եկեղեցիք»<sup>234</sup>, ենթադրել է, որ շարականը մեզ է հասել աղճատված, փոփոխված տեսքով: «Կարո՞ղ է պատահել, որ Գանձակեցին օգտուած լիներ մի շարակնոցից, ուր Ղետնդեանց կանոնը բոլորովին այլ կառուցուածք ունենար, քան աւելի ուշ ընդհանրացած շարակնոցներում», - զրում է նա<sup>235</sup>: Եվ նշում այն հանգամանքը, որ, օրինակ, շարականների հեղինակների առաջին ցուցակագիրներից մեկը՝ Սարգիս Երեցը (XIII-XIV դդ.), Մաշտոցյան Մատենադարանում պահպող հայտնի Շարակնոցին (Ճեռ. 2092) կցված ցուցակում արձանագրել է հետևյալը. «զՂետնդեանց՝ Անձառելի բանդ Աստուածն, [եւ] Վարդանացն՝ Անբա-

<sup>229</sup> Տե՛ս Ամասունի Ս. Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ, էջ 165:

<sup>230</sup> Տե՛ս Թահմիզեան Ն. Յովհաննես Սարկարաց Իմաստաերը և հայ միջնադարեան մշակույթը (առանձնատիպ), էջ 28: Նոյնի, Գրիգոր Նարեկացին և Նայ երաժշտությունը V-XV դարերում, էջ 235, 239:

<sup>231</sup> Նոյն տեղում:

<sup>232</sup> Տե՛ս Արեւյան Մ. Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 71:

<sup>233</sup> Տե՛ս նշվ. հոդվածը, էջ 21:

<sup>234</sup> Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, էջ 113:

<sup>235</sup> Տե՛ս Թահմիզեան Ն., նշվ. հոդվածը, էջ 22:

ուամ սիրոյ ծնունդըն, Յոհաննու քահանայի ասացեալ»<sup>236</sup>: Այսինքն՝ Սարգիս Երեցը անգամ չի էլ նշել «Պայծառացան այսօր» ճաշուն Հովհաննես Սարկավագին վերագրվող շարականների թվում: Սակայն արդյո ք «Պայծառացան այսօր» շարականը երաժշտական առումով այդքան անարհեստ մի կտոր է իրականում: Մեր վերլուծությունը ցույց տվեց, որ դա չի համապատասխանում իրականությանը, և դա կփորձենք ցուցանել մեջ-բերելով շարականի մեղեղին:

**Օրինակ 18**  
«Պայծառացան այսօր»

Հայ շարականներգության մեջ ընդհանրացած վանկային և ներվանկային կառուցվածքի հոգևոր երգերի շարքում Հովհաննես Սարկավագի «Պայծառացան այսօր» ճաշուն ներկայանում է իբրև շատ տիպական մի նմուշ, որն «ունի հայրենասիրական սրտառուչ բովանդակութիւն. սելջուկեան արշաւանքների պատ-

<sup>236</sup> Տէ՛ս Անաստան Հ. Հայկական մատենագիտություն (Ե-ԺԸ դդ.), հ. Ա, Երևան, 1959, էջ LXVI:

ճառով ցրուած հայերին Հայրենիք է կանչում»<sup>237</sup>: Այև հատկորոշ վում է հանդարտ, միջին-չափավոր շարժումով, մեղեղու զուտ դիատոնիկ, այսինքն բնական հնյունաշարի վրա հիմնված զուլալ մի եղանակով, որը կոչված է փառաբանելու սուրբ Ղեղինյանց նահատակների հավատքի համար գործած վիրանքը:

Ինչպէս տեսնում ենք, շարականիս լրսավոր («Պայծառացան» բառի իմաստից, կարծես, բխող), խաղաղ մեղեղին ոչնչով չի զիջում այլ հեղինակների շարականներին: Նրանում ներդաշնակորեն զուգորդվում են չափավոր-միջակ շարժման շարականներին բնորոշ վանկային և ներվանկային սկզբունքները: Շարականը զրված է ԴԶ-ում պահպանելով տվյալ ձայնեղանակին հատուկ սկզբնամասի, միջնամասի, կիսահանգածների (կիսակադանսների) և վերջնամասի բնորոշ ելեկային դարձվածքները: Դա հաստատում է այն փաստը, որ Հովհաննես Սարկավագը կատարելապես տիրապետել է Ուրծայն համակարգի տեսական և գործնական բաժիններին: Եվ Թահիմզյանի վարկածը, թե տվյալ շարականը Հովհաննես Բմաստասերը հեղինակել է տակավին երիտասարդ տարիքում, եթե նոր է սկսել ստեղծագործել իբրև շարականագիր և դեռ ձեռք չեր էրեկ անհրաժեշտ փորձառությունը, ոչ մի իրական հիմք չունի<sup>238</sup>:

Հայ բանասիրության մեջ ընդունված է այն արդարացի տեսակետը, որ Ղևոնյանց «Անձառելի բանդ Աստուած» մանկունքը Հովհաննես Սարկավագի անունով հասած լավագույն շարականն է՝ երաժշտական բաղադրիչի առումով: Ինչպէս այդ կապակցությամբ նշել է Թահիմզյանը, տվյալ շարականի «վիպարնարական լայնաշունչ եղանակը դկ. դարձուածքի հոյակապ նմոյշ է: Եւ երգն, ամբողջութեամբ առած, նշանակալի չափով զարգացնելով Կոմիտաս կաթողիկոսի «Անձինք նուիրեալք» շարականի զրական ու երաժշտական բաղադրիչների կառուցուածքային լաւագոյն յատկանիշները, անմիջականորեն նախապատրաստում է Ներսէս Շնորհալու անկրկնելի «Նորահրաշ պատրաստում է Ներսէս Շնորհալու անկրկնելի «Նորահրաշ պատ-

<sup>237</sup> Թահիմզյան Ն. տէ՛ս նշվ. հորվածը, էջ 21:

<sup>238</sup> Տէ՛ս նույն տեղում, էջ 25:

կաւոր»ը՝<sup>239</sup> Եվ, իսկապես, այդ շարականն աչքի է ընկնում դասական ավարտվածությամբ և հղկվածությամբ: Սակայն շմոռանքն նաև, որ հեղինակն այն կերտելիս իբրև չափանմուշ է ունեցել Ն. Թահիմիզյանի կողմից արդարացիորեն մատնանշված Կոմիտաս Աղցեցու «Անձինք նուիրեալք»-ը՝ հայ հոգեոր միջնադարյան երգարվեստի չգերազանցված նմուշը, որը նոր էջ բացեց հայ շարականերգության մեջ: Եվ մնացած նմանատիպ երգասացություններ կերտողները հետևել են Կոմիտաս կաթողիկոսի որդեգրած սկզբունքներին ամեն ինչում, ներառած՝ ձայնեղանակը (ԴԿ դարձվածք), շարժումը (չափավոր-միջակ), ծավալը, ակրոստիքոսի կիրառությունը: Հետևաբար, որքան էլ բանասերներն ու երաժշտագետները գնահատեն «Անձառելի բանդ Աստուած» շարականի երաժշտարանաստեղծական արժանիքները, այն չի գերազանցում իր նախատիպարը:

Ինչ վերաբերում է «Անըսկիզբն բանն Աստուած» սկզբնատողով շարականին, ապա «այն՝ իր վսեմ բովանդակութեամբ, լեզուով, գրական խոսքի կառուցուածքով ու եզակի կազմութեամբ յար եւ նման է «Անձառելի բանդ Աստուած» կտորին»<sup>240</sup>: Այդ շարականի վերաբերյալ որոշ բանասերներ կարծիք են հայտնել, որ այն ոչ թե Հովհաննես Սարկավազի հեղինակումն է, այլ գրվել է շատ ավելի վաղ՝ V դարի երկրորդ կեսին, և նրա հեղինակն է Հովհաննես Սանդակունի կաթողիկոսը<sup>241</sup>: Այդ տեսակետը հիմնված է Գրիգոր Տաթևացու կազմած ցուցակի տվյալների վրա, որտեղ կարդում ենք. «զշոյիսիմեանց անձինքն եւ զհարցն՝ տէր Կոմիտասն, իսկ զԱնսկիզբն՝ Յոհան Մանդակունին, եւ այլը ասեն, թէ Ուձնեցին»<sup>242</sup>: Սակայն այստեղ անպայման պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ վերոհիշյալ շարականը նվիրված է Հոյիսիմյանց կույսերի հիշատակին, իսկ այդ տոնը տոնացույցի մեջ է ներմուծվել 618 թվականից հետո՝

<sup>239</sup> Թահիմիզյան Ն., նշվ. հոդվածը, էջ 23:

<sup>240</sup> Ըստն տեղում:

<sup>241</sup> Տե՛ս, օրինակ, Հակոբյան Գր. Շարականների ժանրը հայ գրականության մեջ, էջ 96:

<sup>242</sup> Տե՛ս Անապյան Հ. Հայկական մատենագիտություն, հ. Ա, էջ LXVII:

Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ: Բացի դրանից, վերոհիշյալ շարականում կիրառված է ակրոստիքոսի, այն էլ՝ տողային ակրոստիքոսի ձևը, ինչը բավական հազվադեպ երևույթ է ոչ միայն հայկական շարականերգության, այլև առհասարակ արևելաքրիստոնեական հիմներգության մեջ: Այդ ձևը դեռևս մշակված չէր Մանդակունու ապրած ժամանակներում: Այն ի հայտ է եկել ավելի ուշ՝ VII դարում, բյուզանդական հիմներգության ամենանշանավոր հեղինակներից մեկի՝ Ռումանու Երգեցողի կոնտակիոններում, ուստի հասկանալի է, որ Հովհ. Մանդակունին չէր կարող լինել այդ շարականի հեղինակը<sup>243</sup>: Թահմիջյանն արդարացիորեն նշել է. «...նոյն իմաստները, հռետորական նոյն ողին, նոյն լեզուն ու ոճը, նոյն տաղաչափութիւնը, եւ ակրոստիքոսը՝ ա-ք, ամփոփուած տասը տների մեջ, ու նաև վիպա-քնարական դկ. դարձուածք նոյն մեղեղին: Այս բոլորը կասկած չեն թողնում, որ այն շարականը ես Յովի. Սրկ. Իմաստասերի հեղինակութիւնն է»<sup>244</sup>:

Այս գործերում, որոնք նշանակալից են թե՛ գրական և թե՛ երաժշտական բաղադրիչի առումով, Հովհաննես Սարկավագը հանդես է զալիս որպես բյուզանդական կոնտակիոն ժանրի ավանդույթի վրա հիմնվող հեղինակ: Նա հետևում է Կոմիտաս Աղցեցու «Անձինք նուիրեալք» շարականի օրինակին՝ կերտելով վիպաքնարական շնչի բազմատոն և բարդ տաղաչափությամբ՝ տվյալ դեպքում, ազատ տաղաչափությամբ գրված բարձրարվեստ մի ներքող, որը մտահղացված է այբբենական ակրոստիքոսով:

Նախասիրած ձայնեղանակը ԴԿ դարձվածքն է, որին հաճախ են դիմել ազգային հերոսներին և նահատակներին մեծարող շարականագիրներն իրենց երգասացություններում<sup>245</sup>: Ակներև է,

<sup>243</sup> Այդ մասին տե՛ս նաև Թահմիջյանի նշված հոդվածում, էջ 24:

<sup>244</sup> Նոյն տեղում, էջ 23:

<sup>245</sup> Տվյալ երևույթի մասին առավել մանրամասն տե՛ս մեր հոդվածը՝ «Կայսերական և շարականերգութիւն. Հայկական Ութձային ԴԿ դարձուածքի առեղծուածը», ՀՀ, հ. ԻԳ, Պեյրութ, 2003, 163-175: Տե՛ս նաև ֆրանսերեն՝

որ, օրինակ, Ներսէս Շնորհալին իր «Նորահրաշ»-ը եղանակավորելիս աչքի առաջ է ունեցել Պետրոս Գետաղարձի և Հովհաննես Սարկավագի այդ ձայնեղանակում ծավալվող բարձրարժեք նմուշները:

**Օրինակ 19**  
**«Անըսկիզբըն բանն Աստուած»**

*Զափառոց*

Ան - ըս - կիզբ  
բանն Աստ - ասծ, որ վա - սրբ մեր համ - բեր մա -  
հու, բան - մա - լոլ լոլ - ոյս տա -  
կմիզ մ - օր - օկոչ տա ի մենչ  
զե - րա - սրասծ մար - րու զե - րա - զուանց իս  
յա - կից իս ու զե - կուզ կու մա -  
որ մանի ամբ ի բանց:

Հովհաննես Սարկավագի անունով պահպանվել է նաև Հարության մի տաղ՝ «Ծագումն փառաց էին, միայն միաձին որդին» սկզբնատողով, որը, ինչպես նրա խորագիրն է հաղորդում ձե-

ռազրում, կատարվել է բովանդակ տարվա յուրաքանչյուր կիրակի օրը<sup>246</sup>, ինչպես նաև՝ «Յիսուս հաւր միածին, զուգապատիւ և գոյակից բան» սկզբնատող ունեցող ողբը, որն օժոված է ուշագրավ և ծավալուն ծայրակապով՝ «Հովհաննէս քահանայ Սարգսի մեծի խնդալ Ած. կենդանի»<sup>247</sup>: Հայտնի է նույնիսկ տվյալ ողբի ձայնեղանակը՝ ԲԿ, Աւագ կողմ, ինչն ամենին միշտ չէ, որ նշվել է տաղատիպ գործերի, այդ թվում՝ ողբերի կապակցությամբ:

Այսպիսով, Հովհաննէս Սարկավագի անունով հասած և Շարակնոցում վավերացված շարականներն իրենց որոշակի տեղն են զբաղեցնում Անիի հետ կապված շարականագիրների ստեղծագործությունների շրջանակում, արժանի են հիշատակման, գնահատման և ուսումնասիրության:

Սակայն շատ ավելի նշանակալից և նորարարական են Հովհաննէս Սարկավագ Իմաստասերի գեղագիտական հայացքները, որոնք բոլորովին նոր և աննախադեպ երևույթ են հայ իրականության այն ժամանակվա գիտական մտքի անդաստանում: Մասնավորապես, երաժշտական արվեստին առնչվող զադափարներն ու դիտարկումները, որոնց լրացրանմանը նվիրված է հաջորդ գլուխը, նոր եղ են բացում հայ գեղագիտական մտքի զարգացման պատմության մեջ:

<sup>246</sup> ՍՍ, ձեռ. 3503, 1394թ., թղ. 160ա:

<sup>247</sup> Ազրահամյան Ա. Հովհաննէս Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 325-326:

## ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՂԴԻ

### ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԿԱՎԱԳԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ

Ժամանակի աշխարհականացման խորացող ռդին իր արտահայտությունն է ստացել հատկապես Հովհաննես Սարկավագի՝ երաժշտական գեղագիտության մեջ ներմուծած մի քանի կարևոր գաղափարներում։ Հիմնվելով նախորդ դարերի հայ մտածողների նվաճումների վրա նա զարգացրել է Դավիթ Անհաղթի մշակած՝ ձայնի մասին ուսմունքը՝ հարստացնելով այն իր ժամանակի պատկերացումների և սեփական լսողական փորձի համաձայն։ Նա առաջինն էր հայ իրականության մեջ, ով արծարձեց գործիքային երաժշտության ինքնաբավ նշանակության գաղափարը՝ հակադրվելով ինչպես անտիկ փիլիսոփաներին, այնպես էլ՝ քրիստոնեական գաղափարախոսությանը։ Սարկավագի գեղագիտական հայցքների վերլուծությունը վկայում է, որ նա քաջատեղյակ է եղել Պլատոնի, Արիստոտելի, Զերակլիտի, Դեմոկրիտի, Փիլոնի և այլոց՝ գուցեն լատինալեզու փիլիսոփաների, ինչպես, օրինակ, Օգոստինոս Երանելու կամ Բոեցիոսի ժառանգությանը։ Մասնավորապես, դա վերաբերում է Զերակլիտի դիալեկտիկական սկզբունքներին, նրա այն թեզին, թե «տարընթացողը գուգադիպում է և զանազան [ձայնաստիճաններից] առաջանում է գեղեցկագույն ներդաշնակություն, և ամեն ինչ գոյանում է պայքարի միջոցով»<sup>248</sup>։ Անտիկ դիալեկտիկայի այս հայտնի դրույթը զարգացրել է Արիստոտելը։ Ըստ Արիստոտելի՝ համահնչյունությունը «որոշակի փոխադարձ հարաբերության մեջ գտնվող հակադրությունների խառնումն է»<sup>249</sup>։ Հովհաննես

<sup>248</sup> Մեջբերումը ըստ՝ Միրումյան Կ. Հովհաննես Սարկավագի աշխարհայցքը, Երևան, 1984, էջ 217։

<sup>249</sup> Մեջբերումը ըստ Լոսև Ա.Փ. "Античная музыкальная эстетика", М., 1962, էջ 121։

Սարկավագի երաժշտական ժառանգությանը նվիրված իր բովանդակալից ուսումնասիրության մեջ Ն. Թահմիզյանը, վկայակոչելով Սարկավագի անանուն կենսագրի հաղորդած տվյալները, նշել է. «Իմաստասէրը քաջ տեղեակ էր, մասնաւրապէս, Արիստոտէլի եւ Փիլոն Աղեքսանդրացու աշխատություններին, որոնք, ինչպէս յայտնի է, ընդհանրապէս աջի են ընկնում նաեւ երաժշտարուեստին վերաբերող արժեքաւոր ասույթներով ու տեսական դրույթներով»<sup>250</sup>:

Հովհաննես Սարկավագի աշխարհայացքի ուսումնասիրությանը նվիրված մենագրության հեղինակ Կաղէն Միրումյանն իրավացիորեն նշում է, որ «Սարկավագի տեսական հայացքների ընդհանուր համակարգում իր արժանի տեղն է գրավում նրա էսքետիկան: Նա ստեղծել է ամբողջական տեսություն արվեստի և իրականության էսքետիկական հարաբերությունների, արվեստի ծագման և նրա առարկայի, ֆունկցիաների, եռթյան մասին: (...) Նրա բազմաթիվ աշխատություններում տեղ գտած ընդարձակ արտահայտություններն էսքետիկայի մասին, որոնք մասնավորապէս վերաբերում են երաժշտական էսքետիկային, եւ ավելի են ամբողջացնում հայ մտածողի ընդհանուր էսքետիկական տեսությունը»<sup>251</sup>: Արվեստի ծագման հարցում Սարկավագը տեսնում է արվեստի ակունքները «օբյեկտիվ բնության մեջ, մարդկային անհատի յուրահատկությունների մեջ, դրանով իսկ վերածնելով դեռեւ Հին Հունաստանում ստեղծված միմեսիսի տեսությունը»<sup>252</sup>:

Հովհաննես Իմաստասէրն առաջին փիլիսոփան է հայ իրականության մեջ, ով հանդես է գալիս իրքի և մայիրիկ-սենուտականության մեջ, ով հանդես է գալիս իրքի և մայիրիկ-սենուտական գաղափարների ջատագով՝ հակվելով դեպի մ.թ.ա. Ալիստիկ, Ս.Ղազար, 1979, էջ 10:

<sup>250</sup> Տե՛ս Թահմիզեան Ն.Կ. Յովհաննես Սարկավագ Իմաստասէրը և հայ միջնադարեան երաժշտական մշակույթը (առանձնատիպ), «Բազմավէպ», Վենետիկ, Ս.Ղազար, 1979, էջ 10:

<sup>251</sup> Տե՛ս Միրումյան Կ. Աշվ. աշխ., էջ 178:

<sup>252</sup> Նոյն տեղում, էջ 179:

Արիստոքրսենի գեղագիտական տեսությունը հակադրվել է Պյուրագորյան ուսմունքին, որը մշտապես առաջնություն էր տալիս գիտական, վերացարկված մտահայեցմանը, հնյունաբանական թվային հարաբերակցությունների հաշվարկներին, ինչի շնորհիվ Պյուրագորյանը և հայտնաբերեց ակուստիկայի կարևոր երևույթներից մեկը՝ օբերտոնային շարքը օգտվելով իր իսկ հորինած՝ մոնոխորդ կամ ինչպես այն Դավիթ Անհաղթն է թարգմանաբար անվանում՝ միաղի գործիքի վրա կատարած հաշվարկներից:

Արիստոքրսենը պաշտպանում էր այն գաղափարը, որ առաջնայինը ոչ թե ձգված կամ թուլացրած լարին բայսելիս հնյունի՝ օդում առաջացրած տատանումների քանակի մաթեմատիկական հաշվարկներն են, այլ կենդանի հնչող երաժշտությունը, կատարողական արվեստը՝ երգն ու պարը, իրենց ողջ բազմազանությամբ, վոկալ և գործիքային երաժշտության ժանրային հարատությամբ: Այսինքն, հետևելով Արիստոքրսենյան տեսությանը, Հովհաննես Սարկավագն ակներևաբար նախապատվությունը տվել է փորձին: Ինչպես արդարացիորեն նշել են հայ երաժշտական գեղագիտության պատմությանը նվիրված ակնարկի հեղինակները. “За два века до Роджера Бэкона Саркаваг провозгласил опыт критерием истины. Философ, исследователь не может принимать на веру всевозможные теории и учения, ибо “без испытания и проверки опытом нельзя верить слову”<sup>253</sup>: Այդ գաղափարն է ընկած, այսպես կոչված, հարմոնիկների ուսմունքի հիմքում, որի հիմնադիրն է եղել հենց Արիստոքրսենը, ի հակադրություն այլուրագորյան՝ այսպես կոչված կանոնիկների կամ օրֆիկների ուսմունքի: Հետևաբար, Հովհաննես Սարկավագի հայացքները համադրել են վաղ միջնադարից եկող հայ Փիլիփավայության մեջ ձևավորված նեռպատճենական (նորայութագորյան) ավանդույթը՝ արիստոքրսենյան ավանդույթի հետ<sup>254</sup>:

Հատ Սարկավագի՝ երաժշտությունն օժտված է ներգործության զգալի հուզական ուժով և մեծ ճանաչողական նշանակու-

<sup>253</sup> Музыкальная эстетика стран Востока, с. 341.

<sup>254</sup> Այդ գեղագիտական ուսմունքների մակամասն ընկությունը տև և Լոսև Ա.Փ. «Античная музыкальная эстетика» գրքում:

թյամբ։ Իր «Բան իմաստութեան» («Յովհաննու սարկաւագի իմաստափրի եւ վարդապետի ասացեալ բան իմաստութեան ի պատճառս զբոսանաց. առ ձագն որ զաղօթանոցաւ նորա ճողուողէր քաղցրածայն որ կոչի սարիկ») հանրահայտ քերթվածքում, որը մտահղացված է իբրև արվեստագետի և երգեցիկ սարյակ թռչնակի միջն ընթացող երկխոսություն, ինչպես նաև՝ սարյակին ուղղված գովասանություն։ Նա առաջ է քաշել բնության գեղեցկության, նրա կատարելության՝ որպես արվեստների և, մասնավորապես, երաժշտության հիմքի, բնօրրանի և ուսուցչի զաղափարը։ Ըստ Սարկավագի՝ արվեստագետները, մասնավորապես բանաստեղծներն ու երաժիշտները պետք է տվորեն բնությունից և ընծորինակեն այն։ Այդ քերթվածքն է, որ ամփոփում է Հովհաննես Իմաստասերի գեղագիտական հայեցակարգի շարպանքը։

Պոեմը սկսվում է սարյակի՝ կենդանի մանրամասներով լի պատկերավոր նկարագրությունից։

*Արքուն եւ գուարքուն թըռչուն հրսկող եւ բարբառող,  
Կանչող եւ կարկաչող, ճրուողող ձայնող պաշտօնասէր  
Արդ եկ ինձ մերձ ի գուտոթիւն, զի արարյին փառը մէծացին,  
Մէծն ի փոկուդ քարոզեցի եւ քաջարուեստն ծանիցի<sup>255</sup>:*

Ուշագրավ են Սարկավագի գեղագիտական հայացքների հությունն արտահայտող «Բան իմաստութեան» պոեմի հետևյալ տողերը։

*Սակաւոց եղեւ զգարեծայն երգատրութիւնսն.  
Գուեցան եւ զրուեցան, յորց լրան զգաղցրավանզոն:  
Ամկիոն այր Թէրացի եւ Արիոն Սիթեմնացի,*

<sup>255</sup> Մեջբերումները «Բան իմաստութեան» պոեմից ըստ՝ Ըստիր Եղեր հայ գրականության հետազույն ժամանակներից մինչև մեր օրերը, խմբագրությամբ, Հրայր Գրիգորյանի, Նաիրի Զարյանի, Ռուբեն Զարյանի, Ստեփան Զորյանի, Էդվարդ Թոփչյանի, Ավետիք Խահակյանի, ՀՍՍՌ Պետիրաս, Երևան, 1946, էջ 230-233։

*Որդիւս Թրակացի, այս երաժիշտը են մեծագով.*

*Այլ նուազեալ են առ նօրօք, որք բնականաւն են*

*Զի գործի այսր արուեստի, նոքա չունին ի բնութենէ:*

Ինչպես գրում է Միքրումյանը. «մեջբերված հատվածից հետևում է, որ ըստ Սարկավագի արվեստն անհրաժեշտաբար պահանջում է բնածին հմտություն: Նա արվեստը ստորաբաժանում է բնականի (դրա տակ ենթադրելով բնական գեղարվեստական ընդունակություն, ձիքը) և կրթությամբ ու դաստիարակությամբ ձեռքբերված արվեստի: Երանով իսկ նա առաջարրում է բնական տաղանդի և արվեստի բնագավառում ուսուցման հարաբերակցման հարցը, այսինքն՝ այն պրոբլեմը, որն այնքան շատ հուզում էր Օգոստինոս Երանելուն»<sup>256</sup>: Սակայն եթե Օգոստինոսը գերադասում է «զիտությանն առնչվող» արվեստը՝ նկատի ունենալով երաժշտության տեսությունը, այլ կերպ ասած՝ երաժշտական զիտությունը հետևելով այլուրագրյան ավանդույթին, «ապա Սարկավագն այս նույն հարցին մոտենում է տրամագծորեն հակառակ դիրքերից»<sup>257</sup> հետևելով արիստոքրական տեսությանը: Այսպես, դիմելով սարյակ բռչնակին, նա գրել է.

*Իսկ արուեստի դու երաժիշտ ամենահնար, անվարդապետ.*

*Ինքնարաւ եւ ինքնուսումըն, վայրաքնակ եւ անքաղաք,*

*Անմերձ եւ մոտաւոր, ուրախարար լրսասիրաց,*

*Քաղցրածայն դաշնակաւոր՝ որպէս կարծէմ ըստ արուեստին:*

Հաջորդ տողերում Հովհաննես Խմաստասերը, գովարանելով սարյակի երգեցողության բազմապիսի ելեջումներն ու գեղգեղումները, ըստ կության, անդրադառնում է երաժշտությանը հասու արտահայտչականության՝ հնարավորություններին թվարկելով մի շարք զգայական տրամադրությունների բնորոշումներ.

<sup>256</sup> Նույն տեղում:

<sup>257</sup> Նույն տեղում:

*Սաստկախոս եւ հարթավանկ, իւանդաղատող եւ ողբերգակ,  
Հրամայող եւ ողոքող, ըզիրաստականը ներադրող,  
Սպառնացող եւ հեղախոս, զրգուող, կոչող եւ հրաժարող  
Կականող եւ ձայնարկու, յոյժ խրնդացող եւ զրւարձացեալ:*

Ն. Թահիմզյանը Հովհաննես Սարկավագ Իմաստասերին նվիրված իր ծավալուն հոդվածում, անդրադառնալով վերոիիշյալ պոեմին, եզրակացնում է. «Հովի. Սարկավագ Իմաստասերը մասնաւրապես երաժշտութիւնը յամարտում է սովորովի գեղարվեստ, որ ծագում ու զարգանում է որպէս բնութեանը նմանուելու եւ բնութիւնից սովորելու մարդկային ձգուման անմիջական արդիւնք: Դա գեղարուեստորեն արտայայտուած է քնարափիիիստիական ծաւալուն քերթուածքի ամենահական մասերում»<sup>258</sup>:

Դարձյալ դիմելով թոշնակին՝ բանաստեղծը հիացմունքով բացականչում է.

*Նըւազօքն կերակրեալ որպէս ունող զայն գօրութիւն,  
Պարապեալ միայն երգոց ընդ գերակայսըն կենդանիս:  
(...) Ով պարող դու անձանձիր եւ կաքաւիչ յոքնանուագ...*

Եվ վերջապես, բանաստեղծը դիմում է թոշնակին՝ ընդգծելով նրա անկախ և ազատասեր բնավորությունը, խնդրում է ուսուցիչ դատնալ իրեն, սովորեցնել արվեստի հմտությունները: Իրեն նրա միակ թերությունն նշում է այն հանգամանքը, որ թոշնակը չուզեց իրեն բույն շինել այնտեղ (ենթադրվում է՝ մարդաշատ վայրերում), որտեղ բնակվում են մյուս երգիշ-բանաստեղծները.

*Համարուեատ և անուանի, որպէս արդիւնքն վկայեն.  
Բայց միով ես պակասեալ, զի չսիրեցեր զընդ նուաւ կեալ  
Եւ չարարեր անդ քեզ զագարս, ուր եւ նորա են տաղաւեալ:*

<sup>258</sup> Տե՛ս Թահիմզյան Ն. Հովհաննես Սարկավագ Իմաստասերը և հայ միջնադարեան երաժշտական մշակույթը, Առանձնատիպ, «Բազմավեպ», 1983, էջ 7:

*Աստ զաս նըստիս մերձ առ ինեւ, իբր արուեստի ինձ  
յանգակից,*

*Բազմադեալ երգարանաւ եղանակես եւ կաքաւես.  
Հոմերական տաղիցըն չափ քեւ ծանուցեալ լինի բազմաց  
Յուտանաւոր եւ ցուցական ըստ քերթողացըն տեսակի,  
Կամ թէ եւս աւելացոյն, որպէս թրի ինձ զիտողիս,  
Զի վարժումն եւ կրթութիւն ոչ ժամանէ առ բնութիւն:*

Դուեմն ավարտվում է թօշնակի բարոյախրատական քարոզով, որի մեջ արտահայտվել է Հովհաննես Սարկավագի աստվածաբան լինելու հանգամանքը: Պատահական չէ, որ պոեմի հերոսը վարդապետ է, այսինքն ուսայալ արվեստագետ, ով ձգուում է կատարելագործվել և տիրապետել արվեստի մասնագիտական գաղտնիքներին: Իսկ քարոզի իմաստն այն է, որ մահկանացու մարդը, ով աղամական մեղքի պատճառով կորցրել է աստվածային շնորհը, չի կարող հասնել կատարելության: Պոեմը եզրափակվում է վարդապետ-հեղինակի խորհրդանշական խոսքերով, որը, ոչինչ չունենալով ի պատասխան սարյակի խրատներին, ընդունում է իր պարտությունը.

*Ճշմարտի զայս խուեցաւ ըստ պատահմունցըն հանդիպման,  
Ըզբացատրեալ հոյլը բանից իմաստաբար բարբառելով:*

*Որով յաղթեալ մեզ իմաստնոց եւ կարծեցեալ*

*Բանաստեղծացու,*

*Լոութեամբ յանդիմաննեալ, ոչ կարուեալ երկար բանից:*

«Սարկավագը մարդուն դիտում է իբրև բնության մասնիկ, - դիպուկ նկատել է Միրումյանը, - (...) իսկ բնությունն իր հերթին ներզրավված է մարդկային հարաբերությունների, անհատի հուզական ապրումների համակարգի մեջ: Դա արդեն այն բնությունն է, որը անց է կացված մարդու հոգեկան հովայերի ոսպնյակի միջով, դա մարդկայնացված բնությունն է, բնություն, որ գոյություն չունի ինքն իր համար, մարդուց դուրս և անկապ, այլ

գոյություն ունի մարդու նկատմամբ ունեցած հարաբերության մեջ: Բնությունը, բնութենականը քննվում են մարդկայինի, մարդու հոգևոր ինքնարտահայտման տեսանկյունից: Այս նույն գիծը, - ամփոփել է իր դիտարկումը ուսումնասիրողը, - նկատելի է նաև հայ երաժշտական մշակույթի մեջ, մասնավորապես, գեղչկական երգարվեստում, որը փայլուն կերպով բնութագրել է Կոմիտասը<sup>259</sup>:

Այս հանգամանքը, իսկապես, հիմք է տալիս պնդելու, որ Հովհաննես Սարկավագը որոշակի իմաստով կանխորշել է եվրոպական Վերածննդի մի շարք փիլիսոփաների գեղագիտական հայացքները<sup>260</sup>:

«Բան իմաստութեան» պոեմը որակապես նոր երևոյթ էր միջնադարյան հայ բանաստեղծության մեջ ոչ միայն լեզվի, այլ նաև թեմատիկայի առումով: Այն աշքի ընկնում, նախևառաջ, իր գաղափարներով, գրու աշխարհիկ ոգով (թեև նրանում խոսվում է նաև Արարչի, աստվածային շնորհների) և այլ աստվածաբանական հասկացությունների մասին), ինչը, եթե նկատի ունենաք Սարկավագի հոգևորական լինելը և ժամանակի կրոնական բանաստեղծության մեջ գերիշտող գեղարվեստական ավանդույթներն ու ընդունված թեմատիկ և կերպարային ոլորտները, այսօր ել ընկալվում է իբրև իր ժամանակի յուրատեսակ գեղագիտական մի մանֆեստ:

Այսպիսով, ի դեմս Հովհաննես Սարկավագ Իմաստասերի, մեր առջև հառնում է Անիի թագավորության շրջանի, հիրավի Վերածննդի շունչն արտահայտող մի ինքնատիպ, հանրագիտակ մտավորական, որն իրեն հավասարապես փայլուն դրսուրել է ինչպես գիտությունների տարբեր բնագավառներում, այնպես էլ բանաստեղծության, շարականերգության և երաժշտական գեղագիտության ասպարեզում:

<sup>259</sup>Տե՛ս Միրումյան Վ., եշվ. աշխ., էջ 190-191:

<sup>260</sup>Այդ մասին, մասնավորապես, տե՛ս Музыкальная эстетика стран Востока, раздел “Армения”, сс. 332, 340-342.

## ԱՍՓՈՓՈՒՄ

Անիի թագավորության շրջանի երաժշտական մշակույթը IX-XI դարերի հայ միջնադարյան մշակույթի կարևոր բաղկացուցիչներից է: Ավանդաբար մեզ հասած երաժշտական բանահյուսության օրինակներն իրենց ժանրային բազմազանությամբ և մեղեղային-ռիթմական ինքնատիպությամբ, հոգեոր մասնագիտացված երգարվեստն ու գրասանական երգն ու պարը պատկանում են հայ դարավոր երաժշտական մշակույթի լավագույն նմուշների շարքին:

Շարակնոցում վավերացված Անիի հետ կապված շարականագիրների հոգեոր երգերը վկայում են, որ նրանք իրենց մեջ խտացրել են V-VIII դարերի հայ հիմներգության լավագույն ձեռքբերումները՝ ընդլայնելով ավանդական թեմաների շրջանակը: Նրանց գործերում առանձնակի հնչեղություն է ստացել հայրենասիրական թեման՝ կապված ժամանակի իրողությունների և ազգային-ազատազրական պայքարի հետ: Այդ շարականագիրները՝ Սարգիս Սևանեցի, Պետրոս Գետադարձ կաթողիկոսները, Ստեփանոս Ապարանցի Մոլոսի եպիսկոպոսը, իշխան Գրիգոր Մագիստրոս Պահլավոնին, Հովհաննես Սարկավագ Իմաստաւերը, Հակոբ Սանահնեցի վարդապետը, Դանիել Երաժիշտը զգալի շափով նախապատրաստել են XII-XIII դդ. բուն Հայաստանում և Կիլիկյան Հայաստանի հերինակների ստեղծագործության մեջ իրագործած հետագա մեծ թոփշը:

Տևյալ ժամանակաշրջանի երաժշտատեսական և գեղագիտական մտքի համար բնարոշ է դառնում անտիկ ժառանգության, հայրաբանական գրականության և միջնադարում ձևավորված հայացքների և գեղագիտական հայեցակարգերի համադրումը: Աստիճանաբար ուժեղացող աշխարհականացման ոգին ցայտունորեն դրսնորվել է Գրիգոր Մագիստրոսի և Հովհաննես Սարկավագի երկերում առկա ուշագրավ և առաջադեմ զաղափարների ու տեսությունների մեջ: Այդ զաղափարները մեծ նորություն

Էին այն ժամանակի համար, որոնք վկայում են ձևավորվող նոր աշխարհայացքի և աշխարհընկալման մասին:

Առանձին ուշադրության են արժանի Բագրատունիների հարստության շրջանի հայ երաժշտական մշակույթի կապերն ու փոխառնչությունները հարևան երկրների երաժշտական մշակույթների հետ, որոնք, անկասկած, եղել են բավական աշխույժ: Սակայն դրանց լիարժեք ուսումնասիրությունը դեռ առջևում է: Հայ-բուզանդական, հայ-ասորական, հայ-վրացական, հայ-բուղարական, հայ-արաբական, հայ-պարսկական, հայ-լատինական երաժշտական մշակույթների ներքո ձևավորված հոգևոր և աշխարհիկ երաժշտական ստեղծագործության ասպարեզում առկա կապերն ու փոխազդեցություններն ուսումնասիրությունների նոր տեսադրաշտ են ուրվագծում երաժշտագետ միջնադարագետների և ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտություն հետազոտող երաժշտագետ արևելագետների համար<sup>261</sup>:

Այդ փոխառնչություններից յուրաքանչյուրը մեծ և հեռանկարային թեմա է հայ երաժշտագիտության համար, ինչն, անկասկած, կունենա նաև իր միջազգային արձագանքը հետաքրքրություն առաջացնելով մասնագիտական շրջանակներում և նպաստելով հայ երաժշտագիտության ինտեգրմանը միջազգային երաժշտագիտության ծիրի մեջ: Դրանով իսկ մեր հարուստ պատմական մշակութային, այդ բվում և երաժշտական ժառանգությունը կդիտվի լայն պատմամշակութային համատեքստի մեջ:

<sup>261</sup> Տվյալ բնագավառում առայժմ եզակի արժեքափոր ուսումնասիրություններ են՝ Երևանյան Լ. Հայ-իրանական երաժշտական կապերի պատմությունից, Երևան, 1991 և Աշուղական սիրավեպը մերձավորարևելյան երաժշտագիտական փոխառնչությունների համատեքստում, Երևան, 2009, ինչպես նաև՝ Կ. Խաչատրյան և այլ հայության պատմամշակութային համատեքստի մեջ:

АННА АРЕВШАТЯН

## МУЗЫКАЛЬНАЯ КУЛЬТУРА АНИ

### Резюме

Столица государства Багратидов Ани (IX-XI вв.) занимает особое место в истории музыкальной культуры средневековой Армении. Начиная с последней четверти X века, Ани как процветающая метрополия, становится развитым центром наук и искусств. Эту роль Ани сохраняет на протяжении около двухста лет, даже после падения династии Багратидов вплоть до XV века.

Согласно свидетельствам историков, в царствование Багратидов в Ани процветали как светская музыка, включая народное творчество и искусство гусанов, так и духовное письменство. В крупных монастырских школах высшего типа, таких как Ахпат, Сананин, Нарек, Татев и другие, музыкальное образование традиционно занимало важное место. Здесь горячо обсуждались вопросы теории и эстетики музыки, практики певческого искусства, переписывались и дополнялись музыкально-служебные книги. Литургия и служба часов обогащаются образцами нового музыкально-поэтического жанра тагов, расцвет которого знаменует творчество гениального Григора Нарекаци (X в.). В этих тагах явственно ощущимы эстетические идеалы и художественный вкус того времени, которые характеризуются усиливающимся духом секуляризации, они несут новое мироощущение, воспевают природу и человека, в определенном смысле предвосхищая искусство европейского Ренессанса.

История и материальная культура Ани находятся в фокусе внимания ученых свыше ста лет. Археологические раскопки Н. Я. Марра, И. А. Орбели, исследования В. М. Арутюняна, Р. М. Бар-

тикяна, К.Н. Юзбашяна и других внесли весомый вклад в изучение архитектуры, письменных источников по истории Анийского государства и его столицы, рукописного наследия, содержащего труды Аристакеса Ластиверци, Матеоса Урхаеци, Самвела Анеци, Товмы Арцруни и других историков, которые в своих сочинениях повествуют об истории государства Багратидов, описывают быт и нравы анийской аристократии, духовенства и простого народа.

В ряду многочисленных исследований, посвященных архитектуре, фресковому искусству, книжной миниатюре и т.д. почти не заметно обращение к музыкальной культуре Ани. За исключением трудов, исследующих музыкально-поэтическое наследие Григора Нарекаци и Ованеса Саркавага, духовная и светская музыка эпохи Багратидов до сих пор не удостаивалась отдельного рассмотрения.

Цель данного исследования - всестороннее изучение музыкальной культуры Ани, охватывающее не только богатое гимнографическое наследие песнетворцев той эпохи, но и художественно-эстетические взгляды таких выдающихся ученых как Григор Магистрос и Ованес Саркаваг Имастасер (Философ). Автор данной монографии задался целью показать, что музыкальная культура Ани по своему уровню и музыкально-художественным достоинствам ничем не уступала архитектуре, фресковому искусству или книжной миниатюре эпохи Багратидов. Именно в сфере музыкальной эстетики, ученым энциклопедистом Ованесом Саркавагом впервые были высказаны идеи, во многом предвосхищающие идеи, которые были озвучены только в эпоху европейского Ренессанса.

**Глава первая - “Музыкальная культура Ани и связанные с нею гимнографы”.**

На формирование художественной атмосферы Ани повлияли такие выдающиеся деятели армянской средневековой культуры как Петрос Гетадардз, Григор Магистрос, Ованес Саркаваг, которые вошли в историю армянской культуры и как известные гимнографы.

(Մի անգամ) զարնանային եղանակին Պոռփյուրիփոնոսը Պելովպեից, հանդես զալով թռչունների հետ, փող էր նվազում, սրինգ էր փողում, իսկ լեզվով Ճովողում էր բազմապիսի նմանողական զանազանությամբ, յուրաքանչյուրին հասուկ եղանակով: Այս (երգեցողությունը), ասում են, բաղկացած է երեք սեղից և բազմահասուկ է և անհատական: Երեք սեղից, որովհետև իբրը բանական մարդ, արտաքերելով թռչունների ձայները ըստ յուրաքանչյուր սեղի, նաև ընդօրինակում էր յուրաքանչյուրի ձայնը նրանց պատկանող հասուկ տեսակի համաձայն: Արա մասին ասվում է, թե Պոռպյուրիփոնոսը, երբեմն գնալով Արգիացիների մոտ, առաջինը Որփեոսի տաղն էր սկսում (երգել), լոկ երգով ձեղնահարկն էր պատում, և այսն ուստերը բողբոշելով ծաղկում էին, և Արգիացիները տեսնում էին թռչուններին, որոնք նստած էին նրանց վրա: Սա է առասպեկի իմաստը, որ հռետորական (ոճով) իմաստասիրեցինք քո Դանիէլ երաժշտի մասին<sup>65</sup>:

<sup>64</sup> Թղթեր, էջ 125:

<sup>65</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

**Արտեմիս աստվածութին փրկում է ծովի ալիքներից  
Պարմինիդեսի ջրնաղագեղ և հրաշատեսիլ մանկանը.**

« (...) հրամայէր ապրեցուցանել ոչ միայն, այլ եւ շնորհ  
տալ քահանայութեան: Եւ վարժեալ նորա ամենայն իմաստու-  
թեամբ, իսկ երաժշտականութեամբ առեալ ծայրագոյն: (...) Զորոյ  
եւ պատկերն անդրի արարեալ ի պղնձոյ եւ օծեալ ուկով փող ի  
բերանն ունի եւ ծիրանի բեհեզ փողեալ ի ծայրս փողին: Զայս-  
սիկ նկարագրութեամբ զնա դրոշմել պարտ վարկան (...), զոր  
նախուստ գրեցար Պոռփիլուիփոնոսին զա սալպինփոնիս այ-  
սինքն քնարերգ»<sup>66</sup>:

...հրամայէց ոչ միայն ապրեցնել, այլ նաև շնորհել քահա-  
նայություն: Եվ սովորեցնելով նրան բոլոր գիտությունները, ամե-  
նաշատը երաժշտության մեջ (հմտացրեց): Եվ որի պատկերն է  
այնտեղ ստեղծված՝ փողը բերանին և փողի ծայրից ծփացող  
ծիրանի բեհեզով, (որը պատրաստված է) պղնձից և ուկով է  
պատված: Այսպիսի նկարագրությամբ պատշաճ համարեցինք  
նրան հիշատակել (...), ինչպես նախկինում գրեցինք Պոռփիլո-  
ուիփոնոսի մասին «սալպինփոնիս», այսինքն՝ քնարերգու<sup>67</sup>:

### **Արտաշես Պարթև թագավորի ուբը.**

«(...) նահանջեալ յԱմնոսէ, զՆիսեանն նշանակեալ ցուցա-  
կութին, երեւակայէր, եւ այն ի կողմանէ տասնեկին եօրն ան-  
կեանցն յունականին թույ, կամ թէ ի թորգումեան երից անկեանց  
եռակի բարդեցելոց Ահկեան: Որում Արտաշեսն Պարթև բաղ-  
ձայր մրոյ մրրկեալ ծխոյ շամանդաշեալ մակաւասար շինից եւ  
քաղաքաց: Ո՞ տայր ինձ, ասէր, զծուխ ծխանի եւ զառաւուն  
Նաւասարդի, զվագելնն եղանց եւ զվարգելն եղչերուաց. մեք փող  
հարուաք եւ թըմբկի հարկանէաք, որպէս օրէնն է թագաւորաց: Եւ

<sup>66</sup> Թոլեր, էջ 124:

<sup>67</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

զայս ասեն ի վախճանելն իւրում, որը ի գոեհիկս աւանդեալ գտաք»<sup>68</sup>:

(...) նահանջելով Ամսոսից՝ Նիսեանը քննություն նշանակեց. երևակայում էր և այն կողմից հունական թվի յոթ տասնյակ անկյունների, կամ թե բորգույանների միմյանց վրա դիզվող եռակի բազմապատկած յոթ եռանկյուննիներն Սիեկան ամսին, երբ Արտաշես Պարթևը տենչում էր մոլախոտից մրրկածել բարձրացող ծուխը, որը հավասարապես մշուշով էր պատում շենքերը և քաղաքները.

Ո՞ տայր ինձ, ասում էր, զծուխ ծխանի,  
Եւ զառաւօտն Նավասարդի,  
Ըզվագելն եղանց  
Եւ զվարգելն եղօերուաց.  
Մեք փող հարուաք  
Եւ թըմքի հարկանէաք,  
Որպէս օրէն է թագաւորաց:

Եվ այս ասում էր իր վախճանվելու ժամանակ, ինչը գտանք հասարակ մարդկանցից ավանդված<sup>69</sup>:

Գագիկ թագավորին ուղղված նամակից.

«(...) ասել քեզ Փողոսիոս ոչ դանաղիմ (...): Զի տեսանեմք զքեզ ի հոմերական տաղսն վերտառեալ չափաբերական եւ ոտանաւոր հազներգական կարկատեալ»<sup>70</sup>:

<sup>68</sup> Թղթեր, էջ 86-87:

<sup>69</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

<sup>70</sup> Թղթեր, էջ 97:

«(...) շտապում եմ քեզ պատմել Պտղումեոսի մասին (...): Որպեսզի քեզ տեսնենք հոմերական տաղերը չափաբերված վերտառելիս և հազներգական ոտանավորը կարկատելիս»<sup>71</sup>:

Գրիգոր Մագիստրոսի կրթական-ուսումնական ծրագրերի մասին.

«Նախ պարս է զքերականութիւնն հանդերձ թարգմանութեամբն ուսանել տիրապէս մակստացականութեամբ, եւ զկնի այսր հռետորականն երիւք հանդիսիւք անսխալ տրոհութեամբ, եւ ապա զսահմանցն պարունակել, եւ պղատոնական եւ արիստոտելական, եւ դարձեալ պիտօպորական կարակնակերտութեանն բացորոշմանց եւ դատողութեանց. նախոստ քան զայսրիկ կրթեցելովք ներկուու վերծանութեամբ զիին եւ զնոր կտակարանս, եւ առասպելավարժութիւնս ի բազում եւ զանազան տեղիս զեղեալ զորքանութեամբ արտահայտել հաւանիմք, եւ ի խոյզ ելանել ջերմագոյն եւ քաջողձական խոհական նախատեսականին եւ այլոցն բոլոր արհեստից եւ մատենից: Զի ամենայնի իմաստասէրն խոստովան լիցի զգիտութիւն եւ ուրացեալ անգիտութիւն մանաւանդ ըստ կարողութեան քաղիցն արհեստից թուական, երաժշտական, երկրաշափական, աստեղաբաշխական»<sup>72</sup>:

Նախ պետք է քերականությունը թարգմանությամբ հանդերձ ուսանել կատարելապէս՝ մոքերի մաքրությամբ, և դրանից հետո հռետորական արվեստը՝ երեք քննությունների անսխալ որոշմամբ, ապա և՝ պլատոնական, և արիստոտելյան սահմանաւմներն ամփոփել, և դարձյալ՝ պյութազորյան բոլորակության բացահայտությունները և դատողությունները: Դրանցից առաջ հավանություն ենք տալիս կրթվողներին (ուսուցանել) Հին և Նոր Կոտակարամները՝ անդադար ընթերցանությամբ, և առասպելավարժությունը՝ բազմաթիվ և զանազան տեղերում եղած քանա-

<sup>71</sup> Հավելված, էջ 145:

<sup>72</sup> Թուեր, էջ 105:

կությամբ արտահայտելու կարողությամբ, և՝ ջերմագույն, և՝ ողջամիտ ուշիմությամբ հոմերական և պլատոնական նախարանի տրամաբանական հատվածներին և մյուս բոլոր արվեստներին և մատյաններին հետախուզ լինել: Որովհետև ցանկացած իմաստասեր խոստովանում է գիտությամբ և ուրանում անգիտությամբ, մանավանդ ըստ կարողության թվաբանական, երաժշտական, երկրաշափական, աստղաբաշխական չորս արվեստների<sup>73</sup>:

Սանահինի միաբաններին ուղղված նամակից, որտեղ խոսվում է Սանահինի վանքում տիրող ոգեղեն մթնոլորտի մասին.

«Յիշելով զյարական ծերոցդ ծայրագունից խնամս առ մեզ եւ խրատս եւ ողորմութեամբ բարեկարգութիւնս, եւ գերիտասարդացն, որք ի վարժարանսն, հոետորական եւ երաժշտական զնոցայն զմտաւ ածեալ հանդես եւ զմրցումն եւ զգեղեցիկ մոլութիւնս եւ զմանկանցն սաղմոսերգութիւնս քաղցրածայնութեամբ վերառեցեալ, որ գրեթէ պետութեանցն եւ բոլորն երկնային առաքինութեամբ եւ ճգնութեամբ սրանչելի եւ զարմանալի երեւեալ, որ եւ ոչ ի Ակիւթ կամ ի Թերայիդ այսպիսի երբեմն երեւեալ»<sup>74</sup>:

(Այս ամենի հետ) հիշում եմ նաև ձեր՝ մեծամեծ ծերերիդ հոգածությունը (մեր մասին) և խրատները ու ողորմածությամբ բարեկարգությունները, (հիշում եմ նաև) երիտասարդներին, որոնք վարժարաններում հոետորական և երաժշտական մտքով անցած հանդես ու մրցություն և գեղեցիկ մոլություններ էին կազմակերպում, մանուկների քաղցրածայնությամբ հնչող սաղմոսերգությունները, որոնք հրեշտակներին և բոլոր երկնային դասերին և ուժերին գրեթէ գերազանցող եմ զտնում, իսկ ոմանց՝ զանազան և պեսպես առաքինություններով և ճգնությամբ (հա-

<sup>73</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

<sup>74</sup> Թղթեր, էջ 136-137:

մարում եմ) սրանչելի և զարմանալի երևացող, որ անգամ Սկյուրում կամ Թերայիդում երբեմն են երևում<sup>75</sup>:

Սանահինի միաբաններին ուղղված նամակից՝ Անիի հոգևոր մթնոլորտի մասին.

«Խոկ զի՞նչ արուեստ եւ կարգաւորութիւն մայրաքաղաքիդ. ուղղափառ վարդապէտութիւն ի զիշերի եւ ի տուընջեան եւ այն ոչ սուտ կամ սնոտիապատիր եւ ատտիկեցի առասպելօք, այլ աստուածեղեն արդեամբ եւ զօրութեամբ եւ քաղցրաձայնութեամբ երաժշտականաց եւ նուազումն սաղմոսելոյ եւ ընթերցումն հարցն վարուց եւ հակառակել զգեղեցիկ հակառակութիւնն եւ զմիմեամբք ելանել»<sup>76</sup>:

Խոկ ի՞նչ արվեստ և կարգավորություն է (տիրում) ձեր մայրաքաղաքում: Ուղղափառ վարդապէտություն զիշերվա և ցերեկվա ընթացքում և այն է՝ ոչ սուտ կամ սնոտիապատում և ատտիկյան առասպեկներով. այլ աստվածային աշխատանքով և զորությամբ և երաժշտական քաղցրաձայնությամբ և սաղմոսելու երգեցողությամբ և (սուրբ) հայրերի վարքերի ընթերցումով և զեղեցիկ բանավեճերում միմյանց հանդեպ հակառակությամբ ենելով»<sup>77</sup>:

### Թռնողրակեցիների մասին.

«Գրեալ են երէ վասն նախանձու արտաքսեն զմեզ. ո՝ ստութեանդ մանաւանդ երէ զարմացման եւ սրանչացման արժանի. երէ ի մէնց են եւ մերովս դաւանութեամբ, զի՞նչ արդեօք պարտ է նախանձել, ընդ որոյ ճեմարանի կամ վարդապէտութեան, ընդ որոյ մայրաքաղաքացեաց եւ եպիսկոպոսաց եւ հարանց (...) եւ խաչակրոն կրամաւորաց, երէ միայնաւորաց քրիս-

<sup>75</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

<sup>76</sup> Թույեր, էջ 137:

<sup>77</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

տոսազգեաց եւ ճգնազգեաց արանց, որք ի լերինս յայրս եւ ի փապարս բնակեալ են, եթէ երաժշտական հազներգութիւնսն եւ ի քաղցրածայնութիւնսն, եթէ ի զամպարափայլ կացորդական տօնախմբութիւնսն (...)"<sup>78</sup>:

Գրել են, թէ նախանձից են արտաքսել մեզ: Ո՞ սոությունդ, մանավանդ որ արժանի է զարմանքի և սքանչացման: Եթէ մեզանից են և մեր դավանության, արդյոք ի նշ պետք է նախանձել, ո՞ր ճեմարանի կամ վարդապետության համար, ո՞ր մայրաքաղաքացիների և եպիսկոպոսների և հայրերի (...) և խաչակրոն վանականների համար, թէ՝ քրիստոնազգյաց մենակյացների և ճգնավոր մարդկանց, որոնք բնակվում են լեռների քարայրներում և կիրճերում, թէ՝ երաժշտական հազներգություններին և քաղցրածայնություններին, թէ՝ լուսափայլ կացուրդական տոնախմբություններին (...)"<sup>79</sup>:

### Հելենական երաժշտածիսական հանդեսների մասին.

«Բայց ասեմ Ռոստոմեան տնկոյ, զորմէ ասեն յոստոցն հատեալ գործէին զնա մանրագոյն քնարս, որս եղեալ ի ձեռին համբակացն եւ առժամայն ուսեալը անաշխատաբար որպէս ի սարդէնի մահակէ պար զոլով երգէին զիոներական քերտուածս»<sup>80</sup>:

Բայց (նկատի ունեմ) Ռոստոմյան տունկը, որի մասին ասում են, թէ ճյուղերը կտրելով սարքում էին նրբագոյն քնարներ, որոնք տալիս էին համբակների ձեռքը. և այդ պահին զգբաղված ուսայալները դափնե գավազանով պարում էին՝ երգելով հոմերական քերթվածքներ<sup>81</sup>:

<sup>78</sup> Թղթեր, էջ 155-156:

<sup>79</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

<sup>80</sup> Թղթեր, էջ 221:

<sup>81</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

Անիի հանդեսների մասին, որոնց մասնակցել են նաև հովուն կաստրատ երգիչները.

«Քաջ զիտեմք, զի հոյլը ի հանդիսի հզորք եւ փառացի եւ փարթամք, եւ վիճակելոց դասը ուկեհուու զարդիւր պարածածկեալը, սպիտակափառ եւ երաժշտական պարք գումարեալը դաստակերտացն տնօրինութեամբ, եւ ոսիրք կաքաւեալը, եւ հնչմանց երգ արտակիտեալ եւ փողեալ քնարական ներդաշնակապէս. քանզի եւ այս ինքեանց յատտանցն ներքինեաց մաքրագոյն եւ վճիտ քմազարդութիւն եւ բացագանչութիւն պատկանեալ եւ յարմարեալ ձայնիւ»<sup>82</sup>:

Քաջատեղյակ ենք, որ վիճակավորների ուկեիյուս զարդեռով ծածկված դասը, դաստակերտներում տնօրինաբար սպիտակափառ և երաժշտական պարեր գումարողները, և ոստքերով կաքավողները, և կատարողների դրսում երգ հնչեցնելը, և շեշտակապնիները, մեղեղիները, որովհետև այն հասուկ է փորկող ներդաշնակ մեղեղիները, որովհետև այն հասուկ է պատկանակոր և հարմարեցված ձայնեղանակով ատտիկյան ներքինիների մաքրագոյն և վճիտ, ներդաշնակ երգեցողությանը և բացականչությանը»<sup>83</sup>:

<sup>82</sup> Թոլքեր, էջ 222-223:

<sup>83</sup> Հատվածի բարզմանությունը մերև է:

## Պետրոս Գևոտաղարձ

1. Շարական սրբոց Վարդանանց  
Օրինութիւն. ԴԿ ստեղի - Ծանր<sup>84</sup>

Արիացեալը առ հակառակսն  
Քաջութեամբ առնուլ ըզվրեծ խարեւութեան,  
Հանճարեղը ի հասուցումըն դաւանացն,  
Զամբարըշտացն արդարադատ չափմամբ:  
Ծանր.- Զորականք յաղթօղը պըսակեալ ի Քրիստոսէ:  
Չափաւոր.- Փոխանակեալը գունայնութիւնս  
Ընդ ճշմարիտ յուսոյ անմահութեանն:  
Ծանր.- Փափազանաց.  
Չափ.- Ճեռոց առիք ըզկատարումըն,  
Մաքրիլ արեամբ յաղտոյ մեղաց տրդմոյ:  
Ծանր.- Զօրականք թօղը պըսակեալ ի Քրիստոսէ:

Փոխանակեալը գունայնութիւնս  
Ընդ ճշմարիտ յուսոյ անմահութեանն,  
Փափազանաց ճեռոց ըզկատարումն,  
Մաքրել արեամբ յաղթել մեղաց տրդմոյ:

Հայցեցեք զիսաղաղութիւն,  
Ճշմարիտ վրկայք Սըրբոյ Երրորդութեանն,  
Նեղելոց յանաւրինաց բըռնութենէ,  
Չափ.- Զի ցընծասցեք յաղթանակաւ մարտի Ճերոյ,  
Նահատակը յարգոյք:  
Ծանր. Զօրականք յաղթողը պըսակեալ ի Քրիստոսէ:

<sup>84</sup> Շարական, էջ 889-894:

## 2. Շարական սրբոց Սուրբիասեանց Մանկունք. ԴԶ ստեղի - Ծանր<sup>85</sup>

Ստուգութեամբ տեղեկացեալը  
Հարցանելով ըզմարզարէն,  
Ով եցէ ի լեառն տեառն կամ  
Ով կացցէ ի տեղտօքն սըրբութեան:

Ահա տեսաք ըզՍուկաւետ լեառն:  
Դիտակ եւ բնակարան վըկայիցն,  
Որոց առեալ զողորմութիւն յԱստուծոյ  
Փրկչէն իւրեանց:

Որք բարձին ըզխաչս իւրեանց,  
Խաչեցելոյն խաչակցեցան,  
Դիմելով յօժարութեամբ,  
Առ սատակիչսն որպէս  
Զգառինս ի մէջ զայլոց:

Նոյն եւ զինքն իսկ տեսանեմբ  
Պրօպատիկէ աւազանին,  
Յորըս դընին բազմութիւնք  
Ախտաժետաց ակն ունելով  
Վերըստին ջուրցըն յուզման:

Աստանաւը նորոգեցաւ մեզ  
Աւազանըն Սելովմայ  
Ի բանալ զաշըս սըրտից  
Առ ի մերժել զախտս հոգւց եւ մարմնոց:

<sup>85</sup> Նոյն տեղում, եզ 876-878:

### 3. Շարական սրբոյն Կիրակոսի եւ Յուղիտայի Մանկունք. Չափաւոր-ԲԿ<sup>86</sup>

Յարմատոյց բարեաց  
Քաղցր շառաւիդ վերաբուսեալ  
Ծաղիկ հաւատոյ  
Գեղ վայելչութեան  
Զարդ եկեղեցւոյ  
Պրտղաբերեալ ըզքեզ  
Ով սուրբ Կիրակոս,  
Տընկողին ըզքեզ  
Քրիստոսի բարեխօսեա  
Վասն անձանց մերոց:

Աստանօր մօր բարեպաշտի  
Որդի եւ երկնւոր հանդիսադրի  
Նահատակ քաջ աշպառագէն  
Զինորեալ հոգւով տղոց գոլով  
Մարմնով մարտ ընդ անօրէնս  
Եղեալ պըսակեցար:  
Ով սուրբ Կիրակոս...

Յոդ քաղցրութեան ծաւալեցաւ  
Յանդաստանը ձեր յորժամ  
Պատուական արինքը ձեր  
Տեղան յերկրի:

Ով սուրբ Կիրակոս...

Երկնայինքն ուրախացան  
Ըզքեզ յինքեանս ընդունելով,  
Մայր սրտով բերկրեալ  
Ով սուրբ Յուղիտա,

<sup>86</sup> Շարական, էջ 884-885:

Ստեղծողին ըզբեզ

Քրիստոսի բարեխօսեցեք

Վասն անձանց մերոց:

#### 4. Շարական սրբոց Ուկեանց

Մանկունք. Չափաւոր-ԳԶ<sup>87</sup>

Որք արժանաւորեցայք կոչիլ

Յաշակերտութիւն առաքելոյն Թաղէոսի,

Եւ աստուածային հրով մաքրութեան

Ուկի փորձեալ գրտայք ի բնակարանըս հրեշտակաց,

Ով երանելի սուրբ Ուկեանք

Քարեխօսեցեք առ Տէր

Մարդել ըզմեզ ի մեղաց մերոց:

Որք անհրաժեշտ դաւանութեամբ

Քարողեցիք զգՔրիստոսի դրունըս

Թագուհոյն մըկըրտելով ըզբաջ նահատական

Ի յակունս Եփրատայ

Ծաղկազարդ վայելչութիւնս:

Ով երանելի սուրբ Ուկեանք...

Որք անպարտելի մնացիք

Ի հրապուրանաց

Որդոց քագաւորին,

Չարչարեալըզ վասն Քրիստոսի

Արազապէս խողխողեցայք

Պատարագ ընդունելի:

Ով երանելի սուրբ Ուկեանք...

<sup>87</sup> Շարական, էջ 887-888:

## 5. Շարական սրբոց Ատովմանց

Մանկունք. Չափաւոր -ԱԿ<sup>88</sup>

Աղաշեմք ըգբեզ Տէր

Բարեխօսութեամբ սրբոց Ատովմանց,

Որք նահատակեցան

Ի ճակատամարտ պատերազմի,

Յաղթող գրտան ընդդէմ թրշնամոյն,

Բարեխօսութեամբ սոցա Քրիստոսի

Խընայեա ի մեզ:

Որք աւուրն զըսպառազինութեան

Ըզգրահըս հաւատոյ

Սըրտից իւրեանց եւ ընկալան

Ի գուխ սաղաւարտ փըրկութեան

Ըզնշան խաշին սուսէր ընդ մէջ

Ածեալ ըգձշմարիս սուրբ Հոգին:

Որք մարքեցին զանձինս իւրեանց

Տաճար անուանը Քում սըրբոյ

Եւ բուրեցին հոտ անուշութեան

Զաղօթս իւրեանց ի տեղուց

Հեղմամբ սուրբ արեանն իւրեանց:

<sup>88</sup> Շարական, Էջ 888-889:

## Սարգիս Սևանեցի

Շարական Համօրէն Ննջեցելոց  
Օրինութիւն. ԲԿ - Միջակ<sup>89</sup>

Սարսափելի որոտմամբ  
Եւ ահազին զօրութեամբ  
Գալոց է Փրրկիչ զաշխարհս  
Յարուցանել ըզմեռեալսըն:

Ահեղ եւ մեծ բարբառով  
Հրեշտակապետըն գոչէ,  
Արիք ասէ, մի ննջէք,  
Ահա եհաս ձեր Փրկիչըն:

Ռոտմամբ սըրտիւք յարուցեալ  
Եւ ընթանան առաջի  
Եւ տեսանեն ըզՓրկիչն  
Եկեալ փառօք ի յաշխարհ:

Գաղտնի գործոցըն ծածուկ  
Յայտնին ի մեծ հրապարակն  
Եւ դողալով ընթանան  
Ի անվախճան ի տանջանս:

Ի յօթեւանս հօրն իւրոյ  
Կոչ ըզդասս արդարոցն  
Եւ յանպատում ի բարիս,  
Զոր խոստացեալ է նորա:

Սիրոյ անմահ փեսային  
Եղեր դու մայր Մարիամ,  
Բարեխօսեա վասըն մեր  
Ի յայնմ աւուր ահեղին:

<sup>89</sup> Նույն տեղում, էջ 989-990:

## Ստեփանոս Ապարանեցի

Շարական Դ. աւոր Վերացման խաչին  
Ողորմեա. ԳԶ դարձուածք - Չափաւոր<sup>90</sup>

Սրբութիւն սրբոց շնորհեսցեր եկեղեցւոյ  
Սուրբ ըգիսաշ Քոյ Տէր,  
Քանզի հեղուսիւր ձրգմամբ անարատ  
Ձեռին Քոյ ի սմա համահաւաքեալ առ Քեզ  
Չհամօրէն սեռս բանական կենդանեաց,  
Աղաչեմք ըզքեզ Տէր,  
Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ  
Խաչի Քոյ սուրբ:

Տեսիլ անճառելի խորհրդոյն,  
Չոր յառաջագոյն ցուցաւ լրսածին սուրբ նշանն,  
Քանզի սերովբէն բոցեղին  
Հրանիւտ պարունակէր ի մեջ  
Պանծալի եւ վայելուց դրախտին:  
Աղաչեմք ըզքեզ Տէր,  
Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ  
Խաչի Քոյ սուրբ:

Երկնաչափ ցուցաւ սանդուխ իմանալի  
Ճանապարհ առնելով որդուց մարդկան  
Ընդ դուրքն կենաց մտին, էջը եւ ելք  
Քանզի խորհրդեամբ ցուցաւ  
Ըսրանչելոյն Յակոբայ,  
Երկնաւոր զօրացն էջը եւ ելք արարան:  
Աղաչեմք ըզքեզ Տէր,  
Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ:

<sup>90</sup> Նոյն տեղում, էջ 774-777:

Փայտ կենաց ըզսա հոգւովն  
Վերագոշեաց գերահրաշ իմաստունն,  
Քանզի արարիշն արարածոց բարձրացաւ ի սմա  
Եւ կողահոս շիքք անապական արեանն  
Ըզկողածնին ըընջեաց ըզմեղս:  
Աղաչեմք ըզքեզ Տէր,  
Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ  
Խաչի Քոյ սուրբ:

Առաջնորդ ցուցաւ սիւնատեսիլ փայլմամբ  
Ժողովրդեանն Խրայելի զաւազանասաստ  
Հերձմամբ ըզլեռնացեալ ըզկուտակումըն ջուրց  
Ի կարծրութիւն փոխարկեալ վէմի:  
Աղաչեմք ըզքեզ Տէր,  
Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ  
Խաչի Քոյ սուրբ:

Ներգործեալ հրաշըս խաչանիշ  
Համբարձմամբ ձեռացն Սովուսի  
Ընդդեմ Ամաղեկայ ի մարտի պարտէր ըզքելիար,  
Եւ ձուլադրոշմըն ձուլիք են թագաւորեալ կորգէր:  
Աղաչեմք ըզքեզ Տէր,  
Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ  
Խաչի Քոյ սուրբ:

Նըշանաւ խաչի Քոյ Տէր,  
Սարսեալ հալածեցաւ աշխարհակալ խաւարն,  
Քանզի զմեղուցեալ զմարդըն յանցանօք  
Փայտին կենաց խաչակից առնելով  
Պսակեցեր ամենայալթ սուրբ նըշանաիդ:  
Աղաչեմք ըզքեզ Տէր,  
Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ  
Խաչի Քոյ սուրբ:

Որ ի վերջումն աւուր համառօտի  
Լուծանէ ժողովեալ զիւր ըզկարձեցեալ ճաճանչն,  
Եւ ահեղահրաշ ճառագայթիւր  
Յոլանայ յերկնից գերահրաշ նրշանն, այն ջոկք անհաւա-  
տիցն:

Եւ հեծեալ կոծին ամեն

Աղաշեմք ըզքեզ Տէր,

Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ

Խաչի Քոյ սուրբ:

Սըրբուհոյ Աստուածածնին բարեխօսութեամբ

Ընկալ, Տէր, ըզմաղթանըս մեր,

Յորժամ յարկելից լուսածագիս անճառ հրաշիւր

Կարապետ առնելով զյաղթանակ սուրբ նրշանն:

Աղաշեմք ըզքեզ Տէր,

Պահպանեա ըզմեզ ընդ հովանեաւ

Խաչի Քոյ սուրբ:

## Հակոբ Սանահնեցի

Շարական հանգստեան  
Ողորմեա. - ԳՎ. Միջակ<sup>91</sup>

Յանսկզբնական ծոցոյ Հօր խոնարհեալ  
Բանըս մարմնացար ի կուսէն  
Վասըն փրկութեան մերոյ,

Աղաչեմք ըզքեզ  
Զնընջեցեալսըն մեր ի քեզ  
Ուղիղ հաւատով յիշեա, Տէր:

Անխակալ քաղցրութեամք որդի Աստուծոյ  
Հաճեցար բառնալ ըզմեղս աշխարհի  
Քո խաչելութեամբն:  
Աղաչեմք...

Կամաւորական մահուամք Քո լուծեցեր  
Զերկոնըս մահու  
Եւ արժանի արարեր թողութեան  
Յանցանաց քարիչ Քո արեամք:  
Աղաչեմք...

Որ փոխանակ մեղաւորաց  
Ըզմեռանիլ յանձն առեր,  
Իջանելով ի դրժոխըս փըրկեցեր  
Ի մեղասէր բանտէն ըզգերեալսն:  
Աղաչեմք...

Բարեքանեմք զանչափ Քոյ զմարդասիրութիւնդ,  
Որ երեքօրեա յարուցեալ  
Զկէնդանութիւն պարզեւեցեր աշխարհի:  
Աղաչեմք...

## 2.Շարական ննջեցելոց Ողորմեա. Չափաւոր.- ԳԿ

Յանսկզբնական յէութեամբ անեղ ծնունդ հօր գոլ բանդ,  
արարչագործ զարութեամբ գոյացուցիչ գոլ էից,  
ի գոյութեան քո փառաց զայս յայտնեցեր տեսողաց.  
զի զորս իմացեալ սուրբ հարանց աստուածաբան կոչեցան.  
երեքանձանցն հաւտից միասնական բնութեան  
ի փրկութիւն  
աշխարհի մեզ յայտնեցար սուրբ հոգւովն:

Անտխակալ քաղցրութեամբ խոնարհեցար ի բարձանց:  
Եւ միացար ի մարմնի աստուածահրաշ խորիրդով,  
անձառ ծննդեամբ ի կուսէն զարքէնս լրւծեր զբնութեան.  
յաղթող գոտար ի մարտի յայն մեղասէր իշխանքն.  
և փրկողին...

Կամաւ սրբեր զբաժակ չարչարանացն ի խաշին.  
յորդորական հրամանաւ զնոյն սրբացեր կարողաց.  
զի մահակից քեզ գոլով, հաղորդ գոտան քո փառաց.  
եւ զարութեամբ հաւատոյ կարեաց մարմնոյ յաղթեցին.  
և փրկողին...

Ո՞վ երջանիկ բարունի աստուածընկալ սուրբ Յակոբ,  
հրաշագործող աւրինաց աստուածատուր շնորհաց.  
սրբազնական հայրապէտ աթոռակից Քրիստոսի  
երկնաւորին այնորիկ անձեռագործ խորանին,  
վերնական սրբութեամբ խորիրդածու կոչեցար.  
և փրկողին...

Բանդ ի բարձանց երևեալ յաստուածընկալ սուրբ հարանց,  
հովի հաւտի խնդրէին, եկեղեցւոյ առաջնորդ.  
անաւթ ընտիր երևեալ յայտնեալ հոգւով և ցուցեալ.  
կրեալ զանուն արարչին ի մէջ ազգաց և ազանց.

արդ աղաշեմք և հայցեմք սովաւ ծագեալ ի մեզ լոյս գիտու  
թեան,  
զի արժանի եղիցուք անձառ լուսոյ բարձրելոյն.  
և փրկուին...

Համամ Արևելցի, IX դ.  
Շարական ապաշխառութեան  
Մանկունք. - ԴԿ<sup>92</sup>:

Հայր երկնաւոր, անկանիմ առաջի անտխակալ Քո զբու-  
թեան.  
զի մեղաւք իմովք բարկացայք և չար առաջի Քո արարի.  
աղաշեմ զքեզ, ներեա յանցանաց իմոց, որ միայն ես  
ողորմած:

Արք անաւրէնք կոչեցին զիս հաղորդել արեան մահու.  
զնացի զճանապարհ ձախակողմեանն,  
կատարեցի զշար խորհուրդ նոցա.  
աղաշեմ...

Մեծ են յանցանք իմ Տէր զոր գործեցի յահէ մահու  
հրամանաւ իսմայէլեան քռնաւորին  
երագեցի հեղուկ զարիւն եղբաւըն.  
աղաշեմ...

Աստուած, ապաւէն և յոյս դարձելոյն ի քեզ,  
յարենէ փրկեա զիս Տէ թ.  
որպէս թողեր զայն երգաւուին,  
թող և ինձ զպարտու մեղուցեալ Քո ծառայիս.  
աղաշեմ...

Մեղայ Տէր՝ մեղա, Մանասէին ձայնիւ գոչեմ.

<sup>92</sup> Տէ և Ամատունի Ս., նշվ. աշխ., էջ 163-164:  
185

ընկալ զիս մարդասէր ընդ երանելեացն,  
որոյ թողան և ծածկեցան յանցանքն.  
աղաչեմ...

### Դանիել Երաժիշտ, XI դ.

Շարական Ծննդեան

Մեծացուցե. - ԱԿ<sup>23</sup>

Դասապետն հրեշտակաց եւ սպասաւոր երկնից  
Արքային առաքմամբ իջեալ ի բարձանց,  
Յերկիր ի յողոյն ուրախալից առ քեզ, Մարիամ.  
Աւրինութեամբ երգով զքեզ մեծացուցանեմբ:

Արարիչն յաւիտեանց և ստեղծագործողն էական  
Սերից խոնարհեալ ի փրկութիւն ազի մարդկան,  
Մարմնացաւ ի քէն կոյս անապական.  
Աւրինութեամբ...

Նորոգողն բոլորից և անքնին  
Էական սերից գերագոյն ծնանի ի քէն  
Գերագոյն բնութեամբ և անշփոթ աստուածութեամբ.  
Աւրինութեամբ...

Ի հայրական ծոցոյ լոյսն փառաց  
Միածին որդին ծագեցաւ յորովայնի սրբուհոյ կուսին՝  
Հստ կանխասաց ձայնի մարզարէին.  
Աւրինութեամբ...

Են էից անպարազիրն յաւետենից  
Սահմանեալ բովանդակի յարգանդի կուսին,  
Կենսագործելով զմեզ ի նախահաւըն յանցանաց.  
Աւրինութեամբ...

<sup>23</sup>Տե՛ս Ամառունի Ս., նշվ. աշխ., էջ 13-14:

Լուսազարդ շուշան ծաղիկ և մորենի անկիզելի,  
Լեառն վիմածին, երկիր բանաւոր, սափոր ոսկի  
Կենաց հացին կոյս Մարիամ:  
Աւրինութեամբ երգով զքեզ մեծացուցանեմք:

### Յովիաննէս Սարկաւազ Իմաստասէր Շարականներ

1.Շարական սրբոց Ղետոնդեաց  
«Պայծառացան այսօր»  
Ճաշու Միջակ-ԴԿ դարձուածք<sup>94</sup>

Պայծառացան այսօր սուրբ Եկեղեցիք  
Լուսաւորչօք կենդանեօք,  
Որք ի գործոց իւրեանց  
Ծաւալեցին ըզոյսն անըստուեր  
Հայելի աշաց ըզՏէր սիրողաց:

Քահանայք պատուեալք օծմամբ  
Սուրբ հոգւոյն նախակարգեալք  
Յառաջնորդութին փափազողաց  
Վերնոյ յարկին եւ անպատում  
Պատրաստեալ բարեացն,  
Այսօր փութացան ելանել ի նոցին:

Զըւարթնոց երկնից եղեւ  
Ցնծութին տեսանելով  
Զարեամբ զարդարեալսըն  
Կոչեցեալ յուրախութիւն  
Աստուածային եւ լուսաւոր

<sup>94</sup> Շարական, էջ 902-905:

Սուրբ առագաստին,

Զպատրաստեալ նոցա

Զյադթանակ մարտին:

Ամբարշտաց եւ անսըրբոց

Մատուցանէ ձեռօք

Նվիրական պատարագ

Ընծայից թագաւորին երկնաւորի,

Որ հրաւիրեաց արեամբն իւրով

Լինել կըցորդ խաչին զինքեան տիրողաց:

Հաշտատար ընծայ Նօր ազգի մարդկան

Քրիստոս Աստուած,

Ձեկեղեցի Քո հաստատեա

Խընդուածովք նահատակաց ի Քեզ ընտրելոց.

Բարերար Փրկիչ միայն մարդասէր:

Որ խոստացար լինել ընդ մեզ

Մինչ ի կատարած անաջրապետդ

Ի Քեն վարժողաց եւ այցելու մեղատրաց

Որսացելոց ի բանսարկուէն

Ի խաւարային նորակամս,

Քաղցրութեամբ Քո Տէր,

Խընայեա ի մեզ:

Հեղմամբ արեան սըրբոց Քոց

Հուրապետաց զեկեղեցւոյ Քո

Տրուեալ մանկունքս ժողովեա յուրախութիւն,

Ըզվատացեալքս տըրտմութեամբ

Եւ արտասուաց յորդահոս

Բըրխմամբ փըրկութեան մերոյ

Պարզեւաց բաշխող:

Մաղթանօք սոցա զըթացիս ի մեզ  
Անոխակալ եւ ամենառատ,  
Որ ընտրեցեր ի մարդկանէ  
Չարչարանաց Քոց զուգակից  
Եւ գերազանց բարեաց ժառանգորդս,  
Օրինութիւն Քեզ Տէր երգեսցեն մանկունք:

2. Շարական սրբոց Հոփիսիմեանց  
«Անսկիզբըն բանն Աստուած»  
Համբարձի. Միջակ - ԴԿ դարձուածք<sup>95</sup>

Անսկիզբըն բանն Աստուած, որ վասըն մեր համբեր մահու,  
Բառնալով զգդատակնիք անիծիցն առ ի մենց  
Գերապանծ մաքրութեամբ ըզմարդիկ վերազրեաց խա-  
չակից իւր եւ

կամաւոր մահուամբ իւրեանց:  
Դիմամարտ գոլով սըրբոյն ընդ կոապարիշտ պաշտամունս,  
Երջանիկ ճակատամարտք յայտնեցան անպարտելիք,  
Զի Աստուած բոլորից տիրաբար սիրեցին,  
Էակցին հօր հետեւեալ ստացան ըզբազըն պարծանաց:  
Ընթաղրեալք զմահու խրոխտումն ընդդէմ մեղացըն վա-  
ռեցան,  
Թոթափեցան յերկունս զանից գեր ի վերայ քան  
ըզբնութիւնս  
Ժուժկալեալք ի փորձ բանտից գելարանաց եւ կապանաց  
Ի մըրցմունքս զազանաց որոյ եւ հրոյ մենամարտեալք:

... եւ այլն (36 տուն)

<sup>95</sup> Նույն տեղում, էջ 702-705:

3. Շարական սրբոց Վարդանանց  
Օրի. ԴԿ  
«Անթառամ պլոտոյ ծնունդը»<sup>96</sup>

Անթառամ սիրոյ ծնունդը սիրեցեալը ի Քրիստոսէ.  
իմաստուն ճարտարապետք հաստատութիւն եկեղեցւոյ.  
զառ ի նոյն յուսոյ շաւիորս թելազրիչք որդուց մարդկան.  
աննախանձ առ աստուածատուր զամենեսեան ճոխա-  
ցուցեք:

Բանին հաւր բարբառոյ հետեւեցայք արժանապէս.  
թեռամբ իսաշին թերեւացեալը դիմեցայք առ զարութիւն  
ի քաղաքն անխախտելի առ կարապետ ճանապարհին.  
նախահրաւեր ուրախութեանն ժամանեալ ի վայելումն:

Գանձին ծածկելոյ տենչմամբ վառեալ ի կենցաղումն.  
առ ի ի ստացումըն փուրացեալը երազաքայլ ուտիք հողուց.  
ընդ պարզեւին անփոփեցայ ըզպարզեւիչ փարթամու-  
թեանն.

անկապուտ հաստատութեան առմամբ եղեք երջանկա-  
ցեալք:

Դարձայք դարձումըն գովելի անստուեր իւր ճանապարհաւ  
առ որ կոչեն ըզմեղաւորս ի խրախութիւն առազաստին.  
եւ մաքրեցայք ի շարաշար դարձման տղմոյն ազդեցութեան:  
պայծառացեալ արեամբ ձերով ընծայեցեք հանդիսադրին:

Երկնաւոր թագաւորին զինուորեցայք արիաբար,  
առ ի վանումըն բանսարկուին և որ նովաւ պատերազմեր.

... և այլն (36 տուն)

<sup>96</sup>Տե՛ս Ամաստունի Ս. Հին և նոր պարականոն կամ անվավեր շա-  
րականներ, էջ 165-169:

4. Շարական սրբոց Ղետնդեանց  
Օրինութիւն.-Զափաւոր-ԴԿՊ

Անձառելի բանդ Աստուած, որ վասըն մեր եկը ի խաչ,  
Բարձրացար ի մէջ երկրի, բարձեր զյանցանս նախա-  
ստեղծքն,  
Գերահրաշ գօրութեամբ յաղթեցեր մահու, յարուցեալ երեք  
օրեայ  
լոյս ծագեցար տիեզերաց:

Դասակարգեալ հողեղինացս ընդ հրեղինաց անմիտ գոյից  
Երջանիկ արիութեամբ կատարեցան յանօրինաց, զի ըն-  
կալցին

ի Քէն Քրիստոս  
Զանապական փառաց պըսակն երեւեալը լուսազգեացը  
յատուր մէծի Քում գալըստեան:

Ըսդհանուր քարոզեցին զբանը կենաց ընդ տիեզերս,  
Թոքափեալ ըզքուն մահու զուարքնոց երկնից հետեւեցան,  
Ժուժկալեալը արիաբար զժանիս մահու խորտակեցին,  
Խմաստունս երեւելով ընդ փեսային մտին յառազատս:

Լուսաւորիչն ամենեցուն Ղետնդի է առլր վարդապետն  
Խոհական մէծ խորհրդով խրատեալ լըցոյց յաշակեր-  
տեալսն,  
Ծաւալեալ զլոյս զիտութեան յոգիս արանց կատարելոց,  
Կամաւոր յօժարութեամբ կատարեցան սիրով Փըրկչին:

Հուր սիրոյ կենարարին բորբոքեցաւ յոգիս սըրբոցն,  
Զայն տըւեալ խրախուսեցին դիմեալը ի մահ յօժարու-  
թեամբ,  
Ղեկաւարը հոգևորք զալիս մեղաց խորտակեցին,  
Ճանապարհ մեզ հորդեցին ի յերկնային նաւահանգիստն:

Մըկըրտեալք արեամբ իւրեանց արքին զբաժակ մահու

Փրկչին,

Յառաջեալ յամենեցունց Յօսէփ ընտրեալ աշակերտացն,  
Նորահրաշ սիրով լրցեալ և նահատակ բարի ցուցաւ,  
Շինեցաւ տաճար փառաց սրբութեան անմահ բանին:

Ուսուցին ամենեցուն երկըրպագել Քում տէրութեանդ,  
Չարչարեալք արիաբար ընդրէմ մահու չար իշխանին,  
Պատրաստեալք ի պատերազմ զպատրանս չարին խափա-  
նեցին,  
Զուր կենաց մեզ արբուցին, ըգիուր մեղացըն շիջուցին:

Ոսի լուսոյ մեզ ծանուցեալ զանգիտութեան խաւարն ելոյծ,  
Սահակ սուրբ հօտապետ սրովքեական բարեացն հաղորդ,  
Վերբերիչ վարուց բարեաց, վանիչ չարին պաշտօնէից,  
Տարփացեալ անձառ լուսոյն վերասլացաւ ի կեանս անմահ:

Տարունեացըն ճշշմարտից եկայք և մեք հետեւեսցուք,  
Ցնծութեամբ կատարեսցուք ըզիիշատակ հայրապետացն,  
Իիսեսցուք յարմարութեամբ ի միութիւն մարմնոյ Փրկչին,  
Փայլեսցուք գործովք բարեաց ի յերկնային առազատին:

Քրիստոսի թագաւորին սրովքեական ձայնի հընչմամբ,  
Երգեսցուք զերզ օրինութեան փըրկեալք արեամբն իւրով  
Առաջարկ առաջարկ առաջարկ առաջարկ առաջարկ առաջարկ սրբով,  
զի զրութեամբ խոնարհեալ ընկալցի զաղաշանս,  
Թողութիւն շնորհեսցէ մեք բազում յանցանաց:

**Հատվածներ Հովհաննես Սարկավագ Իմաստասերի  
«Բան իմաստութեան» պոեմից**

Արթուր եւ զուարքուն թըռչուն հըսկող եւ բարբառող,  
Կանչող եւ կարկաշող, ճրուողող ձայնող պաշտօնասէր  
Արդ եկ ինձ մերձ ի գովութիւն, զի արարչին փառք  
մեծասցին,

Մեծն ի փոքրուդ քարոզեցի եւ քաջարուեստն ծանիցի:  
(...)

Սակաւուց եղեւ ըզգբարեձայն երգատրութիւնսն.  
Գովեցան եւ զրգուեցան, յորոց լրաւն ըզբաղցրավանզսն:  
Ամմիոն այր Թերացի եւ Արիոն Միթեմսացի,  
Որփեւս Թրակացի, այս երաժիշտը են մեծազով.  
Այլ նուազեալ են առ նօրօք, որք բնականաւն են  
պաճուճեալը,

Զի գործի այսր արուեստի, նոքա չունին ի բնութենէ:  
(...)

Բնկ արուեստի դու երաժիշտ ամենահնար, անվարդա-  
պետ.  
Բնքնարաւ եւ ինքնուսումըն, վայրաքնակ եւ անքաղաք,  
Անմերձ եւ մոտաւոր, ուրախարար լրասփրաց,  
Քաղցրածայն դաշնակաւոր՝ որպէս կարծեմ ըստ արուես-  
տին:

Սաստկախոս եւ հարթավանկ, խանդաղատող եւ ողբեր-  
գակ,  
Հրամայող եւ ողոքող, ըզիրատականըս ներադրող,  
Սպառնացող եւ հեղախոս, զրգուղ, կոչող եւ հրաժարող  
Կականող եւ ձայնարկու, յոյժ խընդացող եւ զրւարձացեալ:

Նըւազօքն կերակրեալ որպէս ունող զայն զօրութիւն,  
Պարապեալ միայն երգոց ընդ գերակայսըն կենդանիս:

(...) Ով պարող դու անձանձիք եւ կաքաւիչ յոքնանուազ...  
(...)

Համարուեստ և անուանի, որպէս արդիւնքն վկայեն.  
Բայց միով ես պակասեալ, զի չսիրեցեր զընդ նովա կեալ  
Եւ շարարեր անդ քեզ զազարս, ուր եւ նոքա են տաղաւեալ:  
Աստ զաս նըստիս մերձ առ ինեւ, իբր արուեստի  
ինձ յանզակից,  
Բազմադեա երգարանաւ եղանակես եւ կաքաւես.  
Հոմերական տաղիցըն չափ քեւ ծանուցեալ լինի բազմաց  
Յուտանաւոր եւ ցուցական ըստ քերթողացըն տեսակի,  
Կամ քէ եւս աւելագոյն, որպէս թրի ինձ զիտողիս,  
Զի վարժումն եւ կրթութիւն ոչ ժամանէ առ բնութիւն:

Հովհաննես Գառնեցին՝ Հովհաննես Սարկավագի Սաղմուարանի հետ կապված բարենորոշչական գործունեության մասին.

«[Չ]սաղմոս Դաւթի, մանաւանդ զերզս հոգույն սրբոյ՝ այլ եւ այլ կամ աւելի եւ պակաս նուագեն մանկունք եկեղեցւոյ. ոչ ուսեալ[ք] զՃՄարիտն եւ ոչ իմացեալ[ք] զՃՄարիտն: Եւ այս եղեւ յանհոգութենէ ոմանց եւ ի սխալազգիր գրչացն: Իրահամարձակ[ք] ոմանք եւ ինքնավստահք, մոտայօր իմացմամբ՝ տարագրեցին զուղիղն եւ զուղորդ սաղմոսս: Եւ այլ[ք] ոմանք ծայրաքաղ առնելով բարբանջեն, անզեղ սրտիք եւ անիմաստ բանիք: (...) Որոնեալ զոի գրաց ի թարգմանչացն սարմոսարան, զոր առեալ սուր վարդապետին Յովհաննու, որ Սարկաւագ կոչիր, այն որ զսումարն երեւեցոյց զիին հային. եւ նա սերմանեաց զայս ուղիղ եւ զուղորդ սաղմոսս<sup>98</sup>:

Դավթի Սաղմոսարանը, մանավանդ սուրբ հոգու երգերը այլսայլ կամ ավելի ու պակաս երգում են եկեղեցու մանուկները,

<sup>98</sup> ՍՍ, ձեռ. 4913, էջ 107թ-108ա:

որոնք չեն սովորել ճշգրիտը և չզիտեն ճշմարիտը: Եվ սա պատահեց ումանց անհոգությունից և զրիշների սխալ գրությունից: Ումանք, որ հանդուզն և ինքնավստահ էին, վատ իմացությամբ օժտված՝ աղավաղեցին իսկական և ճիշտ սաղմոսները: Եվ ուրիշ ումանք ծայրաքաղ անելով՝ բարբաջում են, զղում շիմացող սրտով և անխմաստ խոսքերով: (...) Սուրբ Հովհաննես վարդապետը, որը Սարկավագ էր կոչվում, նա, ով տոմարը բացահայտեց հին հայի համար, որոնելով գտավ թարգմանիչների կողմից գրած սաղմոսարանը, որը վերցնելով սերմանեց այս ճիշտ և ուղղորդող սաղմոսները<sup>99</sup>:

---

<sup>99</sup> Հատվածի թարգմանությունը մերն է:

## ԱԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Օգտագործված ձեռագրեր

Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. N 423, Գանձարան, 1742թ.: N 474, Գանձարան, 1474թ.: N 666, Ժողովածու, 1708-1709թթ., Բջնի: N 1001, Մայր Մաշտոց, IX-X դդ.: N 3503, Գանձարան, 1394թ.: N 1193, Ժողովածու, Սպահան: N 2092, Շարակնոց, ԺԳդ.: N 2679, Ժողովածու, 981թ.: N 4913, Ժողովածու (Ժամագիրը, Սաղմոսարան, Տոնացոյց, մեկնութիւնք), 1707թ.: N 5611, Ժողովածու, ԺԳդ.: N 8188, Գանձարան, 1424թ. Սրբայ զիւլ: N 9838, Շարակնոց և Մանրուսմունք, 1193թ., Երուսաղեմ:

### Սկզբնաղբյուրներ

Անանիա Շիրակացի, Տիեզերագիտութիւն և տումար, աշխ. Ս. Աբրահամյանի, Երևան, 1940:

Արիստակես Լաստիվերտցի, Պատմություն, աշխ. Կ. Ցուցբաշյանի, Երևան, 1971:

Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, բնագիրն առաջարանով և ծանոթագրութիւններով ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Ալեքսանդրապոլ, 1910:

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, աշխ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1972:

Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862:

Հովհաննես Դրասիանակերտցի, Հայոց պատմութիւն, Երևան, 1996:

Հովհաննես Սեբաստացի, աշխ. Բ.Լ. Չուքասյանի, Երևան, 1974:

Մատթեոս Ուրիայեցի, Ժամանակագրութիւն, աշխ. Հ. Բարբիլյանի, Երևան, 1991:

Միհրար Այրիվանեցի, Պատմութիւն հայոց, Սոսկվա, 1887: Սամվել Անեցի, Հաւաքումունք ի գրոց պատմագրաց, աշխ. Ա. Տէր-Միհրելեանի, Վաղարշապատ, 1893:

Միմեօն կաթ. Երևանցոյ, Զամբո, Վաղարշապատ, 1879:

Ստեփանոսի Տարօնեցւյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Բ տպ., Ս. Պետերբուրգ, 1885:

Պատմութիւն Ղետնդեայ մեծի վարդապետի հայոց, Բ տպգր., Ս. Պետերբուրգ, 1887:

Պատմութիւն Շապիոյ Բազրատունոյ, ի լոյս ածեցին Գ. Տէր-Մկրտչեան և Մեսրոպ Եպիսկոպոս, Էջմիածին, 1921:

Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմայ վարդապետէ Արծրունոյ, Կ. Պոլիս, 1852:

Ողբ Եղեսիոյ, ասացեալ սրբոյն տեառն Ներսէսի Շնորհալոյ Հայոց կաթողիկոսի, Փարիզ, 1827:

Ուխտանես Եպիսկոպոս, Պատմութիւն, Փարիզ, 1871:

Տաղասացութիւնք Գրիգորի Մագիստրոսի Պահլավունոյ, Վենետիկ, 1858:

Զայնազրեալ Շարական, Վաղարշապատ, 1875:

### Օգտագործված գրականության ցանկ

Աբեղյան Ս. Հայ գրականության պատմություն, հ. Գ, Երևան, 1973:

Արքահամյան Ա. Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956:

Արքահամյան Ա. Հովհաննես Սարկավագի տիեզերագիտական և տումարագիտական երկերը, Երևան, 1948:

Արքահամյան Ա. Հայոց գիր և գրչություն, Երևան, 1973:

Ալիշան Ղ. Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873:

Ալիշան Ղ. Շիրակ, Վենետիկ, 1881:

Ալիշան Ղ. Այրարատ, Վենետիկ, 1890:

Ալիշան Ղ. Յուշիկը հայրենեաց հայոց, Վենետիկ, 1920:

Ամատունի Ս. Հին եւ նոր պարականոն կամ անվավեր շարականներ, Վաղարշապատ, 1911:

Անին միջնադարյան Հայաստանի քաղաքական եւ քաղաքակրթական կենտրոն, միջազգային գիտաժողով, Զեկուցումների ժողովածու, Երևան, 2012:

Արևշատյան Ա. «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան, Երևան, 1991:

Արևշատյան Ա. Անիկ Երաժշտական մշակույթը և նրա հետ կապված շարականագիրները, «Բազմավիճ», 1995, 1-4, էջ 203-218:

Արևշատյան Ա. Զրորիների և Ոտնլվայի ծեսերը «Մաշտոց» ծիսարանում, «Էջմիածին», 1996, թիվ Ժ-ԺԱ, էջ 40-49:

Արևշատյան Ա. Ո՞վ է «Զորս ըստ պատկերի Քում» շարականի հեղինակը, «Էջմիածին», 1997, Դ-Ե, էջ 106-115:

Արևշատեան Ա. Վկայաբանութիւն եւ Շարականերգութիւն. հայկական Ուրծայնի Դկ. դարձուածքի առեղծուածը, ՀՀՀ, ԻԳ, Պերութ, 2003, էջ 163-174:

Արևշատեան Ա. Գրիգոր Սագիստրոսը՝ շարականագիր եւ տաղասաց, ՀՀՀ, հ. ԻԷ, Պերութ, 2007, էջ 69-75:

Արևշատյան Ա. Գրիգոր Սագիստրոսի Երաժշտական ժառանգությունը, ՊԲՀ, N 3, 2012, էջ 78-93:

Արևշատյան Ա. Անիկ դերը հայ միջնադարյան մասնագիտացված երաժշտության պատմության մեջ: Միջազգային գիտաժողով. «Անին խոշոր քաղաքական և քաղաքակրթական կենտրոն», գեկուցումների ժողովածու, Երևան, 2012, էջ 366-377:

Արևշատյան Ա. Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ, Երևան, 2003:

Արևշատյան Ա. Զայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում, Երևան, 2013:

Արևշատյան Ա. Գրիգոր Գապասաքայյանի Երաժշտագիտական ժառանգությունը, Երևան, 2013:

Անասյան Հ. Հայկական մատենագիտություն, հ. Ա, Երևան, 1959:

Աւետիքեան Գ. Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814:

Բարթիկյան Հ. Բյուզանդիան և հայ պետականությունը IX-XI դարերում. Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ.Ա, Երևան, 2002:

Գրիգորյան Գ. Բազրատունյաց թագավորության սկզբնավորման թվագրության շուրջ, ԼՀԳ, N 2-3, 2012, էջ 114-125:

Զարբիանալեան Գ. Հայկական թարգմանութիւնը նախնեաց, Վենետիկ, 1889:

Զարբիանալեան Գ. Հայկական հին դպրութիւն, Վենետիկ, 1897:

Ըստիր էջեր հայ գրականության հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, խմբագրությամբ՝ Հ. Գրիգորյանի, Ն. Զարյանի, Ռ. Զարյանի, Մո. Զորյանի, Էդ. Թոփյանի, Ավ. Խահակյանի, ՀՍՍՌ Պետհրատ, Երևան, 1946:

Թահմիզյան Ն. Քննական տեսություն հայոց հին և միջնադարյան երաժշտության պատմության, ԼՀԳ, 1971, N 1, էջ 53-57:

Թահմիզյան Ն. Ներսես Շնորհալին՝ երգահան և երաժիշտ, Երևան, 1973:

Թահմիզյան Ն. Հովհաննես Սարկաւագ Իմաստասերը և հայ երաժշտությինը, «Բազմավեպ», 1-4, 1984:

Թահմիզյան Ն. Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դարերում, Երևան, 1985:

Թամրազյան Հ. Անանիա Նարեկացի, Երևան, 1980:

Խաչերեան Լ. Գրիգոր Պահլաւոնի Սագիստրոս (985-1058 թթ.). կեանքն ու գործունեությինը, Լու Անձելը, 1987:

Կոմիտաս, Ազգագրական ժողովածու, հ. Ա, Բ, Երևան, 1931, 1950:

Կոստանեանց Կ. Համամ Արեւելցի, Վաղարշապատ, 1896:

Կոստանեանց Կ. Հին հիշատակը, «Արարատ», 1897, օգոստոս, էջ 289-343:

Կոստանեանց Կ. Տէր Պետրոս Ա Գետադարձ, Վաղարշապատ, 1897:

Կոստանեանց Կ. Էջմիածնի թանգարանի հրաշագործ սրբապատկերը, Վաղարշապատ, 1902:

Հակոբյան Գր. Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ (V-XV դդ.), Երևան, 1980:

Հայ ժողովրդական երգեր եւ նվազներ. Անի, հ. Ա, պրակ I, II, աշխ. Խ. Մարտիրոսյան, Ա. Սահակյան, Երևան, 2010:

Հայրապետյան Ս., Հարությունյան Հ. Գրիգոր Մագիստրոսը և Անիի երաժշտական մշակույթը, Միջազգային գիտաժողով. «Անին խոշոր քաղաքական և քաղաքակրթական կենտրոն», գեկուցումների ժողովածու, Երևան, 2012, էջ 378-383:

Հարությունյան Վ. Անի քաղաքը, Երևան, 1964:

Հովհաննիսյան Հ. Թատրոնը միջնադարյան Հայաստանում, Երևան, 1978:

Հովսեփեան Գ. Հայոց թարի Ամենափրկիչը եւ նմանատիպ հուշարձաններ հայ արվեստի մէջ, Երուսաղէմ, 1937:

Մատեան գիտութեան եւ հաւատոյ Դաւթի քահանայի, Հայերէն թղթեա հնագոյն ձեռագիր, 981թ., նմանահանությունը տպագրության պատրաստեց և աշխատավիրեց Արտաշէս Մաթևոսյանը, Երևան, 1995, 1997:

Մաթևոսյան Վ. Անի: Եկեղեցական կյանքը և ձեռագրագիտական ժառանգությունը, Էջմիածին, Մայր Աթոռ, 1997:

Մաթևոսյան Վ. Ամենայն հայոց կարողիկոսությունը և քաղաքամայր Անին, «Էջմիածին», 1992, թիվ 9-11:

Մաթևոսյան Վ. Հավուց թառի վանքը, Երևան, 1997:

Սուրադյան Գ. Գրիգոր Մագիստրոսի մատենագրությունը. Գրիգորի Մագիստրոսի Թուղթը եւ չափաբերականը. «Մատենագիրք հայոց», հ. ԺԶ, ԺԱ դար, Երևան, 2012, էջ 85-138, 191-412:

Սուրադյան Գ. Հին հունական առասպելների արձագանքները հայ միջնադարյան մատենագրության մեջ, Երևան, 2014:

Տէր-Մինասեան Ե. Հաղբատի դպրոցը եւ Յովաննէս Սարկաւագ վարդապետ, «Արարատ», Էջմիածին, 1901, էջ 340-344:

Տնտեսեան Ե. Նկարագիր երգոց Հայաստանեայց և Եկեղեցւոյ եւ հաւելուած բովանդակութիւն երգոց ըստ ութն ձայնից, Բ տպզր., Խոթանպօլ, 1933:

Չամչեան Մ. Պատմութիւն հայոց, հ. Բ, Երևան, 1984:

«Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002:

Օրմանեան Մ. Ազգապատում, հ. 1, Կ. Պոլիս, 1912:

Աբեգյան Մ. История армянской литературы, Ереван, 1975.

Աճամյան Ա. Эстетические воззрения средневековой Армении, Ереван, 1955.

Ածոնց Հ. Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915.

Ավеринцев С.С. Поэтика византийской литературы, М., 1971.

Արևշատյան Ս., Տեր-Դավթյան Կ. Источники по истории высших школ средневековой Армении, Ереван, 1983.

Արևշատյան Ա. Проблема канонического в армянском духовном песнетворчестве, сб. "Калофония", Львов, 2004, сс. 56-60.

Արևշատյան Ա. Мартиология и гимнография: загадка "дарца-вацка" Четвертого побочного гласа армянского Октоиха, "Устная и

письменная трансмиссия церковно-певческой традиции. Восток-Русь-Запад”, сб. “Гимнология”, составитель и отв. редактор И.Е. Лозовая, вып. 5, М., 2008, сс. 124-132..

Армянские жития и мученичества (V-XII вв.), предисловие, перевод с древнеармянского и комментарии К.С. Тер-Давтян, Ереван, 1994:

Бычков В.В. Византийская эстетика, М., 1977.

Бычков В.В. 2000 лет христианской культуры *sub speciae aesthetica*, ч.1, Ранее христианство. Византия, Москва - С.Петербург, 1999.

Византийские легенды, предисловие, перевод и комментарии С.В. Поляковой, С.Петербург, 1995.

Герцман Е.В. Византийское музыказнание, Л., 1988.

Дурново Л.А. Армянская миниатюра, Ереван, 1967.

Каждан А.П. Армяне в составе господствующего класса в Византийской империи в IX-XII вв., Ереван, 1975.

Кушнарев Х.С. Вопросы истории и теории армянской монодической музыки, Л., 1958.

Грубер Р.И. История музыкальной культуры, т. ч. 1-ая, М.-Л., 1941.

Гуревич А.Я. Категории средневековой культуры, М., 1972.

Лисицыан С.С. Старинные пляски и театральные представления армянского народа, т. I, Ереван, 1958.

Марр Н.Я. Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, “Восточные заметки”, СПБ, 1895.

Марр Н.Я. Ани. Книжная история города и раскопки на месте древнего городища, Л.-М., 1934.

Мирумян К.А. Некоторые вопросы музыкальной эстетики Ованеса Саркавага, Вестник Ереванского университета, 1978, N1, сс. 174-178.

Музыкальная эстетика европейского Средневековья и Возрождения, составление и вступительная статья В.П. Шестакова, Л., 1966.

Музыкальная эстетика стран Востока, составление В.П. Шестакова, М., 1967.

Ованисян Л.А. История медицины в Армении с древнейших времен до наших дней (в 5-и частях), часть 1-я, Ереван, 1946.

- Тагмизян Н.К. Теория музыки в древней Армении, Ереван, 1977.
- Худабашян К.Э. Армянская музыка в аспекте сравнительного музыкоznания, Ереван, 2011.
- Чалоян В.К. Армянский Ренессанс, М., 1963.
- Юзбашян К.Н. Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв., М., 1988.
- Adontz N. Etudes arméno-byzantines, Lisbonne, 1965.
- Angelopoulos L. Les voix de Byzance, Paris, 2005.
- Arevshatyan A. La typologie du genre des šarakan dans le système de l'hymnographie Chrétienne Orientale, REArm, t. 28, 2001-2002, Paris, pp. 215-223.
- Arevchatian A. L'hagiographie et l'hymnographie: le Darc'vac'k de Quatrième mode plagal de l'Octoéchos arménien, REArm, 30, Paris, 2005-2007, pp. 411-418.
- Arevchatian A. Les cantiques consacrés à Marie Madeleine dans la pratique musicale des églises arménienne et catholique, REArm, 35, Paris,, 2013, pp. 99-108.
- Wellesz E. The History of Byzantine music and Hymnography, 2nd edition, London, 1962.

### Կիրառված հապալումների ցանկ

- Բանբեր Մատենադարանի - ԲՄ  
 Լրաբեր հասարակական գիտությունների - ԼՀԳ  
 Հայկագեան Հայագիտական Հանդիս - ՀՀՀ  
 Հայոց անձնանունների բառարան - ՀԱԲ  
 Պատմա-բանասիրական հանդես - ՊԲՀ  
 Նոր Բառզիրք Հայկագեան Լեզուի - ՆԲՀ  
 Զայնագրեալ Շարական հոգևոր Երգոց - Շարական  
 Revue des Etudes Arméniennes - REArm

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան .....	5
Գլուխ Ա. Անիկ երաժշտական մշակույթը և նրա հետ կապված շարականագիրները .....	12
Գլուխ Բ. Պետրոս Գետադարձի օրիներգական ժառան- գությունը. «Մանկունք» տիազի շարականները .....	50
Գլուխ Գ. Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և տա- դասաց .....	61
Գլուխ Դ. Գրիգոր Մագիստրոսի գեղագիտական հա- յացքները .....	90
Գլուխ Ե. Հովհաննես Սարկավագ Իմաստասերի երաժշտական ժառանգությունը .....	108
Գլուխ Զ. Հովհաննես Սարկավագի գեղագիտական հա- յացքները .....	120
Ամփոփում .....	128
Резюме .....	130
Summary .....	138
Հավելված .....	143
Մատենագրություն .....	196

## ԱՐԵՎԱՏՅԱՆ ԱՆՆԱ ՄԵՆԻ

### ԱՆԻԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հրատ. Խմբագիր՝ Ա. Սահակյան

Համակարգչային շարվածքը՝ հեղինակի

Համակարգչային էջադրումը՝ Վ. Պապյանի

Ամփոփման անգլերեն թարգմանությունը՝ Ա. Չարիչյանի

Նոտային օրինակների շարվածքը՝ Ա. Սարգսյանի

Կազմի ձևավորումը՝ Ն. Երկանյանի

Հրատ. պատվեր N 543

Ստորագրված է տպագրության՝ 24.10.2014թ.:

Չափսը՝ 60 x 84  $\frac{1}{16}$ ,

12,75 տպագրական մամուլ:

Տպաքանակը՝ 250 օրինակ:

Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» իրատարակչության տպարան,  
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:



## Աննա Սենի Արեւածյան

Երաժշտագետ, միջնադարագետ: Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր: 1975 թ. ավարտել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը:

1976-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում:

2000-ից նոյն ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող է:

Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ հոգեւոր երաժշտության պատմության, տեսության եւ գեղագիտության հարցեր, համեմատական երաժշտագիտություն, կոմիտասագիտություն, հայ ժամանակակից կոմպոզիտորական արվեստի հիմնախնդիրներ եւ այլն:

Ա. Արեւածյանը 5 մենագրության հեղինակ է՝ «Մաշտոց» ժողովածոն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան» (1991), «Հայ միջնադարյան «Ճայնից» մեկնություններ» (2003), «Զայնեղանակների ուսմունքը միջնադարյան չայաստանում», «Գրիգոր Գապասաքալյանի երաժշտագիտական ժառանգությունը» (2013), «Ամիի երաժշտական մշակույթը»: Կազմել է հայ միջնադարյան մասնագիտակած երգարվեստի «Հոգեւոր երգեր» անթոլոգիան (1998, 2011): Շուրջ 100 գիտական հոդվածների եւ ուսումնասիրությունների հեղինակ է, որոնք լույս են տեսել չայաստանում եւ արտերկրում: 1971-ից հանդես է գալիս նաեւ հանրապետական մամուկում հրապարակախոսական եւ վերլուծական հոդվածներով:

«Մանրուանմ միջազգային երաժշտագիտական տարեգրքի համահիմնադիրն է, պատասխանատու խմբագիրը եւ կազմողը: 1990-ից լսասականություն է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայում, չայ երաժշտական ֆոկուրությունների պրոֆեսոր է:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի և Կոմիտասի անվան կոնսերվատորիայի գիտական խորուրդների անդամ է:

Բյուզանդագիտական ուսումնասիրությունների չայաստանի ազգային կոմիտեի գիտական քարտուղարն է:

Վիեննայի Մոնողիայի ուսումնասիրման ընկերության անդամ է:

Պարգևատրվել է ԳԱԱ վաստակագրով (2008) եւ ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով (2011):

Ա. Արևածյանը ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ է (2013):